

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԳՐԱՑԻԱՆ

(Էթնոսոցիոլոգիական հետազոտություն)



Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության
պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝
№13-6F393 գիտական թեմայի շրջանակներում:

Исследование выполнено при финансовой поддержке
Государственного комитета по науке МОН РА в рамках
научного проекта №13-6F393

This work was supported by the RA MES State Committee of
Science, in frame of the research project №13-6F393



NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETNOGRAPHY

MIHRAN GALSTYAN

THE MIGRATION OF NATIONAL MINORITIES OF THE REPUBLIC OF
ARMENIA

(Ethno-sociological research)

YEREVAN

„GITUTYUN,, PUBLISHING HOUSE OF THE NAS RA

2015

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

МИГРАН ГАЛСТЯН

МИГРАЦИЯ НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

(Этносоциологическое исследование)

ЕРЕВАН

ИЗДАТЕЛЬСТВО „ГИТУТЮН,, НАН РА

2015

1101061

323.1

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ

16x0014
A70079P

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԳՐԱՅԻԱՆ
(Էթնոսոցիոլոգիական հետազոտություն)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015



ՀՏԴ 316:323.1

ԳՄԴ 60.54+66.3

Գ 206

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ. Լ. Մ. Վարդանյան
Գրախոսներ՝ պ.գ.դ. Ս. Ս. Մկրտչյան, պ.գ.թ. Հ. Գ. Սարգս-
յան

Գ 206 Գալստյան Մ. Վ.

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություն-
ների միգրացիան (Էթնոսոցիոլոգիական հետազոտություն),
Եր.: «Գիտություն» հրատ., 2015, 208 էջ:

Մենագրությունում քննարկվում են արտերկիր մշտական բնակու-
յան և աշխատանքային միգրացիայի մեկնած ՀՀ ազգային փոքրամաս-
նությունների էթնոժողովրդագրական բնութագիրը, սոցիալ-մասնագի-
տական կազմը, արտերկրում զբաղվածության ոլորտները, Հայաստա-
նի հետ նրանց կապերը և հետագա վերադարձի հնարավորություննե-
րը, ինչպես նաև սոցիալ-մշակութային փոխակերպումները և բազմամ-
շակութայնության ձևավորման առանձնահատկությունները: Գիրքը
նախատեսված է էթնոսոցիոլոգների, սոցիոլոգների, ազգագրագետնե-
րի, մշակութաբանների, պատմաբանների, հումանիտար գիտություն-
ների այլ բնագավառների մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 316:323.1

ԳՄԴ 60.54+66.3

ISBN 978-5-8080-1155-7

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015

Մենագրությունը նվիրված է Հայաստանի առջև ծառացած կարևոր հիմնախնդիրներից մեկի՝ բնակչության արտաքին միգրացիայի ուսումնասիրությանը: Արտագաղթը, որը հետխորհրդային Հայաստանում արդեն ընդունել էր զանգվածային բնույթ, հանրապետության տնտեսական, ժողովրդագրական և սոցիալ-մշակութային ոլորտներում թողնում է լուրջ ազդեցություն: Այդ գործընթացներից անմասն չմնացին նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները, որի հետևանքով նրանց թիվը վերջին քսան տարում կտրուկ նվազեց: Այդ առումով խիստ կարևոր և արդիական է նրանց շրջանում միգրացիայի պատճառների, դրսևորման ձևերի, հետևանքների բացահայտումը, որի համակողմանի վերլուծությունը հետագա միջէթնիկ հարաբերությունների կարգավորման առումով ունի տեսական և գործնական նշանակություն:

Հետազոտությունում, որպես նախնական կանխավարկած, առաջ էր քաշվել այն ենթադրությունը, որ, բացի հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ընդհանուր պատճառներից, ազգային փոքրամասնությունների արտաքին միգրացիայի համար կարևոր գործոն կարող են դառնալ Հայաստանում նրանց լեզվի և ազգային մշակույթի պահպանման հարցերը:

Աշխատությունում վերլուծվել և բացահայտվել են, թե Հայաստանում ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող մշակութային քաղաքականությունը, միջէթնիկ հարաբերությունները, ազգային պատկանելությունը և մարդու

իրավունքների, լեզուների գործածության, մայրենիով կրթության հնարավորությունները և մշակութային ինքնության պահպանման, պատմական հայրենիքի գոյության հետ առնչվող խնդիրներն ինչ ազդեցություն են թողել նրանց միգրացիոն վարքագծի ձևավորման վրա: Այդ խնդիրները բացահայտելու համար Հայաստանի 8 մարզերի 13 քաղաքային և 22 գյուղական բնակավայրերի վեց ազգային փոքրամասնությունների՝ եզդիների, ռուսների, ասորիների, հույների, ուկրաինացիների և քրդերի (ազգային փոքրամասնությունների ցանկի համար հիմք են ընդունվել ՀՀ 2001թ. և 2011թ. մարդահամարի տվյալները) 382 ընտանիքներում 2013թ. նոյեմբերից մինչև 2014թ. ապրիլ իրականացվեցին էթնոսոցիոլոգիական հարցումներ: Նկատի ունենալով ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների հոծ և ցրվ բնակվելու հանգամանքը՝ վերադարձած միգրանտների կամ նրանց ընտանիքների բացահայտման նպատակով կիրառվեց նաև «Ֆիլտրի» և «ձնակույտի» մեթոդը, որը պայմանավորեց նաև մարզերի և բնակավայրերի ընտրանքի ձևավորման առանձնահատկությունները: Դրանք ապահովում են ներկայացուցչական նյութ նշված ազգային փոքրամասնությունների համար: Ստացված քանակական էթնոսոցիոլոգիական հարցման արդյունքները բովանդակային առումով առավել ամբողջական մեկնաբանելու և ներկայացնելու նպատակով ազգային փոքրամասնություններից ընտրված 20 անհատների հետ իրականացվեցին նաև խորացված, իսկ նրանց 13 հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ՝ փորձագիտական հարցումներ: Հարցումներից բացի, հետազոտության ընթացքում ազգային փոքրամասնությունների շրջանում իրականացվեցին դիտարկումներ և դաշտային գրառումներ, ուսումնասիրվեցին և վերլուծվեցին վիճակագրական

տվյալներ և նրանց հետ առնչվող պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթեր: Այդ տեղեկատվությունների հիման վրա աշխատությունում առանձին-առանձին վերլուծվել են արտերկիր մշտական բնակության և աշխատանքի մեկնած միգրանտների խմբերի սեռատարիքային, կրթական բնութագիրը, ամուսնական կարգավիճակը, սոցիալ-մասնագիտական կազմը, զբաղվածության ոլորտները, Հայաստանի հետ կապերը և հետագա վերադարձի հնարավորությունները, ինչպես նաև սոցիալ-մշակութային փոխակերպումները և բազմամշակութայնության ձևավորման առանձնահատկությունները:

Ազգային փոքրամասնությունների արտաքին միգրացիայի ուսումնասիրության տեսական հիմնադրույթների ձևակերպման համար հիմք ընդունվեցին միգրացիայի ադմինիստրատիվ կառավարման, պոզիտիվիստական, սոցիոլոգիական և էթնոսոցիոլոգիական մեթոդաբանական մոտեցումները:

Մասնավորապես, միգրացիայի կառավարման ադմինիստրատիվ մոտեցման դեպքում քննարկել ենք ազգային փոքրամասնությունների ազգային պետությունների կողմից վարվող ադմինիստրատիվ վերաբնակեցման քաղաքականությունը և դրա ազդեցությունը Հայաստանից նրանց արտաքին միգրացիոն հոսքերի ձևավորման գործում:

Պոզիտիվիստական մոտեցման շրջանակներում յուրաքանչյուր անհատի կամ ընտանիքի միգրացիոն վարքագծի ձևավորումը վերլուծվեց որպես նրանց անձնական որոշման արդյունք՝ պայմանավորված կենսամակարդակի բարելավման և եկամուտների բարձրացման շահագրգռվածությամբ: Մյուս կողմից՝ այն երկրները, որտեղ միգրանտները մեկնել են, ի հայտ բերվեց դրանց ունեցած ձգողականության և գրավիչ դարձնելու գործոնները: Սոցիոլոգիական մոտեցման համար

ելակետային ենք համարել այն դրույթի քննարկումը, ըստ որի մարդկանց միգրացիոն վարքագծի վրա ազդում են ոչ միայն նրանց անհատական նախասիրությունները, այլև այն սոցիալական խմբերը (այդ թվում՝ էթնիկ), որին նրանք պատկանում են, ինչպես նաև ռեֆերենտ խմբերի վարքի նորմերի թողած ազդեցությունը:

Էթնոսոցիոլոգիական մոտեցումը հնարավորություն տվեց ազգային փոքրամասնությունների միգրացիան մեկնաբանելու նրանց մշակութային առանձնահատկությունների տեսանկյունից, որոնք ձևավորվել են սերունդների ընթացքում և արտացոլվում են նրանց միգրացիոն վարքագծում, ինչպես նաև միգրացիայի թողած ազդեցությունը նրանց էթնիկ կառուցվածքի, միջէթնիկ հարաբերությունների վրա:

Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու մի շարք առաջարկություններ Հայաստանի ազգային փոքրամասնությունների արտաքին միգրացիայի հետագա կարգավորման և նոր քաղաքականության մշակման համար:

Հարկ ենք համարում նշել, որ այս ծրագրի շրջանակներում ազգային փոքրամասնությունների շրջանում կատարված հետազոտությունների արդյունքներն առաջին անգամ են դրվում գիտական լայն շրջանառության մեջ:

Հեղինակը իր երախտագիտությունն է արտահայտում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի աշխատակիցներին մենագրության քննարկման և օգտակար խորհուրդների, հետազոտական ծրագրում ընդգրկված բաժնի գիտաշխատող Ա. Մարկոսյանին հարցազրույցների իրականացման, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների

նախագահներին և գյուղապետարանների ղեկավարներին՝ արժեքավոր նյութեր և տվյալներ տրամադրելու համար: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում եզդի, ռուս, ասորի և հույն, ուկրաինացի, քուրդ ազգաբնակչությանը՝ էթնոսոցիոլոգիական հարցումներին ակտիվ մասնակցելու և արժեքավոր տեղեկություններ տրամադրելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԳՐԱՅԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների միգրացիայի տեսական մեթոդաբանական հիմնախնդիրները քննարկելիս կարևոր ենք համարում անդրադառնալ «ազգային փոքրամասնություն» հասկացության վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումներին, միգրացիայի տեսություններին և միգրանտների հոծ և ցրիվ բնակվելու հանգամանքին, որոնք պայմանավորում են նաև հետազոտության ընտրանքի և մեթոդի ընտրության առանձնահատկությունները: Մասնավորապես, ազգային փոքրամասնությունների միգրացիայի ուսումնասիրության խնդիրն առնչվում է նաև նրանց ազգային պետականության գոյության կամ բացակայության հանգամանքին, որը, մեր կարծիքով, իր ազդեցությունը կարող է թողնել Հայաստանից նրանց արտաքին միգրացիոն գործընթացների վրա:

1.1. «Ազգային փոքրամասնություն»
հասկացության բնորոշումը

Սոցիոլոգիական գրականության մեջ իշխում է այն տեսակետը, որ դեռևս բացակայում է «էթնիկ խումբ» հասկացության միանշանակ բնորոշումը, սակայն գիտական շրջանակներում

այն բնութագրելիս անդրադառնում են հետևյալ հատկանիշներին՝ հավաքական անունը, ծագման մասին ընդհանուր ատասպելը, մշակութային առանձնահատկությունները՝ լեզվի, կրոնի, ավանդույթների և սովորույթների առկայությունը, որոնք տարբերակում են տվյալ խմբին մյուս խմբերից: Էթնիկ խումբը դառնում է փոքրամասնություն, երբ քանակապես և քաղաքականապես ոչ գերակշիռ դիրք է զբաղեցնում մի պետության սահմաններում, որի քաղաքացին է համարվում: Այնուհանդերձ, խմբին անդամակցելու հարցը պայմանավորված է անհատական ընտրությամբ, այլ ոչ թե որոշում է պետությունը: Մակայն դա չի նշանակում, որ յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն և յուրաքանչյուր ոք, որն իրեն համարում է փոքրամասնության անդամ, պաշտոնապես ճանաչվում է այդպիսին:¹

Ազգային փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող որոշ հեղինակներ այն բնութագրում են որպես տվյալ երկրի էթնիկ հանրությին թվապես չգերազանցող մարդկանց խումբ, որը կրում է բնակչության մյուս հատվածից տարբերվող էթնիկ, լեզվական և կրոնական առանձնահատկություններ: Դրանով հանդերձ՝ այդ հանրության անդամները պետք է դրսևորեն ենթադրաբար համերաշխության զգացում՝ նպատակաուղղված ընդհանուր մշակույթի, ավանդույթների, կրոնի և լեզվի պահպանմանը:²

Հեղինակների մի մասն էլ նշում է, որ ազգային փոքրամասնությունը տվյալ պետության տարածքում պատմականորեն ստեղծված մի խումբ է, որը քանակապես զիջում է պետության

¹ Ethnic Minorities in Europe: The Basic Facts Stefan Wolff Centre for International Crisis Management and Conflict Resolution University of Nottingham, England. UK stefan@stefanwolff.com. <http://www.stefanwolff.com/files/min-eu.pdf>

² Асатрян Г., Аракелова В. Национальные меньшинства Армении. Е., 2002. с. 4.

բնակչության մնացած հատվածին՝ զբաղեցնելով ոչ գերակշիռ դիրք, բայց նաև հանդիսանալով տվյալ պետության քաղաքացիներ, այդ խմբի անդամները կրում են էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային բնութագրիչներ, որոնք տարբերվում են պետության բնակչության մնացած հատվածի համապատասխան բնութագրիչներից:³ Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ ազգային փոքրամասնությունները կրոնական և ներգաղթած փոքրամասնության խմբերը չեն, որոնք շատ տարածված են բազմամշակութային պետություններում:⁴ Եվրոպայում արմատական կարգավիճակ ստացած փոքրամասնությունները, ըստ էության, սահմանի մյուս կողմում հայտնված խմբերն են: Նրանց միավորում է այն փաստը, որ դարձել են ազգային փոքրամասնություններ՝ մնալով այն վայրում, որտեղ ոչ միայն իրենք են ծնվել, այլև իրենց նախնիները:⁵

Յու. Սկրտումյանը, անդրադառնալով «ազգային փոքրամասնություն» և «էթնիկ խումբ» հասկացություններին, նշում է, որ ո՛չ ժամանակակից գիտության մեջ, ո՛չ միջազգային իրավական և միջազգային քաղաքական փաստաթղթերում դրանք միանշանակ չեն սահմանվում և բնորոշվում:⁶ Ըստ նրա՝ «էթնիկ խումբ» հասկացությամբ նկատի է առնվում էթնոսի (ազգի,

³ Jackson Preece, National minorities and the European Nation-States System (Oxford: Clarendon Press. 1988), 28.

⁴ Ըստ կանադացի հեղինակ Վիլ Կյմիլիկայի՝ ազգային փոքրամասնությունները խմբեր են, որոնք ձևավորված գործող հասարակություններ են իրենց պատմական հայրենիքում նախքան ավելի մեծ պետության շրջանակներում ներառվելը: Sté u Kymillicka, Politics in the Vernacular: Nationalism, Multiculturalism and Citizenship (Oxford: Oxford University Press, 2001), 54:

⁵ Kymillicka, Politics in the Vernacular: Nationalism, Multiculturalism and Citizenship (Oxford: Oxford University Press, 2001), 22, 23:

⁶ ՀՀ ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման փուլում II, Ե., 2005, էջ 13:

ժողովրդի) այնպիսի հատված, որը բնակվում է այլ երկրում, իր
 պատմական հայրենիքից դուրս և սերտորեն կապված է տվյալ
 երկրի էթնիկ հանրության, նրա սոցիալ-տնտեսական, լեզ-
 վամշակութային և պետաիրավական համակարգին: Բայց եթե
 նման խումբը ինքնակազմակերպվում և ստեղծում է ինստի-
 տուցիոնալ կառույցներ, որոնք միտված են միավորելու տվյալ
 խմբի հավաքական ջանքերը՝ պահպանելու և զարգացնելու
 համար սեփական լեզվամշակութային արժեքները, ապա այն
 հանդես է գալիս որպես ազգային փոքրամասնություն: Ընդ
 որում, խմբի քանակական մեծությունից առավել էական գոր-
 ծոն է նրա անդամների քաղաքացիական կարգավիճակը, այ-
 սինքն՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք
 պետք է լինեն տվյալ պետության քաղաքացիներ և մշտական
 բնակիչներ:⁷ Յու. Մկրտումյանի կարծիքով ազգային փոքրա-
 մասնություններն իրենց ազգային-մշակութային արժեքների
 պահպանման ու զարգացման տեսանկյունից անհամեմատ
 ավելի բարենպաստ պայմաններում են, քան էթնիկ խմբերը,
 քանզի վերջիններս, հաճախ ունենալով ցրիվ (դիսպերս) բնա-
 կություն, փաստորեն զրկված են իրենց էթնոմշակութային ինք-
 նությունը պահպանելու համար հավաքական ջանքեր գործադ-
 րելու հնարավորությունից:⁸ Ելնելով այդ սկզբունքներից՝ «ՀՀ
 ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարա-
 կության կայացման փուլում II» գրքի հեղինակային խումբը ՀՀ
 տարածքում առանձնացնում է 11 ազգային փոքրամասնու-
 յուն և մի քանի տասնյակ փոքրաթիվ էթնիկ խմբեր:⁹

⁷ Նույն տեղում, էջ 14:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

Գրականության մեջ երբեմն օգտագործվում են նաև «Բնիկ ազգ» և «փոքրամասնություն» հասկացությունները: «Բնիկ ազգը» երբեմն օգտագործվում է որպես լրացուցիչ առավելություններ ունենալու իրավունք տվյալ տարածքում, որը այլ ազգերի նկատմամբ հանգեցնում է քաղաքացիական իրավունքների խախտման:¹⁰

Էթնիկ փոքրամասնությունների թվին դասվում են նաև հետևյալ խմբերը.

- 1) խմբեր, որոնք քանակով ավելի քիչ են, քան պետության էթնիկ մեծամասնությունն է.
- 2) խմբեր, որոնք ոչ դոմինանտ վիճակում են.
- 3) խմբեր, որոնք ունեն էթնոմշակութային առանձնահատկություններ և ցանկանում են այն պահպանել:¹¹

«Էթնիկ փոքրամասնություն» հասկացությունը իր էությամբ ոչ միայն ժողովրդագրական, այլև սոցիալ-հոգեբանական կատեգորիա է: Ըստ էության, որպեսզի խումբը իրեն ինքնանույնացնի որպես փոքրամասնություն, նա պետք է զգա իր ոչ իշխող դիրքը հասարակության մեջ: Այն նաև իրավական կատեգորիա է, քանի որ միջազգային իրավական և միջազգային քաղաքական փաստաթղթերում ազգային փոքրամասնությունների իրավունքները դիտարկվում են անհատական և խմբային հարթություններում: Պատմականորեն սկզբից շեշտը դրվում էր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց

¹⁰ Միջազգային պրակտիկայում «բնիկ ազգ» հասկացությունը նույնացվում է աբորիգեն ազգերի՝ «ցեղային կյանք վարողների հետ»: Ելնելով այդ հանգամանքից՝ միջազգային քաղաքական փաստաթղթերում «բնիկ» եզրույթի փոխարեն օգտագործում են «տիտղոսակիր (ոչ տիտղոսակիր) ազգեր» հասկացությունը: Տե՛ս Арутюнян Ю.В., Дробужева Л.М., Сусоколов А.А. Этносоциология. М., 1999, с. 38.

¹¹ Նույն տեղում, էջ 38-39:

իրավունքների, այսինքն՝ անհատական իրավունքների վրա: Վերջին շրջանում ազգային փոքրամասնությունների իրավունքների համակարգը հատկորեն համալրվեց նաև խմբային, հավաքական իրավունքի սկզբունքով, այսինքն՝ ազգային փոքրամասնությունն ամբողջությամբ դիտարկվեց որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:¹²

Խորհրդային Միության փլուզումից հետո և հետխորհրդային պետությունների ձևավորումից առաջ շրջանառվեց «նոր փոքրամասնություն» հասկացությունը, որը հաճախ օգտագործվում է այլ երկրներում գտնվող ռուսների համար, որտեղ նրանք իրենց քանակով և սոցիալ-մասնագիտական կարգավիճակով չեն զիջում տիտղոսակիր էթնոսներին:¹³

Պատմական հայրենիքից դուրս բնակվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ գիտնականները կիրառում են նաև «սփյուռք» հասկացությունը: Հայաստանում ազգային փոքրամասնությունների որոշ մասը հայտնվել է բռնի տեղահանության, աքսորի, կամավոր միգրացիայի պատճառով: Օրինակ՝ եզդիների մի ստվար զանգված պատմական տարբեր ժամանակահատվածներում Թուրքիայի կողմից ազգային, կրոնական, տնտեսական հալածանքների պատճառով ստիպված բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում: Կամ ասորիները և հույները, որոնց մի մասը 1915 թվականին Թուրքիայի կողմից հայերի հետ ենթարկվեցին ցեղասպանության և

¹² ՀՀ ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման փուլում II, էջ 15:

¹³ Համեմատության համար նշեք նաև, որ Հայաստանից միգրացիան հիմք է հանդիսանում հայկական նոր սփյուռքի ձևավորմանը: Տե՛ս Կարապետյան Ռ., Միգրացիան և հայկական նոր սփյուռքը (Էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Ե., 2013, էջ 74-102:

ելնելով նրանց ազգային, կրոնական պատկանելությունից՝ բռնի տեղահանվեցին և ապաստան գտան Հայաստանում: Ինչ վերաբերում է ռուսներին, ապա նրանք Հայաստանում ներկայացված են երկու խմբով. հնաբնականներ՝ ռուս աղանդավորներ, որոնք Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միավորվելուց հետո ցարական կառավարության իրականացրած ծրագրով տեղափոխվեցին և Հայաստանում հիմնեցին իրենց բնակավայրերը:¹⁴ Ռուս աղանդավորիների գերակշռող մեծամասնությունը Ռուսաստանի կենտրոնական և հարավային նահանգներում բնակվող մոլոկանները և սուբոտնիկներն են, որոնք կրոնական հետապնդումների և սոցիալ-տնտեսական ճնշումների պատճառով ստիպված էին թողնել իրենց հայրենի բնակավայրերը:¹⁵ Մյուս խումբը վերջին մի քանի տասնամյակում ներգաղթածներն են, որոնք առաջիններից տարբերվում են ոչ միայն սոցիալական և մշակութային առումներով, այլև Հայաստանի հետ ունեցած «կապվածության» տարբեր աստիճաններով:¹⁶ Նույնը կարող ենք նշել նաև հայաստանաբնակ ուկրաինացիների մասին: Ուսումնասիրությունում ընդգրկված 6 ազգային փոքրամասնություններից երեքը՝ հույները, ռուսները, ուկրաինացիները, Հայաստանի Հանրապետությունից դուրս ունեն իրենց ազգային պետական կազմավորումները, իսկ մյուս երեքը՝ եզդիները, ասորիները և քրդերը՝ չունեն: Այդ հան-

¹⁴ Տե՛ս Հայթյան Ա.Խ., Հայաստանի ռուս վերաբնակները (1830-1920թթ.) Ե., 1989 42-49:

¹⁵ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Долженко И. К истории образования русских поселений Закавказья (1830-1840-е гг.), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անցյալ, ներկան և ապագան.միջազգային գիտաժողով, Ե., 2007, էջ 313-320:

¹⁶ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները այսօր I, Ե., 2000, էջ 37-38:

գամանքը որոշակի առանձնահատկություն է հաղորդում նրանց «սփյուռքայնացման» գործընթացներին: Առաջին երեքը համեմատաբար բարենպաստ պայմաններում են՝ իրենց ազգային պետություններից ստանում են բազմակողմանի աջակցություն: Այդ գործոնը իր ազդեցությունն է թողնում նաև Հայաստանից նրանց միգրացիայի պատճառների, բնույթի և ուղղությունների վրա: Այնուհանդերձ, վերջին երեքը նույնպես սփռվել են նախահայրենիքից, ունեն հավաքական հիշողություն իրենց պատմական հայրենիքի, դրա գտնվելու աշխարհագրական վայրի, պատմության մասին: Նախնիների հայրենիքը նրանց մեջ իդեալականացված է, և համոզված են, որ որոշ ժամանակ անց իրենք և իրենց զավակները պետք է վերադառնան և ձևավորեն ազգային պետականություն՝ իրենց հավաքական ուժերն ուղղելով դրա վերականգնմանը:¹⁷ Ազգային փոքրամասնությունների դերը՝ որպես սփյուռքի ձևավորման կարևոր աղբյուր, պայմանավորված է մշակութային, սոցիալական և քաղաքական ընտրախափի գիտակցված և կազմակերպված ջանքերի ներդրումով, որոնք շարունակական բնույթ են կրում և փոխանցվում սերնդեսերունդ: Մինչդեռ սփյուռքի գոյատևմանն ուղղված ջանքերի բացակայությունը տանում է դեպի դրա ուժացման:¹⁸ Այդ առումով Հայաստանում որոշակի դեր են կատարում ազգային փոքրամասնությունների հասարակական կառույցները: Հայաստանում գործող ազգային փոքրամասնություններից ռուսականը և ուկրաինականը միատարր

¹⁷ **Safran W.** 1991. *Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return.* Diaspora 1(1): 83-84.

¹⁸ **Tölöyan K.** 2000. *Restoring the Logic of the Sedentary to Diaspora Studies*, in Berthomière, W. and Sheffer, G., *Anteby, L., 2000 ans de diasporas*, Presses Universitaires de Rennes, 137-148. **Gold, S. J.** 2004. *From Nationality to Peoplehood: Adaptation and Identity Formation in the Israeli Diaspora.* Diaspora 13(2/3):331-58.

չենք կարող համարել՝ հաշվի առնելով միգրացիոն տարբեր հոսքերի ազդեցությունը այդ համայնքների վրա:¹⁹ Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համայնքները իրենց ձևավորման պատճառների, գաղափարախոսական ուղղվածության, ինքնության պահպանման առումով ունեն սփյուռքին բնորոշ մի շարք գծեր, սակայն դրանք տարբերվում են դասական սփյուռքին բնորոշ հատկանիշներից: Այսպիսով, ինչպես անհատական, այնպես էլ խմբային գիտակցության մակարդակով ոչ քիչ կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե ինչ հասկացություն է օգտագործվում նրանց անվանման համար, քանի որ դրանք ունեն որոշակի սոցիալական և քաղաքական իմաստ: Աշխատանքում մենք առավել հակված ենք օգտագործելու Յու. Մկրտումյանի բնութագրմամբ՝ ազգային փոքրամասնություն հասկացությունը: Բացի դրանից, Հայաստանում գործող քաղաքական, սոցիալական, իրավական փաստաթղթերում այդ հասկացությունն ունի լայն կիրառություն:

Անդրադառնանք նաև միգրացիա եզրույթին և դրա վերաբերյալ գոյություն ունեցող տեսական մոտեցումներին: Միգրացիա եզրույթը աշխատության մեջ լայն իմաստով օգտագործվում է որպես տեղաշարժ կամ տեղափոխություն, իսկ միգրանտը միգրացիոն գործընթացին մասնակցող աճն է, որը փոխել է կամ չի փոխել իր մշտական բնակության վայրը: Բայց քանի որ աշխատությունը վերաբերում է ազգային փոքրամասնությունների արտաքին միգրացիային, ապա այստեղ նկատի ունենք նրանց տեղաշարժը երկրի պետական սահմաններից

¹⁹ Սփյուռքի վրա միգրացիոն տարբեր հոսքերի ազդեցության մասին տե՛ս Keck M. and Sikkink K. 1999 Transnational Advocacy Networks in International and Regional Politics. Blackwell Publishers, UNESCO, 89-101.

դուրս՝ պայմանավորված բնակության վայրի փոփոխությամբ: Էմիգրանտ հասկացությունը, ըստ աշխատության, վերաբերում է արտերկրում գտնվող այն անձանց, որոնք երկարաժամկետ՝ մեկ տարի և ավել գտնվել են արտերկրում, իսկ ռեմիգրանտն այն անձն է, որը հետազոտվող ժամանակահատվածում կարճաժամկետ (4-12 ամիս) գտնվելով այլ երկրում՝ որպես միջազգային միգրանտ վերադարձել է Հայաստան: Աշխատանքային միգրանտն այն անձն է, որը հետազոտվող ժամանակաընթացքում կարճաժամկետ բացակայում է իր մշտական բնակության վայրից/երկրից՝ այլ բնակավայրում/երկրում տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:²⁰

1.2. Միգրացիայի ուսումնասիրության վերաբերյալ տեսական մոտեցումները

Միգրացիան երբեմն արժևորվում է որպես զուտ տնտեսական, ժողովրդագրական և սոցիալական երևույթ՝ մի կողմ թողնելով դրա ունեցած էթնոմշակութային տեսանկյունները:²¹

Մինչդեռ միգրացիան ավելի բարդ երևույթ է, որը ներառում է սոցիալ-հոգեբանական և մշակութային մի շարք խնդիրներ, որոնք ևս կարիք ունեն առանձին ուսումնասիրության: Միգրանտները, երկար տարիներ ապրելով և աշխատելով այլեթնիկ

²⁰ ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, Ե., 2008, էջ 13:

²¹ Օրինակ՝ Ե. Ռավենշտեյնը միգրացիոն գործընթացների համար առանձնացրել է 11 սկզբունք, իսկ դրա ուսումնասիրության հիմնական գիտական մոտեցումները դասակարգել է երեք խմբի՝ միգրացիան բացատրելով շուկայական հարաբերությունների, սոցիոլոգիական, ժողովրդագրական և այլ տեսանկյուններից: Stetsky E. **Законы миграции Равенштейна Е.**

[http://rudocs.exdat.com/docs/index-326540.-html?page=107.\(07.07.2013\)](http://rudocs.exdat.com/docs/index-326540.-html?page=107.(07.07.2013)):

միջավայրում, ինտենսիվ շփվելով տեղի բնակչության հետ, կրում են մշակութային որոշակի ազդեցություն: Այդ առումով կարևոր խնդիր է բացահայտել, թե միգրացիան ինչ ազդեցություն է թողնում նրանց մշակույթի, լեզվի, ինքնագիտակցության վրա, և այդ ոլորտում ինչ համամասնության մեջ են բուն էթնիկ ու փոխառված մշակութային տարրերը:²² Մյուս կողմից՝ միգրանտները արտահանում են իրենց մշակութային արժեքները: Այսինքն՝ միգրանտը միայն լոկ տեղաշարժվող չէ: Միգրացիայի հետևանքով նա իր հետ ոչ միայն արտահանում, այլև ներմուծում է որոշակի մշակութային տարրեր: Կարևորվում է նաև այլէթնիկ միջավայրին միգրանտների ինտեգրման խնդիրը. մասնավորապես, նրանց մեջ ի՞նչ էթնոդիֆերենցացնող (մենք-նրանք) և էթնոինտեգրացնող գործընթացներ են տեղի ունենում:²³ Միգրացիայի հետևանքով մշակույթի տարածման և այլէթնիկ միջավայրում նրանց ինտեգրման խնդիրների վերաբերյալ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Այդ խնդրին անդրադարձել է դեռևս XIX դ. վերջին ձևավորված դիֆուզիոնիզմի տեսությունը: Մշակութային տեսանկյունից դա նշանակում է մշակութային տարրերի տարածում մի վայրից մյուսը: Առաջանալով մի հասարակության ներսում՝ այս կամ այն մշակութային երևույթը կարող է վերցվել շատ այլ հասարակությունների կողմից:²⁴

²² Գալստյան Մ., Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես – XX դարի 80-ական թթ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, Ե., 2009, N 26, էջ 55-56:

²³ Арутюнов С.А. Народы и культуры. Развитие и взаимодействие, М., 1989, с. 166.

²⁴ Զբոսաշրջության և զանգվածային հաղորդակցման միջոցների հետ կարևոր մեխանիզմ է համարվում նաև միգրացիան: Միգրացիայի ժամանակ մի վայրից մեկ այլ վայր տեղափոխված մարդկանց խումբը կա՛մ ընդունում է

Միգրանտները, տեղափոխվելով մի մշակութային միջավայրից մյուսը, իրենց հետ նոր մշակութային միջավայր են տեղափոխում ոչ միայն սեփական մշակույթին բնորոշ պրակտիկաներ, այլև ձևավորում են նորերը կամ յուրացնում են ընդունող հասարակության հատկապես այն պրակտիկաները, որոնք անհրաժեշտ են իրենց նպատակների իրականացման համար: Այդ պրակտիկաները միգրանտի համար ձեռք են բերում սոցիալական և մշակութային կապիտալի նշանակություն և վերադարձից հետո չեն կորչում:²⁵

Անդրադառնալով նաև անդրազգայնության մոտեցմանը: Այդ եզրույթը սոցիալական ուսումնասիրությունների հետևանքով շրջանառության մեջ է մտել անցյալ դարի 70-ական թթ.: Դրա ի հայտ գալը ամենից առաջ կապված է տնտեսական ոլորտի ձևափոխումների հետ, որտեղ սկսեցին գերիշխել խոշոր միջազգային ընկերությունները՝ անդրազգային կորպորացիաները և բանկերը:²⁶ Դասական միգրացիոն հետազոտությունները

տվյալ տարածքի մշակութային առանձնահատկությունները, կա՛մ էլ կիսով չափ է ընդունում՝ ստեղծելով իր ենթամշակույթը: Միգրացիայի հետևանքով այդ տարածքում ապրողները կրում են նաև միգրանտների մշակութային ազդեցությունը: Ուսումնասիրելով նյութական մշակույթի աշխարհագրական տարածումը, որոշ հետազոտողներ նշում են մշակութային տարրերի տարածման երկու միջոց՝ 1) ողջ մշակութային տարրերի համալիր տեղափոխում, որը անվանում են ակուլտուրալիզացիա. 2) առանձին ազգագրական տարրերի տեղափոխություն մի ազգից մյուսը: Տե՛ս Шостак С. Механизмы культурной диффузии. http://www.isoc.com.ua/journal/07_Shostak.pdf, 11.06.12

²⁵ Թադևոսյան Ա., Միգրացիա և առօրեականություն. Ճանապարհորդություն մշակույթների և պրակտիկաների սահմանագծին, Ե., 2014, էջ 6:

²⁶ Այսպես, Սասկյա Սասենը, ուսումնասիրելով խոշոր քաղաքները, որոնք համարվում են ինստիտուտների (օրինակ՝ բանկեր և իրավաբանական ֆիրմաներ) և մարդկանց (օրինակ՝ միջազգային փորձագետներ) միջազգային ցանցեր և ուշադրություն դարձնելով «անդրազգայնություն» եզրույթին՝

րում սովորաբար համայնքը դիտարկվում է միայն սերտորեն կապված «տարածքի» հետ: «Տարածքի» հետ կապը բնորոշվում է առանձնահատուկ տեղային մշակույթի գոյությամբ: Այսպիսով, ընդունող հասարակության մի մասը դառնալու համար միգրանտները պետք է հարմարվեն կամ ձուլվեն տեղական մշակույթին: 1990-ական թթ. սկզբին մի շարք հետազոտողներ կասկածի տակ առան այդ թեզը և առաջարկեցին «անդրմիգրանտներ» և «անդրազգայնություն» հասկացությունները՝ որպես միգրացիայի միջազգային հետազոտություններում նոր հարացույցի հիմք:²⁷ Միգրանտները այն դեպքում են դառնում անդրմիգրանտներ, երբ «զարգացնում և պահպանում են ընտանեկան, տնտեսական, սոցիալական, կազմակերպական, կրոնական, և քաղաքական հարաբերությունները՝ անցնելով բոլոր տեսակի սահմանները»: Անդրմիգրանտները միաժամանակ ապրում են մի քանի տարածքում և ներառվում են մի քանի հասարակություններում, ստեղծում են նոր փոխկապակցվածություն և հաստատվում համայնքում, սակայն առանձնահատուկ կապված են իրենց ազգային պետությանը և տարածքին: Անդրմիգրանտների թվին կարելի է դասել տնտեսական միգրանտներին, որոնք ընտրում են մի տեղից մյուսը տեղափոխվե-

առաջին հերթին ցանկանում էր շեշտադրել համաշխարհայնացման պայմաններում տնտեսական, քաղաքական և սոցիալական գործընթացների մասշտաբային փոփոխությունները: Հետագայում «անդրազգայնություն» եզրույթը ներառվում է միգրացիայի ուսումնասիրության ոլորտ: Տե՛ս Sassen S. *The Global City*, London, 1991, p. 213-227.

²⁷ Այդ հարացույցի շրջանակում անդրազգայնությունը բնորոշվում է «որպես սոցիալական գործընթաց, որտեղ միգրանտները ստեղծում են սոցիալական դաշտ՝ անցնելով աշխարհագրական, մշակութային, քաղաքական սահմանները»: Տե՛ս Glick S.N., Bash L., Blanc-Szanton C. (eds.). *Towards a Transnational Perspective on Migration. Race, Class, Ethnicity and Nationalism Reconsidered*, N. Y. (Annals of the New York Academy of Sciences, 1992. Vol. 645).

լու. ռազմավարությունը: Նոր միջավայրում նրանք ձևավորում են նոր սոցիալական կապեր՝ միաժամանակ շարունակելով գործել իրենց նախկին հասարակության սոցիալական ցանցերում:²⁸ Որոշ հեղինակներ առաջարկել են «անդրազգային սոցիալական տարածություն» կատեգորիան: Ըստ նրա՝ պայմանավորված գլոբալիզացիայի գործընթացներով՝ մարդկանց, ապրանքների և տեղեկատվության բարդ և անխզելի հոսքերի հետևանքով նշանավորվում է միգրացիայի նոր դարաշրջանը: Միգրանտների սոցիալական ցանցերը արդեն ինտեգրացնում են ապատեղայնացված և ցրված տարածքները՝ անցնելով պետական սահմաններ, մասնատում են մարդկանց ազգային ինքնությունը, համակարգում են նրանց կենսաձևը և կարիերան: Այդպիսի անդրազգային սոցիալական տարածքների գոյությունը ոչնչացնում է միգրացիայի ավանդական ձևերը: Մասնավորապես, «միգրանտների երկրնտրանքը»՝ նոր էթնիկ փոքրամասնությունների ինտեգրացիան, օրակարգից հանվում է: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, միգրանտները ամբողջովին չեն կողմնորոշվում ինտեգրացիայի վրա, իսկ էթնիկ փոքրամասնությունը ձևավորվում է տեղական էլիտայի, այլ ոչ թե շարքային վերաբնակիչների կողմից: Անդրմիգրանտները, փաստացիորեն միաժամանակ ապրելով ուղարկող և ընդունող հասարակություններում, ստեղծում են անդրազգային սոցիալական տարածք:²⁹ Անդրտեղայնության հայեցակարգի կողմնակիցները այն բնորոշում են՝ ելնելով տեղայնության իրենց սեփական ընկալումից՝ հակադրելով հարևանություն կատեգո-

²⁸ Кайзер М., Бредникова Ол. Транснационализм и транслокальность.

http://www.sfb600-online.uni-trier.de/projekte/sfb-bibliographie/teilprojekt-a08/publikationen-a8/pdfs/Kaiser Brednikova_2004_Migration. (10.08.2013).

²⁹ Pries L. Transnationale Soziale Raume. Theoretisch-empirische Skizze am Beispiel Mexiko-USA (Zeitschrift für Soziologie, 1996. 25 (6). Dec. S. 456-472).

րիային: Միգրանտները, որպես մի քանի հասարակությունում գտնվողներ, դառնում են անդրմիգրանտներ՝ ստեղծելով անդրազգային, անդրտեղային, անդրմշակութային մի նոր տարածք:³⁰

Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունները, դարեր շարունակ ապրելով Հայաստանում, շնորհիվ ամենօրյա շփումների, միջեթնիկ ամուսնությունների, լեզվական իմացության՝ իրենց հոգևոր, նյութական և սոցիոնորմատիվ մշակությամբ ձևավորել են մի նոր մշակութային շերտ, որը կրում է ազգայինի և հայկականի փոխազդեցությունը: Այս տեսակետից ազգային փոքրամասնության միգրանտը իր ազգայինի հետ տեղափոխում է նաև հայկական մշակույթի այդ շերտը, որն իր ազդեցությունն է թողնում նրա էթնոմշակութային դիմագծի վրա:

Աշխատությունում վերը նշված տնտեսական, ժողովրդագրական, մշակութային տեսությունների շրջանակներում անդրադարձել ենք Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների միգրացիայի պատճառներին, նրանց սոցիալ-ժողովրդագրական նկարագրերի բացահայտմանը, որտեղ առանձնահատուկ տեղ է հատկացվել էթնոմշակութային գործոնի վերլուծությանը: Մասնավորապես Հայաստանում ազգային փոքրամասնությունների միգրացիայի պատճառների համակարգում կարևորվել է ազգային և մշակութային ինքնության խնդրի բացահայտումը: Այսինքն՝ ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրը՝ կապված ազգային լեզուների գործածության և մայրենի լեզվով ուսուցման հետ, ազգային պատկա-

³⁰ Գալստյան Մ., Միգրացիան և մշակութային փոխակերպումները, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2013, N2, էջ 184-193:

նելությանը և մարդու իրավունքներին առնչվող խնդիրները, միջլեթնիկ հարաբերությունները որքանով են համարվում փգ-րացիայի արտամղող գործոններ:

Աշխատությունում ազգային փոքրամասնությունների միգ-րացիայի ուսումնասիրությանը ցուցաբերվել են հետևյալ մո-տեցումները.³¹

- Ադմինիստրատիվ: Այն հիմնվում է երկու կարևոր դրույթների վրա. ա) հասարակությունը վերջին հաշվով բաղկացած է առանձին անհատներից, որոնք միմյանց հետ թույլ կապված են ընտանեկան, էթնիկական, սո-ցիալական, համայնքային կապերով. բ) անհատները ցանկացած ժամանակ քաղաքական որոշումների հի-ման վրա կարող են վերաբնակեցվել այլ տարածքում, նույնիսկ առանց բռնի տեղահանման: Այդպիսի վե-րաբնակեցման համար որպես խթան են ծառայում բա-րոյական, գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական միջոցները: Ադմինիստրատիվ մոտեցումը կարևոր չի համարում և բացառում է մարդկանց միգրա-ցիոն վարքագծի գիտական ուսումնասիրությունը: Այս մոտեցման շրջանակում քննարկման է արժանի Հայաս-տանից դուրս ազգային փոքրամասնությունների ազ-գային պետությունների կողմից վարվող միգրացիոն քաղաքականությունը, թե ադմինիստրատիվ վերաբնա-կեցման այդ մոտեցումը ինչ ազդեցություն է ունեցել Հայաստանից նրանց արտաքին միգրացիոն հոսքերի ձևավորման գործում:

³¹ Арутюнян Ю.В., Дробижева Л.М., Сусоколов А.А. Этносоциология, М., 1999, с. 86-93.

- Պոզիտիվիստական: Այն յուրաքանչյուր առանձին անհատի կամ ընտանիքի միգրացիոն վարքագիծը դիտարկում է որպես անհատական ընտրության արդյունք՝ կապված աշխարհագրական, տնտեսական, էկոլոգիական և այլ գործոնների հետ: Այն հիմնվում է դասական տնտեսագիտական տեսության՝ «տնտեսական մարդու» հայեցակարգի վրա: Որպես կարևոր միգրացիոն վարքագծի ձևավորման հիմք հանդես են գալիս անհատների կամ ընտանիքների շահագրգռվածությունը և դրա շնորհիվ նրանց կենսամակարդակի բարելավումը և եկամուտների բարձրացումը: Պոզիտիվիստները որպես միգրացիոն վարքագծի ձևավորման կարևոր գործոն համարում են ընտանիքի կամ անհատի դիրքի և առաջին հերթին եկամուտների բարձրացման շահագրգռվածությունը: Այս մոտեցման շրջանակում կարևոր ենք համարում քննարկել ազգային փոքրամասնության միգրացիոն վարքագծի ձևավորման վրա ազդող սոցիալ-տնտեսական և մշակութային գործոնները: Նշենք նաև միգրացիայի համար այն երկրների ունեցած ձգողականության գործոնները, որտեղ միգրանտները մեկնում են, նաև կարևոր է վերլուծել այնտեղ առկա այն հնարավորությունները, որոնք գրավիչ են միգրանտների համար:
- Մոցիոլոգիական մոտեցում:³² Ըստ այդմ՝ մարդկանց միգրացիոն վարքագծի վրա ազդում է ոչ միայն նրանց

³² Մոտեցում ասելով՝ հասկանում ենք տեսական սկզբունքների վրա հիմնված ռազմավարությունը կամ ընթացակարգերի ամբողջությունը, որն ընկած է որոշակի մեթոդի ընտրության հիմքում և կապում է մեթոդի ընտրությունը և ակնկալվող արդյունքները: Տե՛ս Թադևոսյան Գ., Որակական սոցիոլոգիա-

անհատական նախապատվությունը, այլև էական են այն սոցիալական խմբերը (նաև էթնիկ), որոնց նրանք պատկանում են, ինչպես նաև այն ռեֆերենտ խմբերը (նաև էթնիկ), որոնց նորմերին նրանք կողմնորոշված են:

- Էթնոսոցիոլոգիական: Ըստ դրա՝ ազգային փոքրամասնությունների միգրացիայի համար անհրաժեշտ է բացահայտել, թե ազգային փոքրամասնությունների սերնդեսերունդ ձևավորված մշակութային առանձնահատկությունները ինչպես են արտացոլվում նրանց միգրացիոն վարքագծում, և միգրացիան ինչ ազդեցություն է թողնում նրանց էթնիկ կառուցվածքի, ավանդույթների, միջէթնիկ հարաբերությունների վրա: Այսինքն՝ ազգային փոքրամասնությունների մոտ միգրացիան դիտարկվել է նրանց մշակույթում գերիշխող վարքի կանոնների և արժեքների տեսանկյունից, որտեղ կարևորվել են սերունդների՝ տեղաշարժերի վերաբերյալ ձևավորված ավանդույթները: Մյուս կողմից կարևորվում է համայնքների սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունների դերը նրանց միգրացիոն վարքագծի ձևավորման գործում և դրա թողած ազդեցությունը մշակութային փոփոխությունների վրա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՀ-ՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող մշակութային քաղաքականությունը

Անդրադառնանք այն կարևոր հարցին, թե Հայաստանում գործող օրենքները որքանով են նպաստում ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, ինքնության պահպանմանը, արդյո՞ք դրանք հանդիսանում են հանրապետությունից միգրացիայի արտամղող գործոն, և այդ հարցում ինչ տեսակետներ ունեն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարները: Օրենսդրական դաշտի վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանի ազգային փոքրամասնությունները օրենքով նախատեսված կարգով ունեն բոլոր հնարավորությունները մայրենի լեզվի պահպանման, զարգացման, մայրենիով կրթություն ստանալու և ազգային մշակույթը պահպանելու համար: ՀՀ Սահմանադրությունում նշվում է. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիա-

լական բնույթից և այլ հանգամանքներից, արգելվում է»:³³ Իսկ Սահմանադրության 41-րդ հոդվածով ամրագրված է նաև, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնությունները ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք»:³⁴

Անդրադառնալով Լեզվի մասին ՀՀ օրենքին (1993թ.), որտեղ առաջին հոդվածով սահմանվում է. «Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»,³⁵ իսկ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի (2009թ.) 4-րդ հոդվածում նշվում է. «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով ու հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ»:³⁶ Նրանց պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանությունը ամրագրված է նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական դրույթներով. նրանց նկատմամբ վարվող քաղաքականությունը հիմնվում է հետևյալ 3 սկզբունքների վրա. «ա) նպաստել էթնիկ ինքնության պահպանմանը և էթնիկ մշակույթի զարգացմանը. բ) կանխար-

³³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, հատուկ թողարկում, 5 դեկտեմբերի 2005, գլ. 2, հոդվ. 14.1, էջ 5:

³⁴ Նույն տեղում, հոդվ. 41, էջ 11:

³⁵ «Լեզվի մասին» ՀՀ օրենքը. ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 30 մարտի 1993թ., Ն.Ն-0773-<http://www.alist.am> (19.11.2015):

³⁶ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 10.07.2009թ., ՀՕ-160-Ն, հոդված 4 <http://www.arlis.am> (10.05.2011):

գելել էթնիկ որևէ խտրականություն. գ) նպաստել Հայաստանի հասարակության մեջ ոչ հայազգի բնակչության լիարժեք ինտեգրմանը»:³⁷ ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունները ազատորեն կարող են նշել իրենց ազգային տոները և հիշատակի օրերը, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:³⁸

Հայաստանի Հանրապետության «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով թույլատրվում է եթերային ժամանակ՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Ըստ օրենքի՝ հանրային հեռուստաընկերությունը պարտավոր է ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար հեռուստատեսությամբ տրամադրել շաբաթական 2 ժամը, իսկ օրական՝ 1 ժամը չգերազանցող եթերային ժամանակ:³⁹ Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային մի շարք պայմանագրերի և ակտերի: Մասնավորապես դրանցից կարող ենք առանձնացնել Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան⁴⁰ (Հայաստանում ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 1-ից), ինչպես նաև «Տարածաշրջանա-

³⁷ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարական դրույթներով նախատեսված մշակույթի ոլորտի ծրագրերը և մշակույթի ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը, 15 ապրիլի 2010թ., հ. 449-Ն, www.arlis.am (22.09.2011):

³⁸ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 06.08.2001թ., ՀՕ-465-Ն, www.arlis.am (22.09.2011):

³⁹ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 09.10.2000թ., ՀՕ-97, հոդվ. 26, <http://www.arlis.am> (10.05.2011):

⁴⁰ Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված միջազգային պայմանագրեր, Ե., 2008, հ. 2. էջ 112:

յին կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան» (Հայաստանում ուժի մեջ է մտել 2002թ. մայիսի 1-ից):⁴¹ Ըստ այդ փաստաթղթերի՝ ՀՀ-ն պարտավորվում է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան կիրառել ասորերենի, եզդիերենի, հունարենի, ռուսերենի և քրդերենի նկատմամբ: Կոնվենցիայի նախաբանում նշվում է, որ այդ երկրները ոչ միայն պետք է հարգեն «ազգային փոքրամասնության» պատկանող յուրաքանչյուր անձի էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը, այլև ստեղծեն համապատասխան պայմաններ, որոնք թույլ կտան արտահայտել, պահպանել, զարգացնել այդ ինքնությունը⁴²: Ըստ այդ պահանջի՝ Հայաստանի կառավարությունը 2002 թվականին մշակել է «լեզվաքաղաքականության պետական ծրագիր», որը նպատակաուղղված է հարգելու լեզվական և մշակութային բազմազանությունը և աջակցելու ազգային փոքրամասնությունների լեզուների և մշակույթի զարգացմանը⁴³: Վերը նշված փաստերը խոսում են այն մասին, որ Հայաստանում կարևոր տեղ է հատկացվում ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանմանը և մայրենիով կրթություն ստանալու հանգամանքին: Դրա մասին է փաստում, օրինակ, «Աթուր» ասորական ասոցիացիայի ղեկավար Արսեն Միխայլովը. «Դա պատմական փաստ է, որ ասորիները իրենց Հայաստանում ավելի լավ են զգում, քան մեկ այլ ուրիշ

⁴¹ Նույն տեղում, էջ 87:

⁴² Նույն տեղում, էջ 87:

⁴³ Եվրոպական խարտիան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ, Խարտիայի կիրառումը Հայաստանում, Մտրասբուրգ, սեպտեմբեր 23, 2009թ.:

http://www.coe.int/t/dg4/education/minlang/Report/Recommendations/ArmeniaCMRec2_hy.pdf (10.05.2011):

երկրում: Մենք այստեղ կարողացել ենք մեր լեզուն պահպանել, պահել մեր մշակույթը: Մենք հասել ենք այն մակարդակին, որ կառավարությունը մեզ թույլ ա տվել ռադիոյով ունենալ մեր ժամը: Ամեն օր 15 բոպետով պետական լուրերն են, իսկ շաբաթ-կիրակի՝ արդեն մշակութային լուրերն են: Մենք հնարավորություն ունենք հանրային դպրոցներում սովորելու մեր լեզուն: Չէի ասի, որ ամբողջությամբ բավարարում է մեզ մեր ինքնությունը պահպանելու և զարգացնելու տեսանկյունից, բայց պետք է ասել, որ արվում է, իրոք արվում է: Ես չէի ասի, որ Վրաստանում ա դա արվում, Ռուսաստանում»⁴⁴: Կոտայքի մարզի Արզնի համայնքը, որտեղ բնակչության գերակշռող մեծամասնությունը ասորիներ են, ունի միջնակարգ դպրոց՝ հայկական և ռուսական բաժիններով: Դպրոցում սովորում է 360 աշակերտ՝ ասորիներ, հայեր և եզդիներ: Առաջին դասարանի հայկական բաժին 2013թ. ընդունվել է 27 աշակերտ, իսկ ռուսական՝ 6: Ասորերենը դասավանդվում է ամեն օր, իսկ դասագրքեր ստանում են Սանկտ Պետերբուրգից: Ըստ համայնքի ղեկավարի՝ ասորի երեխաները հաճախում են նաև ռուսական բաժին և ստանում ռուսական կրթություն: Դպրոցի շրջանավարտները բարձրագույն կրթությունը շարունակում են Հայաստանի բուհերում. 2012թ. դրությամբ նրանց թիվը կազմել է մոտ 20 ուսանող: Համայնքը ունի ասորերենով բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների խնդիր: Գյուղի բոլոր պատասխանատու կառույցների ղեկավարները՝ գյուղապետը, դպրոցի տնօրենը, մանկապարտեզի վարիչը, փոստի տնօրենը,

⁴⁴ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 15.08.2013թ. կազմակերպության ղեկավար Արսեն Միխայլովի հետ հարցազրույցի արդյունքները, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Եթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվ (այսուհետ՝ ՀԱԻ ԷԲԱ):

ազգությամբ ասորի են: Գյուղապետարանի ցուցանակը գրված է հայերեն, ռուսերեն և ասորերեն, իսկ գյուղապետի սենյակում դրված են հայկական և ասորական դրոշները:

Մեջբերենք Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնքի հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաև ՀԿ) նախագահ Ս. Ռաֆայելիդիսի տեսակետը. «Հայաստանից մեկնելու պատճառները միայն սոցիալական են, մենք այստեղ ամուրկանգնած ենք հողի վրա, ոչ մի հարց չունենք որպես ազգային փոքրամասնություն: Հանդուրժողականությունը Հայաստանում գործում է: Ես ինքս այստեղ ծնվել, մեծացել եմ, և ոչ մեկ չի ասել՝ հույնի երեխա է: Ես ինքս միշտ աշխատել եմ»:⁴⁵ Հատկապես տարեց հույները, որոնք ծնվել, կրթություն ստացել և ընտանիք են կազմել մեզանում, Հայաստանը համարում են իրենց իրական, իսկ Հունաստանը՝ պատմական հայրենիքը. «Ծնվել եմ Հանքավան գյուղում, ունեմ 3 աղջիկ, մեկ տղա: Բոլորը ներկայումս ապրում են Հունաստանում՝ Սալոնիկում: 1993թ.՝ այն ժամանակ, երբ շրջափակումը վերացավ, ճանապարհները բացվեցին, և Հունաստանի կառավարությունն ընդունեց դրսում ապրող հույներին, մերոնք գնացին: Եթե ամուսիններից նույնիսկ մեկը ազգությամբ հույն էր, Հունաստանի կառավարությունն ընդունում էր: Այդ ճանապարհով շատ ընտանիքներ, որտեղ ամուսինը կամ կինը հայ էր, նրանք նույնպես մշտական բնակության մեկնեցին Հունաստան: Այնտեղ իմ երեխաները իրենց սեփական տներն ունեն, 6-7 անգամ գնացել եմ Հունաստան, բայց չեմ հարմարվել և վերադաձել եմ, թեև լե-

⁴⁵ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 21.08.2013թ. կազմակերպության ղեկավար Ս. Ռաֆայելիդիսի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲԱ:

գուն լավ գիտեմ: Ես իմ հայրենիքը Հայաստանն եմ համարում և այստեղ ինձ շատ լավ եմ զգում» (տղամարդ, 88տ.):⁴⁶

Ազգային ռադիոյի՝ եզդիների համար տրվող ռադիոհաղորդումների բաժինը ղեկավարող Ա. Թամոյանը, անդրադառնալով հայաստանաբնակ եզդիների շրջանում ազգային լեզվի և մշակույթի պահպանման խնդիրներին, նշում է. «Արտագաղթի պատճառները միայն տնտեսական են: Հայաստան երկրում է, որ կան բարենպաստ պայմաններ ազգային նկարագիրը պահպանելու հարցում: Հայաստանը աշխարհի միակ երկիրն է, որտեղ մեզ համար գոյություն ունեն ազգապահպանության աննախադեպ հնարավորություններ: Այսպես՝ ամենօրյա ռադիոհաղորդում, որը ուրիշ ոչ մի տեղ չկա, դպրոցական դասագրքեր, 1-10-րդ դասարանինը արդեն դպրոցականների սեղանին են, երեք եզդիական թերթ, հասարակական կազմակերպություններ և կոմպակտ բնակություն»⁴⁷: Այնուհանդերձ, ինչպես հարցազրույցի արդյունքներից պարզվեց, եզդիաբնակ մի շարք համայնքներ ունեն եզդիերենի իմացությամբ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների կարիք: Այսպես, Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի դպրոցը, որը կոչվում է եզդիների ազգային հերոս Ուսուր Բեկի անունով, 2012թ. դրությամբ ուներ 110 աշակերտ, իսկ այդ տարի առաջին դասարանցիների թիվ կազմել էր 21 աշակերտ: Դպրոցը հայկական է, իսկ դասատուները հայեր են և ունեն միայն մեկ բարձրագույն կրթությամբ եզդիերեն լեզվի և գրականության ուսուցիչ: Ըստ նրանց՝ Հայաստանում չկա եզդիերենով բարձրագույն կրթու-

⁴⁶ Գալստյան Ս., Դաշտային ազգագրական նյութեր, Հանքավան, 2013թ. (այսուհետ՝ ԴԱՆ):

⁴⁷ Տե՛ս Սարկոսյան Ա., Երևան քաղաքում 03.09.2013թ. Ա. Թամոյանի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲԱ:

թյուն ստանալու հնարավորություն: Այդ խնդիրը միայն լուծվում է վերապատրաստումների միջոցով: Օրինակ՝ Ռ. Ուսուրյանը, որը ապրում է Շամիրամ համայնքում, մարզում եզդիներենով վերապատրաստումներ իրականացնող միակ մասնագետն է:⁴⁸ Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքը 2013թ. դրությամբ ունի 3323 բնակիչ, որից 270-ը եզդիներ են: Դպրոցում նրանց համար առանձին եզդիներենով դասարան չկա, և կրթությունը ստանում են հայերենով, քանի որ մայրենիով կրթություն ստանալու համար չունեն համապատասխան մասնագետ, իսկ դպրոցը և գյուղապետարանը պատրաստ են աջակցելու այդ հարցում:⁴⁹ Հարևան Զարթոնք համայնքում, որտեղ եզդի աշակերտների քանակը մոտ 90 է, մայրենի լեզուն սովորելու համար Երևանից հրավիրել են մասնագետ, որը շաբաթը երկու անգամ գալիս և երեխաներին սովորեցնում է գրավոր եզդիերեն:⁵⁰ Պետականության բացակայության պայմաններում եզդիները Հայաստանը համարում են իրենց հայրենիքը, որտեղ, ինչպես փաստում են հարցազրույցի արդյունքները, կարողանում են պահպանել իրենց ազգային մշակույթը և չուժացվել: Եզդիները, Հայաստանը համարելով իրենց զարգացման և ապահովության համար կարևոր վայր, 2013թ. իրենց ինքնության գլխավոր խորհրդանիշի՝ Իրաքում գտնվող նրանց ուխտագնացության սրբավայրի՝ Լալեշի (Լալիշ) կրկնօրինակը կառուցել են նաև Ակնալիճ գյուղում, որը դարձել է համայն աշխարհի եզդիների հավաքատեղի: Այդ նույն տարածքում է նաև Հայ-եզդիական բարեկամության հուշահամալիրը, որի կենտրոնում «Բարեկամություն և եղբայրություն» հուշակոթողն է,

⁴⁸ Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2013թ.:

⁴⁹ Գալստյան Մ., ԴԱՆ, Ակնալիճ, 2014թ.:

⁵⁰ Գալստյան Մ., ԴԱՆ, Զարթոնք, 2014թ.:

որն ունի 7 մետր սլացք՝ խորհրդանիշների տեսքով մարմնավորելով հայկական քրիստոնեական խաչը, խոյակները, եզդիական արևը և սիրամարգը: Կենտրոնական հուշարձանը շրջապատված է եզդի ժողովրդի արժանավոր զավակներ Ուսուր Բեկի, Ջհանգիր աղայի և նրանց լավ բարեկամ Անդրանիկ գորավարի հուշարձաններով: Հուշահամալիրում տեղ է գտել նաև Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված «Ոգեկոչում» հուշաքարը:⁵¹

«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա ՀԿ-ի ղեկավար Ա. Հարությունյանը հարցազրույցում բացատրեց 1990-ական թվականներին հայերի կողմից Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների բացասական վերաբերմունքի փաստը, որը նպաստել է նրանց միգրացիային. «90-ականներին շատ մեկնեցին, բայց դա նրանից չէր, որ հայերը վատ էին վերաբերվում, այլ պարզապես իրադրությունն այնպես ստացվեց, որ նույնիսկ հայերն էին գնում: Սուտ է, որ ասում են, թե այդ թվականներին հայերը լավ չէին ընդունում օտար ազգերին: Ուղղակի կյանքը ստիպեց, և ով որ հնարավորություն ուներ՝ գնաց: Բայց կային մարդիկ, որ հաստատվել էին և չէին ուզում գնալ, նույնիսկ հնարավորություն ունեին մեկնելու, բայց մնում էին և այդ դժվարությունները հայ ժողովրդի հետ միասին տարել են: Իրենք էլ էին ներդրում անում, որ ճգնաժամից դուրս գան՝ իրենց աշխատանքով: Հիմա ջահել-

⁵¹ 5 հուշարձաններ, որ խորհրդանշում են հայերի և եզդիների դարավոր բարեկամությունը,

www.mediamax.am/am/news/society/11804/#sthash.ndhAMKzm.dpuf, 20.01.2015

ներն են գնում: Լավ կյանքի են ձգտում: Այն լեզվի հետ կապված չէր, որովհետև նրանց մի մասը գիտի հայերեն»:⁵²

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պահպանման և նրանց առջև սոցիալ-մշակութային խնդիրների լուծման համար Հայաստանում ձևավորվել են մի շարք կարևոր ինստիտուցիոնալ կառույցներ. 2000 թվականին ստեղծվել է ՀՀ Նախագահի խորհրդականին առընթեր ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունները համակարգող խորհուրդ, որը ձևավորվել է 11 ազգային փոքրամասնությունների կողմից: Յուրաքանչյուրն առաջադրել է 2 թեկնածու և ունի 22 անդամ: Արդյունավետ աշխատում է նաև ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնական հարցերի վարչությունը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում գործում է ազգային փոքրամասնությունների և փախստականների իրավունքների գծով պատասխանատու, Հանրային խորհրդում կազմավորվել է ազգային փոքրամասնությունների հարցով հանձնաժողով, 2006 թվականին բացվեց Ազգությունների մշակութային կենտրոնը: Ազգային փոքրամասնությունների գործունեությանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում յուրաքանչյուր տարի հատկացվում է 10 մլն դրամ՝ ազգային փոքրամասնությունների 11 համայնքների կրթական-մշակութային գործունեությանը նպաստելու համար: Ըստ Հայաստանի կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնական հարցերի վարչության տվյալների՝ հանրապետությո-

⁵² Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 10.09.2013թ. կազմակերպության ղեկավար Ա. Հարությունյանի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱՄ ԷԲԱ:

յունում բնակվող 6 ազգային փոքրամասնություններն ունեն 31 ՀԿ-ներ, որոնցից 8-ը գործում են Հայաստանի մարզերում, իսկ մնացածը՝ Երևանում: Ռուսներն ունեն 9, հույները՝ 9, եզդիները՝ 7 (1997թ. գրանցվել է եզդիաքրդական համայնք, իսկ 2001թ. այն վերագրանցվել է որպես եզդիական համայնք), ասորիները՝ 3, քրդերը՝ 2, իսկ ուկրաինացիներն ունեն 1 ՀԿ (աղյուսակ 1): Ուսումնասիրություններից պարզվում է, որ նշված հասարակական կազմակերպությունների վերաբերյալ բերված թվական տվյալները դեռևս հիմք չեն տալիս խոսելու դրանց գործունեության արդյունավետության մասին, քանի որ դրանց որոշ մասը ֆինանսների բացակայության պատճառով պետական գրացում ստանալուց հետո չի գործում կամ գործում է ոչ լիարժեք: Բացի նշված կազմակերպություններից, 1994 թվականներից գործում է նաև «Հայաստանի ազգությունների միություն» հասարակական կազմակերպությունը, որը միավորում է Հայաստանում բնակվող գրեթե բոլոր ազգությունների ներկայացուցիչներին:⁵³ Այն նպաստեց ՀՀ ազգային փոքրամասնությունների գործունեությունը առավել համակարգված և արդյունավետ դարձնելուն և միջազգային տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության հաստատմանը:⁵⁴

Ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների ղեկավարները հետ իրականացրած հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ նրանք իրենց գործունեությամբ համայնքներում նպաստում են ազգային լեզվի, կրթության և մշակույթի իրավունքների պահպանմանը և իրացմանը:

⁵³ Չատուս Վ., Հայաստանի ազգությունների միությունը, Հայաստանի ազգությունները, Ե., 2008, էջ 8-9:

⁵⁴ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում II, էջ 125:

**Հետազոտությունում ընդգրկված ազգային
փոքրամասնությունների ՀԿ-ները⁵⁵**

N	Կազմակերպությունների անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3
1.	ՀՀ ռուսաստանցի հայրենակիցների օգնության և աջակցության հիմնադրամ	ք. Երևան
2.	ՀՀ «Ռոսսիյա» ՀԿ	ք. Երևան
3.	«Սլավյանսկի դոմ» ՀԿ	ք. Երևան
4.	ՀՀ ռուսական մշակույթի միություն «Օդա», Հայաստանի բարեկամների միավորում	ք. Երևան
5.	Ռուսական մշակույթի ընկերություն «Օդա-Լուչ»	ք. Երևան
6.	Ռուսական մշակույթի միջազգային կենտրոն «Հարմոնիա»	ք. Երևան
7.	Ռուս-հայկական երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն	ք. Երևան
8.	«Ռոսսիյանե» ՀԿ	ք. Ղափան
9.	Ռուսական մշակույթի օջախ	ք. Վանաձոր
10.	Հունական ՀԿ-ների միություն «Էլպիդա» հունական համայնք	ք. Վանաձոր
11.	Հայաստանի հույների «Պատրիդա» ՀԿ	ք. Երևան
12.	Երևան քաղաքի «Բլիոս» հույների համայնք ՀԿ	ք. Երևան
13.	«Պոնտի»	ք. Երևան
14.	«Ակմի»	ք. Ալավերդի
15.	«Էլլադա»	ք. Գյումրի
16.	«Պոնտոս»	ք. Ստեփանավան

⁵⁵ Աղյուսակը կազմվել է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների տվյալների հիման վրա http://www.gov.am/u_files/-file/kron/1a%20Minority%20Table%20-%202023_12_08.pdf

Աղյուսակ 1-ի շարունակություն

1	2	3
17.	«Օլիմպիոս»	ք. Նոյեմբերյան
18.	«Անաստասի»	ք. Հրազդան
19.	Եզդիների ազգային միություն	ք. Երևան
20.	Աշխարհի եզդիների ազգային միություն	ք. Երևան
21.	Եզդիների ազգային կոմիտե	ք. Երևան
22.	Եզդիները արտասահմանում	ք. Երևան
23.	Եզդիաբարդական համայնք	ք. Երևան
24.	«Մեդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում	ք. Երևան
25.	Մինջար եզդիների ազգային միավորում	ք. Երևան
26.	Հայաստանի ասորական միությունների ֆեդերացիա «Խայադթա» Ասորական «Աշուր» երիտասարդական կենտրոն	ք. Երևան
27.	«Աթուր» ասորական ասոցիացիա	ք. Երևան
28.	«Մակենա» ասորական մշակութային ՀԿ	ք. Երևան
29.	«Քուրդ մտավորականության խորհուրդ» ՀԿ	ք. Երևան
30.	«Քուրդիստան կոմիտե» ՀԿ	ք. Երևան
31.	«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա ՀԿ	ք. Երևան

Վերջինս, ըստ նրանց, կարող է մեղմել համայնքից արտագաղթի խնդիրը: Այդ առթիվ ներկայացնենք նրանց համայնքի ղեկավարների մի քանի կարծիք. «Մեր կազմակերպությունը կոչվում է «Քուրդ մտավորականության խորհուրդ»,– նշում է Ա. Սարգսյանը,– ստեղծվել է 1992թ. մայիսի 8-ին: Զբաղվում ենք մշակութային հարցերով՝ լեզվի, կրթական: Հարկ եղած դեպքում միջնորդի դեր կարող ենք կատարել համայնքի և կառավարության միջև: Բացի այս հարցերից, «մտավորականության խորհուրդը» նաև գործնական մեծ աշխատանք է կատարել համայնքին օգնություն ցույց տալու համար: Շեյնկանի գյուղը

տարիներով խմելու ջուր չունեն, «մտավորականության խորհուրդը» միջնորդեց, այդ ժամանակ Իտալիայի ֆիրմաներից մեկը այստեղ էր, և խմելու ջուր հասցրեցինք այնտեղ այդ ֆիրմայի միջոցով: Այնուհետև բժիշկներ տարանք մի քանի գյուղեր, զննումներ կատարեցին: Դեղեր ստացանք ձրի և բժիշկների հսկողության տակ բաժանեցինք գյուղերում: Հետո հարց բարձրացրեցինք, որ Ռյա Թագա և Ալագյազի գյուղերի շենքերից բան չի մնացել: Վերջապես Ռյա Թագայում այդ շենքերը լավ վերանորոգեցին, իսկ Ալագյազում նորը կառուցեցին: Ամեն ինչ անում ենք, որ մարդիկ մնան տեղում»:⁵⁶

«Ռոսսիյա» ՀԿ-ի նախագահ Յ. Յակովլենկոն, անդրադառնալով այդ հարցին, նշում է, որ նրանց կազմակերպությունը գործում է 1993 թվականից: Այն գրանցված է արդարադատության նախարարությունում և, բացի երևանյան համայնքից, ունի ևս 17 մասնաճյուղեր հանրապետության տարբեր մարզերում. «Կազմակերպության գործունեության հիմնական նպատակը Հայաստանում ռուսների և ռուսալեզու քաղաքացիների համար կրթական և մշակութային միջավայրի ստեղծումն է, ինչպես նաև սոցիալական, կենցաղային, իրավաբանական որոշ հարցերի լուծումը և ընդհանուր առմամբ Հայաստանից նրանց արտագաղթի կասեցումը: Մենք աշխատում ենք, որ մարդիկ չհեռանան»:⁵⁷ Մշակույթի, լեզվի պահպանման և արտագաղթի կասեցման խնդրին է անդրադարձել նաև «Եզդիների ազգային կոմիտեի» անդամ Ս. Սուլթանյանը. «Ես ներկայացնում եմ «Եզդիների ազգային կոմիտե» կազմակերպությունը: Կազմա-

⁵⁶ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 21.09.2013թ. կազմակերպության ղեկավար Ա. Մարդարյանի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲԱ:

⁵⁷ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 29.09.2013թ. կազմակերպության ղեկավար Ա. Յակովլենկոյի հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲԱ:

կերպությունը ձևավորվել է 1999 թվականին: Այն զբաղվում է եզդիների մշակութային, կրթական և կրոնի պահպանման խնդիրներով, և դասախոսություններ ենք անցկացնում, որպեսզի չմոռանան իրենց արմատները: Երբ լեզվի դասեր ենք անցկացնում, լինում են դեպքեր, որ հայերն էլ են գալիս և մեծ հետաքրքրությամբ սովորում եզդիերեն: Դասախոսությունները անցկացնում ենք գյուղական համայնքներում: Այս վերջին 2-3 տարիների ընթացքում երևի մի 30 երիտասարդ ընտանիք արտագաղթել է: Գնացել են Գերմանիա, Ֆրանսիա և Ռուսաստան: Գերմանիայում և Ֆրանսիայում ձուլման վտանգը անհամեմատ ավելի մեծ է: Ամեն ինչ անում ենք, որ երիտասարդները մնան տեղում և չարտագաղթեն»:⁵⁸

2.2. Մայրենի լեզվի կիրառման հետ կապված խնդիրները

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ էթնիկ ինքնագիտակցության բարձրացման և հասարակական կազմակերպությունների ակտիվ գործունեության շնորհիվ Հայաստանի անկախության օրոք ազգային փոքրամասնությունների շրջանում մայրենի լեզվի նկատմամբ աննախադեպ հետաքրքրության և իմացության աճ է արձանագրվել: Այսպես, 1989 թ. մարդահամարի արդյունքներով, օրինակ, եզդիների 18.6%-ը (56.127-ից՝ 10.415 մարդ)⁵⁹ իր մայրենի լեզուն համարել է հայերենը, 2001թ. դրա կոդմնակիցների թիվը կրճատվել է

⁵⁸ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 03.10.2013թ. կազմակերպության ղեկավար Ս. Սուլթանյանի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲԱ:

⁵⁹ Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում 1989թ., էջ 99:

շուրջ 5.7%-ով՝ կազմելով 12.9% (40.620-ից՝ 5278 մարդ),⁶⁰ իսկ 2011թ. տվյալներով՝ 35308-ից 4271 մարդ:⁶¹ Ռուսների շրջանում 1989թ. մարդահամարի արդյունքներով այն կազմել է 32% (51.555-ից՝ 16.600 մարդ)⁶², 2001թ.՝ 0.1% (14.660-ից՝ 1666 մարդ),⁶³ իսկ 2011թ.՝ 11,5% (11911-ից 1372 մարդ):⁶⁴

Մայրենի լեզվի պահպանման գործում հատկապես մեծ աշխատանքներ են կատարում ՀԿ-ները: ՀՀ ռուսական մշակույթի միություն «Օդա», Հայաստանի բարեկամների միավորման ղեկավարը այդ կապակցությամբ նշեց. «Մեր կազմակերպությանը անդամակցում է մոտ 260 հոգի, որոնցից 46-ը 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի հաշմանդամներ են, իսկ 28-ը՝ աշխատանքի վետերաններ: Սակայն Հայաստանում անկախությունից հետո աշխատանքի վետերան հասկացությունը այլևս չի գործում: Մնացած մասը երիտասարդությունն է (մոտ 50 հոգի), անդամների երեխաները և թոռները (մոտ 150 հոգի): Բոլոր նրանք, ովքեր հասկանում են ռուսերեն լեզուն, իրենց համար է այս կազմակերպությունը: Այստեղ կան շատ փախստականներ, մոլոկաններ, ուկրաինացիներ և հայեր, որոնք եկել են Բաքվից, Մոսկվայից և այլն: Մեր խորհրդում ունենք 12 անդամ, որոնցից 5-ը հայեր են: Կազմակերպության հիմնական նպատակը ռուսական մշակույթի պահպանումն է, շփումը, ռուսերեն լեզվի տա-

⁶⁰ Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշների հիման վրա), Ե., 2003, էջ 362:

⁶¹ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքները, էջ 275, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

⁶² Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, էջ 99:

⁶³ Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշների հիման վրա), էջ 362:

⁶⁴ Նույն տեղում, էջ 275:

րածումը:⁶⁵ Այդ հարցում նույն պատկերն է նաև մյուս ազգային փոքրամասնությունների համար, որի մասին տվյալները զետեղված են աղյուսակ 2-ում:

Օրինակ, ըստ համայնքի ղեկավար Ռոմանիա Յավիրի, նախկին մարդահամարի ժամանակ ուկրաինացիների մեծ մասը ոչ թե ուկրաիներենը, այլ ռուսերենն են համարել մայրենի լեզու, և նրանք հիմնականում ռուսախոսներ են:⁶⁶ 2001թ. մարդահամարի արդյունքներով նրանց 42.3%-ը (1663-ից 692 մարդ) մայրենին համարել է ուկրաիներենը, 38.5%-ը (1663-ից 629 մարդ)՝ ռուսերենը, 17.8%-ը (1663-ից 291 մարդ)՝ հայերենը:⁶⁷ 2011թ. մարդահամարի տվյալներով 1176 ուկրաինացիներից ռուսերենը մայրենի լեզու է համարել 357, հայերենը՝ 208, ուկրաիներենը՝ 606, իսկ մեկ մարդ՝ ասորերենը:⁶⁸ Խորհրդային տարիներին խորհրդային հանրապետություններում պարտադիր ուսուցման լեզուն ռուսերենն էր, և ինչպես նշում է Յու. Մկրտումյանը, տասնամյակների ընթացքում դա հանգեցրեց մի իրողության, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մի մասը բավարար մակարդակով չգիտեր այդ լեզուն, որի միջավայրում ապրում էին:⁶⁹

⁶⁵ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 10.10.2013թ. կազմակերպության ղեկավար Ժ. Մուրադյանի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲԱ:

⁶⁶ Յավիր Ռ., Ուկրաինացիները Հայաստանում, Հայաստանի ազգությունները, Ե., 2000, էջ 102:

⁶⁷ Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), հիման վրա, էջ 362:

⁶⁸ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքները, էջ 275, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

⁶⁹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում II, էջ 174:

ՀՀ մշտական բնակչությունը՝ ըստ ազգության և մայրենի լեզվի
(ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով)⁷⁰ (մարդ)

Ազգային կազմը	Ընդա- մենը	Հայերեն	Եզդիե- րեն	Ռուսե- րեն	Ասորե- րեն	Քրդե- րեն	Ուկրաի- ներեն	Հունա- րեն	Ազլե- րեն
ՀՀ	3018854	2956615	30973	23484	2402	2030	733	332	491
Հայ	2961801	2948766	249	11862	124	22	106	78	357
Եզդի	35308	4271	30628	79	1	323	0	0	2
Ռուս	11911	1372	47	10464	5	1	6	2	2
Ասորի	2769	418	2	81	2265	0	1	0	0
Հուլյն	900	557	3	88	1	0	1	0	0
Ուկրաի- նացի	1176	208	0	357	1	0	606	0	0
Քուրդ	2162	406	39	24	2	1684	0	0	0
Այլ	2727	559	5	513	2	0	0	0	130
Հր. պատ.	100	58	0	17	1	0	12	0	0

Այնուհանդերձ, ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների որոշ ղեկավարների կարծիքով, վերը նշված օրենքները երբեմն գործում են ոչ ամբողջապես, որի հետևանքով ներկայումս նրանք բախվում են դեռևս չլուծված մի շարք խնդիրների: Ըստ նրանց՝ այդ խնդիրները տարիներ շարունակ նպաստել են Հայաստանից արտաքին միգրացիայի քանակի ավելացմանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է 1993թ. «Լեզվի մասին» ՀՀ օրենքի ընդունմանը և շատ կարճ ժամանակում դրա կիրարկմանը, որը միանշանակորեն չընդունեցին ռուսախոս ազգային փոքրամասնությունները: Ըստ այդ օրենքի՝ «Պաշտոնական անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշ-

⁷⁰ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքները, էջ 275, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

խատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին»⁷¹, այսինքն՝ Հայաստանի բոլոր քաղաքացիները, որոնք զբաղեցնում են պետական պաշտոններ կամ հավակնում են, պետք է ազատ տիրապետեն գրավոր և բանավոր հայերենին: Այդ կապակցությամբ անդրադառնանք մի քանի կարծիքների: Յու Յակովենկոն, որը ղեկավարում է «Ռոսսիյա» հասարակական կազմակերպությունը, նշում է. «Արտագաղթի ամենամեծ հոսքը եղել է 1993 թվականին, երբ ընդունվեց լեզվի մասին օրենքը, և փակվեցին ռուսական դպրոցները, համալսարանների ռուսական բաժինները: Այդ ժամանակ հուսալքված մարդիկ, չիմանալով, թե ինչպես շարունակել ապրել, արտագաղթում էին: Կարելի է հաղթահարել սոցիալական, կենցաղային դժվարությունները, բայց երբ առաջանում է կրթական խնդիր, այդ ժամանակ արդեն իսկապես իրավիճակը սրվում է, որովհետև բարձրանում է ինքնապահպանման հարցը: Միանգամից ամբողջ կրթական համակարգը հայերենի փոխելը խոհեմ քայլ չէր: Այդ անցումը պետք է կատարվեր աստիճանաբար, և այսօր գուցե ունենայինք ուրիշ պատկեր: Բայց, ցավոք սրտի, այն ժամանակ իշխանությունը լավ գլուխ չհանեց այս ամենից և որոշեց մեկ օրենքով փակել մնացածի թթվածինը: Այսօր ռուսները, որպես այդպիսին, նման նեղվածություն չեն զգում: Քանի որ կան ռուսական դասարաններ, մեր դպրոցը, որը ամբողջովին համարվում է սլավոնական դպրոց, բայց օրենքը, միևնույն է, շարունակում է լինել: Դրա համար ինչ-որ կերպ հարմարվում ենք այդ օրենքին, չնայած վերջերս շատ են խոսում այն մասին, որ պետք է

⁷¹ «Լեզվի մասի» ՀՀ օրենքը, ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 30 մարտի 1993թ., ՀՆ-0773-[http:// www.alist.am](http://www.alist.am) (19.01.2015):

փոխել այդ օրենքը: ... Միգրացիան, իհարկե, կապված է եղել լեզվական այս գործընթացների հետ: Տնտեսական գործոնը ևս ազդում էր, քանի որ լեզվի մասին օրենքից հետո շատերը կորցրեցին իրենց աշխատանքը: Մարդիկ խմբեր էին կազմում և հեռանում պարզապես կոլեկտիվներով: Գնում էին Ռուսաստանի լքված գյուղերը և վերակառուցում դրանք: Ամեն տեղից հեռանում էին՝ և՛ գյուղերից, և՛ քաղաքներից: Իսկ այսօր վիճակը այնպես է, որ մենք՝ ազգային փոքրամասնություններս, ունենք նույն խնդիրները, ինչ որ հայերը: Մենք այս ազգի մի մասն ենք: Չնայած շատերը մոռանում են այդ մասին, և մեզ մոտ խռովություն է առաջանում, երբ իշխանավորները ինչ-որ տոնի առթիվ շնորհավորելիս հիշում են միայն հայ ժողովրդին: Կարելի դիմել ոչ թե հայ ժողովուրդ, այլ Հայաստանի ժողովուրդ և վերջ, ուրիշ խնդիր չի լինի»:⁷²

Ժ. Մուրադյանը, որ ներկայացնում է «Օդա» կազմակերպությունը, նշում է, որ ռուսների արտագաղթը հիմնականում տեղի է ունեցել սոցիալ-տնտեսական ճգնաժամի տարիներին՝ Հայաստանի անկախությունից հետո, որը տևեց մինչև XX դարի վերջը: Դրան նպաստում էր նաև հայերենի չիմացությունը. «Անկախության տարիներին մենք չէինք կարողանում ավտոբուսի տոմս գնել: Ռուսերեն ասում էինք՝ փոխանցեք մեզ տոմս, մեզ ասում էին՝ ինչո՞ւ եք ռուսերեն խոսում: Այդ նեղվածության պահը կար, և աշխատանքի հարցում իրենց մարդկանց էին տեղ տալիս: Հետո լույս չկար, հացը տալոնով էր: Մենք թոշակառուներ ենք: Հիմա կան շատ մենակյացներ, որոնց երեխաները ով որտեղ պատահի՝ գնացել են, և այստեղ մնացել են մե-

⁷² Տե՛ս Մարկոսյան Ա., Յու. Ի. Յակովենկոյի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

նակ մարդիկ: Շատերն են գնացել: Գնացել են Ռուսաստան՝ Մոսկվա, շատերը՝ Իսրայել, Ամերիկա: Բաքվի փախստականները կա՛մ Մոսկվա են գնացել, կա՛մ Ամերիկա: Ինչո՞ւ: Առաջին հերթին լեզվի չիմացությունը, աշխատանքի բացակայությունը: Շփվելու անհնարինությունը՝ հատկապես նախնական շրջանում: Պայմանները սարսափելի էին: Իրենց ավելի ձեռնտու էր ստանալ փախստականի կարգավիճակ և հեռանալ: Խառնամուսնական ընտանիքները մեկնում էին Ամերիկա, եթե կինը բարեկամներ էր ունենում, մոլոկանները մեկնում էին Կանադա: Շատ գյուղեր պարզապես դատարկվեցին Հայաստանում, օրինակ՝ Սեմյոնովկա գյուղ կար: Հիմա միայն Ֆիոլետովոն և Լերմոնտովոն են մնացել: Այդ արտագաղթը մոտավորապես տևեց 10 տարի: Շատերը այստեղ տները թողել են: Ամռանը վերադառնում են հանգստի: Հիմա մենք բոլորս մեզ հիանալի ենք զգում: Հիմա մեր երեխաները տիրապետում են հայերենին, մենք ենք դժվարանում, մենք էլ թոշակառու ենք: Միգրացիայի պատճառները ներկայումս փոխվել են: Հիմա կարևորվում է նաև կրթական և ամուսնական պատճառներով միգրացիան: Ես 49 տարի է՝ ապրում եմ այստեղ: Ես ունեմ 2 աղջիկ և մեկ տղա: Այստեղ տղաս ամուսնացավ հայուհու հետ, աղջիկս ամուսնացավ: Ի՞նչ իմաստ ուներ իմ գնալը: Ես մնացի»:⁷³ Նույն կազմակերպության մշակութային ընկերության համակարգող խորհրդի անդամ Գալինա Կոլիկովան միգրացիայի և համայնքի կանոնավոր գործունեությանը խոչընդոտող պատճառներից մեկը համարել է «Լեզվի մասին» օրենքի խտրական բնույթը, որը մի հարվածով ոռոսաց լեզուն դուրս

⁷³ Տե՛ս Մարկոսյան Ա., Ժ. Մուրադյանի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

մդեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներից»:⁷⁴ Արարատի մարզի Դիմիտրով աստրաբնակ համայնքի դպրոցը խորհրդային տարիներին եղել է ռուսական թեքումով: Գյուղապետարանի ազգությամբ ասորի պատասխանատուներից մեկի կարծիքով՝ Լեզվի մասին օրենքի (1993թ.) ընդունումից հետո այն դարձավ հայկական, որի պատճառով ռուսախոս ասորիների և Ադրբեջանից բռնագաղթած շուրջ 40 ռուսախոս հայ ընտանիքներ գյուղից արտագաղթեցին: Ներկայում երեխաների ռուսական կրթությամբ ծնողները, կապված լեզվական ուսուցման և հայերեն դպրոցական ծրագրերի հետ, դժվարություններ են ունենում երեխաների դասապատրաստման հարցում: Ըստ նրա՝ ասորի երեխաների ռուսերենով կրթություն ստանալը ոչ միայն նպաստում է հետագայում Հայաստանում բուհեր ընդունվելուն, այլև ՌԴ-ում աշխատանք գտնելու և մշտական բնակություն հաստատելու համար:⁷⁵

Լ. Ռշտունիի համոզմամբ՝ ներկայում այդ իրավիճակը փոխվել է, և բացվում են ռուսական նոր դպրոցներ, քոլեջներ, բուհեր. «Լեզվի խնդիրը, իհարկե, կա, շատերը մտահոգ էին, որ ռուսերեն լեզուն այսպես ասած հեռացվեց: Բայց արդեն մի քանի տարի է կարծես թե վերածնունդ է նկատվում այդ հարցում: Փորձում են դպրոցներ բացել: Հիմա պետք է ռուսական քոլեջ բացվի: Հետո զինվորական ծառայողական վայրերում ռուսական դպրոցներ կան: Իմ թոռնիկն ավարտեց Աշտարակի զինվորական դպրոցը, որովհետև ինքը ՌԴ քաղաքացի է և ուզում է գնալ սովորել Սանկտ Պետերբուրգում: Եվ նա հիմա այստեղ

⁷⁴ Կուլիկովա Գ., Հայաստանի ազգությունները, «Օդա» ռուսական համայնքը, Ե., 2000, էջ 9:

⁷⁵ Գալստյան Մ., ԴԱՆ, Դիմիտրով, 2015թ.:

Ռուսաստանում ընդունված այդ ծրագրով է սովորում: Մեծ թոռս նույնպես Լենինգրադում է սովորում»:⁷⁶

Հարցազրույցներից պարզվեց, որ ռուսաց լեզվի խնդիրը իրենց գործունեությունում կարևորել են ոչ միայն Հայաստանում բնակվող ռուսները, այլև ասորիների, ուկրաինացիների, հույների ՀԿ-ների պատասխանատուները, քանի որ այդ համայնքների անդամների գերակշռող մեծամասնությունը ռուսախոսներ են, իսկ նրանց երեխաները կրթություն են ստացել ռուսական դպրոցներում և բուհերում: Հայաստանի ասորական միությունների ֆեդերացիա «Խայադթա» ասորական «Աշուր» երիտասարդական կենտրոնի նախագահ Ի. Գասպարյանն այդ կապակցությամբ նշեց. «Այդ տարիներին սկսեցին փակել ռուսական դպրոցները: Ասորիները ռուսախոս էին և հիմնականում ռուսական կրթություն ունեին: Դա հիմնական պատճառ դարձավ, որ հնարավորություն չէին ունենում երեխաներին ռուսական դպրոց տալու, ռուսական կրթություն ստանալու: Բացի դրանից, մասնագետները, որոնք ունեին ռուսական կրթություն և չէին տիրապետում հայերենին, ինչ-որ պաշտոն էին զբաղեցնում, գործից ազատում էին: Մայրենի լեզուն այն է, որով դու ծնվելու օրից խոսում ես: Այսինքն՝ ազգային լեզուն և մայրենի լեզուն տարբեր հասկացություններ են: Տվյալ պահին իմ ազգային լեզուն ասորերենն է, մայրենի լեզուն՝ ռուսերենը: Ես քանի որ սովետական կրթության մարդ եմ և սովետական ժամանակ եմ անցել աշխատանքի, ինձ վրա դա

⁷⁶ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 15.10.2013թ. Լ. Ռշտունիի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲԱ:

այդպես չի անդրադարձել, քանի որ ես աշխատում եմ արդեն մոտ 30 տարի»:⁷⁷

Կան նաև կարծիքներ, ըստ որոնց՝ Հայաստանից ազգային փոքրամասնությունների արտագաղթի պատճառը չի պայմանավորվում ՀՀ-ում ընդունված՝ լեզվի մասին օրենքից բխող լեզվաքաղաքականությամբ: Լեզվի չիմացությունը, որպես Հայաստանից միգրացիայի պատճառ տեսակետին համակարծիք չէ, օրինակ, «Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիայի նախագահ Ա. Հարությունյանը (ղեկավարում է Ռ. Յավիրից հետո), որը այդ կապակցությամբ արտահայտեց հետևյալ կարծիքը. «90-ականներին շատերը մեկնեցին, բայց դա նրանից չէր, որ հայերը վատ էին վերաբերվում, այլ պարզապես իրադրությունը այնպես ստացվեց, որ նույնիսկ հայերն էին գնում: Սուտ է, որ ասում են, թե այդ թվերին հայերի հետ լարվածություն կար կամ լեզուն չգիտեին: Ուղղակի կյանքը ստիպեց, և ով հնարավորություն ուներ՝ գնաց: Բայց կային մարդիկ, որ հաստատվել էին և չէին ուզում գնալ, նույնիսկ հնարավորություն ունեին մեկնելու, բայց մնում էին և այդ դժվարությունները հայ ժողովրդի հետ տարել են: Իրենք էլ էին ներդրում անում, որ ճգնաժամից դուրս գան իրենց աշխատանքով: Հիմա ջահելներն են գնում: Լավ կյանքի են ձգտում: Լեզվի հետ կապված խնդիրներ չկան, որովհետև գիտեն հայերեն»:⁷⁸

Ազգային փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող մասնագետները համակարծիք են այն հարցում, որ այդ օրենքի ընդունումից հետո ազգային փոքրամասնությունների այն ներ-

⁷⁷ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 20.10.2013թ. կազմակերպության ղեկավար Բ. Գասպարյան հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲՍ:

⁷⁸ Տե՛ս Մարկոսյան Ա., Երևան քաղաքում 03.03.2014թ. կազմակերպության ղեկավար Ա. Հարությունյանի հետ հարցազրույցի արդյունքները, ՀԱԻ ԷԲՍ:

կայացուցիչները, որոնք չէին տիրապետում այդ ազգության լեզվին, հայտնվեցին դժվարին կացության մեջ: Դժվարություններ առաջացան կրթության, ծառայողական և մասնագիտական առաջխաղացման ասպարեզում, որոնք սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետ մեկտեղ նպաստեցին զանգվածային արտագաղթին: Անհրաժեշտ է նշել, որ գրեթե համանման դժվարություններ ծառացան նաև այն հայերի առջև, մասնավորապես հայ փախստականների միջավայրում, որոնք ճակատագրի բերումով ռուսախոս էին դարձել: Նրանց մի մասը նույնպես արտագաղթեց Հայաստանից: Այդ օրենքը կիրարկվեց շատ կարճ ժամանակահատվածում, և նկատի չառնվեցին գոյություն ունեցող իրողությունները, չնախատեսվեցին պետական միջոցներով պետական լեզվի արագացված դասընթացներ հայերենին չտիրապետող քաղաքացիների համար: Հանրապետության քաղաքացիներին անհրաժեշտ էր տալ ժամանակ, որպեսզի նրանք կարողանային հարմարվել լեզվական և սոցիալ-հոգեբանական նոր պայմաններին, որը կարող էր մեղմել նաև արտագաղթը:⁷⁹ Այնուհանդերձ, ներկա պայմաններում ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների պատասխանատուները օրինաչափ են համարում հայերենը որպես պետական լեզու ընդունելը և նրանց կարծիքով դրա չիմացության հետևանքով հայաստանաբնակ ազգային փոքրամասնությունները չեն կարող իրենց մասնակցությունը բերել հանրապետության տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքին: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունն ընդունել է մի շարք կարևոր օրենքներ և միացել նաև մարդու իրավունքների

⁷⁹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում II, էջ 174-175:

վերաբերյալ միջազգային մի շարք պայմանագրերի և ակտերի, որոնք նպաստում են նրանց ազգային-մշակութային ինքնության պահպանմանը: Բայց պետք է նշել, որ առօրյա կայնքում այդ օրենքները ինչպես հայերի, այնպես էլ ազգային փոքրամասնությունների համար գործում են ոչ լիարժեք՝ տեղիք տալով տարատեսակ կարծիքների: Մյուս կողմից «Լեզվի մասին» ՀՀ օրենքի ընդունումը և շատ կարճ ժամանակում դրա կիրարկումը խթանեցին Հայաստանից ազգային փոքրամասնությունների միգրացիային:

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ
ԷԹՆՈԺՈՂՈՎԱԴՐԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների արտաքին միգրացիոն միտումները պարզաբանելու նպատակով կարևոր ենք համարում անդրադառնալ արդի էթնոժողովրդագրական գործընթացներին, մասնավորապես հետևյալ խնդիրներին.

- 1) ազգային փոքրամասնությունների թվի շարժին և դրանում արտաքին միգրացիայի գործոնի ազդեցությանը.
- 2) ազգային փոքրամասնությունների սեռատարիքային կազմին և արտաքին միգրացիայի հետևանքով դրանցում տեղի ունեցած փոփոխություններին.
- 3) ազգային փոքրամասնությունների բնակավայրի տիպին (քաղաք, գյուղ) և դրա դերին արտաքին միգրացիոն գործընթացներում.
- 4) Հայաստանում ըստ մարզերի նրանց բաշխվածությանը և արտաքին միգրացիայի թողած էթնոժողովրդագրական հետևանքներին:

3.1. ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների թվի և էթնիկ կազմի շարժընթացը (XIX դարի վերջ – XXI դարի սկիզբ)

Աղյուսակ 3-ի տվյալներից կարող են եզրակացնել, որ ավելի քան հարյուր տարվա ընթացքում Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների շրջանում դիտարկվել են

հետևյալ միտումները. մինչև 1980-ական թվականները, այսինքն՝ շուրջ 80 տարիների ընթացքում (1897թ. մարդահամարից մինչև 1979թ. մարդահամարի միջև ընկած ժամանակահատվածը) Հայաստանում բնակվող նշված ազգային փոքրամասնությունների շրջանում, բացառությամբ հույների, դիտարկվել են բացարձակ աճի միտումներ: Օրինակ, ռուսների քանակն այդ տարիներին ավելացել է 64.4%-ով (45 322 մարդ), ասորիներինը՝ 59.2%-ով (3 661 մարդ), ուկրաինացիներինը՝ 79.1%-ով (7 047 մարդ), քրդերինը՝ 44.9%-ով (22 861 մարդ): Նյութերի վերլուծությունից պարզվում է, որ այդ տարիներին հատկապես եզդի և քուրդ բնակչության թվի ավելացումը պայմանավորված է նրանց բնական աճի բարձր տեմպերով, ռուսների և ուկրաինացիների աճը՝ աշխատուժի ներհոսքով, ազգամիջյան ամուսնություններով: Մինչդեռ պատկերն այլ է նորանկախ Հայաստանի մոտ քսան տարիների ընթացքում, երբ Հայաստանի բնակչության, ընդ որում՝ նշված ազգային փոքրամասնությունների բացարձակ քանակը կտրուկ նվազեց: Այսպես, 1989թ. համեմատությամբ 2001թ. մարդահամարի տվյալներով ռուսների քանակը կրճատվել է 36 895 մարդով, իսկ 2011թ. մարդահամարի տվյալներով՝ 3 469 մարդով: Նշված երկու մարդահամարների ընթացքում նրանց թիվն ընդհանուր առմամբ կրճատվել է 40 364 մարդով:

Ասորիների քանակը, 1989-2011թթ. մարդահամարների տվյալներով, կրճատվել է 3 194 մարդով, ուկրաինացիներինը՝ 7 165-ով, իսկ հույներինը՝ 3 750 մարդով: Ընդ որում, հանրապետությունից նրանց արտագաղթի հիմնական մասը տեղի է ունեցել 1989-2001թթ. ընթացքում՝ համապատասխանաբար 2 554, 6 708, 3 474 մարդ:

**ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների
թվի շարժընթացը (1897-2011 թթ.)⁸⁰ (մարդ)**

Ազգային կազմը	Տարեթիվը							
	1897	1926	1959*	1970*	1979*	1989	2001	2011
Եզդի	–	12237	–	–	–	51976	40620	35308
Ռուս	25014	19548	56477	66108	70336	51555	14660	11191
Ասորի	2522	2215	4326	5.544	6183	5963	3409	2769
Ուկրաինացի	1853	2826	5593	8390	8900	8341	1633	1176
Քուրդ	27961	3025	25627	37486	50822	4151	1519	2162
Հույն	5936	2980	4976	5690	5653	4650	1176	900

2001թ. և 2011թ. մարդահամարների միջև ազգային փոքրամասնությունների թվի կրճատման միտումներն առավել ամբողջական ձևով ներկայացված են աղյուսակ 4-ում:

Անդրադառնալով նաև եզդիների և քուրդերի քանակի խնդրին: 2001թ. և 2011թ. մարդահամարի արդյունքներով Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների քանակով ամենաշատը եզդիներն են (համապատասխանաբար 40 660, 35 308 մարդ), սակայն 1897, 1959, 1970, և 1979 թվականներին

⁸⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում II, էջ 160: Աղյուսակի այն վանդակներում, որտեղ դրված է գծիկ նշան, ըստ աղբյուրի նշանակում է, որ այդ տարիների համար բացակայում են տվյալները, իսկ եզդիների սյունակում տարեթվերի դիմաց դրված աստղանիշը նշանակում է որ 1959, 1970, 1979 թթ. մարդահամարների ժամանակ եզդիները հաշվառվել են որպես քուրդ: Աղյուսակում բերված 2001թ. և 2011թ. տվյալները կազմված են Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները) (էջ 362-363), և Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների (էջ 272)
[http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)) հիման վրա:

իրականացված մարդահամարներում բացակայում են նրանց վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 4

ՀՀ մշտական բնակչության ազգային կազմը՝ ըստ 2001-2011թթ. մարդահամարի արդյունքների⁸¹ (մարդ)

Ազգային կազմը	2001	2011	Տարբերությունը՝ 2001-2011թթ.
Ընդամենը ՀՀ-ում որից՝	3213011	3018854	-194157
Հայ	3145354	2961801	-183553
Եզդի	40620	35308	-5312
Ռուս	14660	11191	-3469
Ասորի	3409	2769	-640
Հույն	1176	900	-276
Ուկրաինացի	1633	1176	-457
Քուրդ	1519	2162	+643
Այլ	4640	2727	-1913
Հրաժ. պատասխ.	-	100	-100

«Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I» գրքում (2000թ.) հեղինակային խումբը այդ խնդիրն իրավացիորեն պայմանավորում է նրա ինքնանվանման և ինքնության խնդրի հետ, քանի որ 1897, 1959, 1970 և 1979 թթ. մարդահամարների ժամանակ եզդիները գրանցվել են

⁸¹ Աղյուսակը կազմված է Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները) (էջ 362-363) և Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների (էջ 272) [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)) հիման վրա:

«քրդեր» անվան տակ:⁸² Հայաստանում բնակվող եզդիների և քրդերի՝ որպես մեկ կամ առանձին էթնոսների ինքնության և էթնոմշակութային առնչությունների հարցերին նվիրված են բազմաթիվ աշխատություններ և վերլուծություններ: Այդ հարցերն ամբողջությամբ չեն առնչվում մեր ուսումնասիրության հիմնական խնդրին, բայց դրանցում ընթացող ներկայիս ժողովրդագրական և էթնոմշակութային միտումները բացահայտելու համար անդրադառնանք գոյություն ունեցող մի քանի կարծիքի: Ըստ հետազոտության արդյունքների՝ այդ հարցն առավել սրությամբ է արտահայտվում երկու էթնիկ հանրույթների ազգային հասարակական կազմակերպությունների ղեկավարների, քան հասարակ ժողովրդի շրջանում: Այդ կապակցությամբ բերենք մի քանի օրինակ. «Եզդիների միջազգային հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ Զամալ Մադախյանը, անդրադառնալով այդ խնդրին, նշում է. «Այն կարծիքը կա, թե եզդիները նույն քրդերն են, անհիմն է և արժանի դատապարտման և քննադատության: Եզդիները իրենց լեզվով, գրերով, կրոնով, սովորույթներով և ազգային շատ առանձնահատկություններով ինքնատիպ առանձին ժողովուրդ են: Եզդիներին որևէ ազգի հետ նույնացնելը նշանակում է մեքենայաբար ժխտել դարերով հաստատված ազգի գոյությունը»:⁸³ 1989 թ. սեպտեմբերի 30-ին Երևանում տեղի ունեցած Հայաստանի եզդիների 3-րդ համագումարում ընդունված «Հռչակագրում» մասնավորապես ասված է. «Եզդիների համագումարը գտնում է, որ եկել է ժամանակը վերջ տալու ստալինյան դարաշրջանից

⁸² Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները այսօր I, էջ 25-27:

⁸³ Մադախյան Զ., Հայաստանի ազգությունները, Եզդիներ, Ե., 2000, էջ 56:

Ժառանգած այն իրողությունը, ըստ որի՝ եզդիներին անվանում են քրդեր: Եզդիներն իրենց համարում են եզդիներ: ... Պաշտոնական բոլոր ասյաններում մեզ քուրդ անվանելը մեզ համար անընդունելի է: Մենք պահանջում ենք Հայաստանի Հանրապետության մարմիններից վերջ տալ անարդարությանը և մեր ժողովրդին կոչել իր անունով»:⁸⁴ Իսկ Աշխարհի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է. «Եզդիները քուրդ չեն, չպետք է խառնել այդ երկու ազգերին: ... Եզդի ծնվում ես ու չես էլ կարող դառնալ», և բերել է բազմաթիվ փաստարկներ իրենց և քրդերի լեզվական, կրոնական, մշակութային տարբերությունների մասին: Ըստ Ա. Թամոյանի՝ այսօր ամբողջ աշխարհում բնակվում է 2 միլիոնից ավելի եզդի. Ռուսաստանում՝ 350 հազ., Եվրոպայում՝ 300 հազ., Վրաստանում՝ 50 հազ.:⁸⁵ Այդ կապակցությամբ 2010թ. փետրվարին եզդիների համայնքը ցույց է կազմակերպել ՀՀ Նախագահի նստավայրի մոտ՝ պահանջելով հարգել իրենց ազգային պատկանելությունը և չնույնացնել քրդերի հետ:⁸⁶ Այսպիսով, եզդիներն իրենց համարում են որպես առանձին էթնոս: Անդրադառնանք նաև Հայաստանում բնակվող քրդերի տեսակետին: Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության քուրդ մտավորականների խորհրդի վարչության նախագահ Ամերիկե Մարդարը նշում է. «Քրդեր» հասկացությունը մենք օգտագործում ենք լայն իմաստով՝ նկատի ունենալով ինչպես մահմեդական քրդերին, այնպես էլ

⁸⁴ Քուրդ են արդյոք եզդիները. <http://arevelk.info/archives/240> (10.02.2010):

⁸⁵ Եզդիներ և քրդեր «Եզդի ծնվում ես», [http://www.panorama.am/am/society/2008/06/24/ezdiner/\(24.06.2008\):](http://www.panorama.am/am/society/2008/06/24/ezdiner/(24.06.2008):)

⁸⁶ Եզդիներ «Մենք քուրդ չենք» [http://www.alplus.am/am/social/2010/02/25/ezdiner\(25.02.2010\):](http://www.alplus.am/am/social/2010/02/25/ezdiner(25.02.2010):)

ղաքայինը՝ 4770 մարդ):⁹¹ 1970թ. մարդահամարի տվյալներով, այսինքն՝ շուրջ 10 տարվա ընթացքում նրանց թիվը Հայաստանում ավելացել է 11 859 մարդով կամ 1.4 անգամ՝ ընդհանուրը կազմելով 37 486 մարդ:⁹² Ըստ 1979 թ. մարդահամարի արդյունքների՝ քրդերի թիվն ավելացել է 13 336 մարդով կամ 1.3 անգամ՝ կազմելով 50 822 մարդ: Եթե համեմատենք 1959թ. և 1979թ. մարդահամարների արդյունքները, ապա 20 տարվա ընթացքում քուրդ բնակչությունը Հայաստանում աճել է 25 195 մարդով կամ շուրջ 2 անգամ: Ինչպես տեսնում ենք, այդ ժամանակահատվածում քուրդ բնակչության աննախադեպ աճ է արձանագրվել՝ պայմանավորված նրանց բնական աճի բարձր տեմպերով: Սակայն 1989թ. մարդահամարի արդյունքներով, նախորդի համեմատությամբ, նրանց թիվը կրճատվել է շուրջ տասն անգամ՝ կազմելով 4151 մարդ: Այդ հանգամանքը պայմանավորված է 1988 թ. Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ հայ-ադրբեջանական պատերազմով, որի հետևանքով Հայաստանի մահմեդական քրդերի գերակշռող մեծամասնությունը ադրբեջանցիների հետ կրոնական համերաշխության հողի վրա արտագաղթեց Հայաստանից: Հայաստանի Հանրապետության քուրդ մտավորականության խորհրդի վարչության նախագահ Ամարիկե Մարդարի կարծիքով արտագաղթած մահմեդական քրդերի թիվը հասնում է 10000 մարդու:⁹³ Այդ տվյալները որոշ հետազոտողների կարծիքով ուռճացված են, քանի որ, ըստ նրանց, Հայաստանից արտագաղթած մահմեդական

⁹¹ Итоги Всесоюзной переписи населения 1959г. Армянская ССР, М., 1963, с. 102.

⁹² Итоги Всесоюзной переписи населения 1970г. Национальный состав населения СССР, М., 1973, с. 303-305.

⁹³ Մարդար Ա., նշվ., աշխ., էջ 58:

քրդերի ընդհանուր թիվը հասնում էր գրեթե 6 հազարի:⁹⁴ Հայաստանից արտագաղթածները հիմնականում բնակություն հաստատեցին Ադրբեջանում, իսկ որոշ մասը՝ Ռուսաստանի Ղաշնությունում և Ղազախստանում, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության այլ երկրներում: 1989թ. մարդահամարի տվյալների համեմատությամբ՝ 2001թ. մարդահամարի արդյունքներով նրանց քանակը Հայաստանում կրճատվել է 2 632 մարդով՝ կազմելով 1 519 մարդ,⁹⁵ իսկ 2011թ. տվյալներով՝ ավելացել է 642 մարդով:⁹⁶

1989թ. և 2011թ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում Հայաստանից հեռացել է 16 668 եզդի: Նրանք հաստատվել են Ռուսաստանում՝ հատկապես Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Մոսկվայում և նրա շրջակայքում, Յարոսլավլի և այլ մարզերում, իսկ որոշ մասն էլ՝ Ուկրաինայում, Լեհաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Հոլանդիայում և այլ երկրներում:

Համեմատության համար նշենք, որ այդ տարիներին արտագաղթել են նաև հայերը: 1992-1994 թվականները համարվում են զանգվածային արտահոսքի ժամանակահատված՝ արտագաղթեց 610-620 հազ. մարդ կամ երկրի բնակչության գրեթե 1/5-ը,⁹⁷ իսկ 1996-2001 թվականներին դիտարկվել է արտաքին միգրացիայի ակտիվության նվազում (մոտ 250 հազ. մարդ կամ

⁹⁴ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները այսօր I, էջ 31:

⁹⁵ Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները, էջ 360:

⁹⁶ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքները, էջ 272, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

⁹⁷ Միգրացիան և մարդկային զարգացում. Հնարավորություններ և մարտահրավերներ, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2009, էջ 39:

երկրի բնակչության թվի մոտ 8%-ը):⁹⁸ 2001 թվականի մարդահամարի տվյալներով հայերը կազմել են 3145354 մարդ, ազգային փոքրամասնությունները՝ 67657 մարդ (2.11%), իսկ 2011թ. մարդահամարի տվյալներով՝ 3018854 մարդ, որից հայերը՝ 2961801 մարդ, ազգային փոքրամասնությունները՝ 57053 մարդ (1.9%):⁹⁹ Այսինքն՝ այդ տարիներին հայերի քանակը կրճատվել է 183553 մարդով, իսկ ազգային փոքրամասնություններինը՝ 10604 մարդով: Բերված վիճակագրական տվյալներից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանից արտագաղթել են ոչ միայն ազգային փոքրամասնությունները, այլև առավել մեծ թվով հայերը՝ պայմանավորված Հայաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական անկայուն իրավիճակով, մասնավորապես տնտեսական ճգնաժամով՝ և գործազրկության բարձր մակարդակով:¹⁰⁰ Բավական է նշել, որ 1990-1993թթ. ընթացքում ՀՀ-ում ՀՆԱ-ն նվազեց առնվազն ավելի քան երկու անգամ՝ 1993թ. կազմելով 1990-ական թվականների մակարդակի միայն 46.9%-ը, իսկ ճգնաժամի հետևանքով տնտեսության ոչ գյուղատնտեսական հատվածում կրճատվեց մոտ 645 հազ. աշխատատեղ:¹⁰¹ Նշված փաստերը հավասարապես տարածվում էին ինչպես հայերի, այնպես էլ ազգային փոքրամասնությունների վրա, և դա վկայում է նրանց

⁹⁸ Նույն տեղում, էջ 35:

⁹⁹ Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), էջ 362-363 և Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների, էջ 272, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

¹⁰⁰ Գալստյան Ս., Աշխատանքային միգրացիան հետխորհրդային Հայաստանի գյուղական բնակչության շրջանում, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2011, N 1-2, էջ 164:

¹⁰¹ Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Ե., 2003, էջ 25:

նույն սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Այդ մասին փաստում են նաև ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների ղեկավարները, որոնք նշել են Հայաստանից արտագաղթի մի շարք ընդհանուր և առանձնահատուկ պատճառներ՝ բացառելով ազգային հողի վրա խտրականության որևէ դեպք: Օրինակ՝ Հայաստանի ասորիների «Աթուր» ասոցիացիայի նախագահ Պ. Թամրազովը, անդրադառնալով 1992-1995թթ. ասորի բնակչության քանակի կրճատման պատճառներին, նշում է. «Դա հանրապետությունում ստեղծված տնտեսական աննպաստ իրավիճակի հետևանք էր: Արտագաղթում էր նաև Հայաստանի բնիկ բնակչությունը, քանի որ մարդիկ մեկնում էին վաստակի համար»:¹⁰² Իսկ այդ կապակցությամբ «Ռոսսիյա» ՀԿ-ի նախագահ Յու. Յակովենկոն արտահայտել է հետևյալ կարծիքը. «Ռուսները ապրում են նույն դժվարությունները, ինչ Հայաստանի հիմնական ազգաբնակչությունը. շատերը աղքատություն են հաղթահարում, մեծ մասամբ ունեն սոցիալ-տնտեսական բնույթի հոգսեր, բայց մենք դրանք կիսում ենք հայ ժողովրդի հետ»: Այսպիսով, Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների թվի կրճատման գործում էական ազդեցություն է ունեցել արտաքին միգրացիայի գործոնը՝ պայմանավորված Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակով:

¹⁰² Թամրազով Պ., Հայաստանի ասորիները, Հայաստանի ազգությունները, Ե., 2000, էջ 24:

3.2. ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների սեռատարիքային կազմը

Անդրադառնանք ազգային փոքրամասնությունների սեռատարիքային կազմին և արտաքին միգրացիայի հետևանքով դրանում տեղի ունեցած փոփոխություններին: Աղյուսակ 5-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ 2001թ. մարդահամարի տվյալներով ազգային փոքրամասնությունների շրջանում տղամարդկանց թիվը կազմել է 25 479 (42.2%), կանանցը՝ 34 913 (57.8%) մարդ, իսկ 2011թ. մարդահամարի տվյալներով՝ համապատասխանաբար 25 784 (45.2%) և 31 269 (54.8%) մարդ: Այդ խնդիրն առավել սուր է դրսևորվում ռուսների մեջ, որտեղ կանայք շուրջ երկուսուկես անգամ ավելի են տղամարդկանցից: Ըստ սեռային կազմի՝ նույն միտումներն են դիտարկվել նաև հույների և ուկրաինացիների մեջ: Այսպես, 2001թ. հույն բնակչությունը կազմել է 1 120 մարդ, որից 434-ը՝ տղամարդ, 686-ը՝ կին, 2011թ. նրանց քանակը կրճատվել է 220 մարդով և համապատասխանաբար կազմել 334 տղամարդ և 566 կին: 2001թ. Հայաստանում ապրել է 1 602 ուկրաինացի, որից 229-ը՝ տղամարդ և 1 373-ը՝ կին, 2011թ.՝ 1 176 մարդ, որից 207-ը տղամարդ, 969-ը՝ կին: Տղամարդկանց նկատմամբ կանանց գերակշռության խնդրի վրա իրենց ազդեցությունն են թողել նաև արտաքին միգրացիոն գործընթացները, մասնավորապես տղամարդկանց որոշ մասը աշխատանքի, կրթության, մշտական բնակության նպատակով գտնվել են հանրապետությունից դուրս:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս նաև հանգելու այն եզրակացության, որ արտաքին միգրացիան իր ազդեցությունն է ունեցել նաև հայաստա-

նաբնակ ազգային փոքրամասնությունների տարիքային կազմի վրա:

Աղյուսակ 5

ՀՀ մշտական բնակչության սեռային կազմը՝ ըստ 2001թ. և 2011թ. մարդահամարների արդյունքների¹⁰³ (մարդ)

Ազգային կազմը	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2001	2011	2001	2011	2001	2011
ՀՀ	2922464	3018854	1388237	1448052	1534227	1570802
Երից՝						
Հայ	2862072	2961801	1362758	1422268	1499314	1539533
Եզդի	34994	35308	17180	17757	17814	17551
Ռուս	13846	11191	3798	3815	10048	8096
Ասորի	3108	2679	1533	1357	1575	1412
Հույն	1120	900	434	334	686	566
Ուկրաինացի	1602	1176	229	207	1373	969
Քուրդ	1329	2162	641	1089	688	1073
Այլ	4393	2727	1664	1183	2729	567
Հրաժ. պատ.	-	100	-	47	-	977

Ըստ բնակչության տարիքային կազմի՝ նշված ազգային փոքրամասնությունների շրջանում կարող ենք առանձնացնել երկու կարևոր միտում.

1. Ազգային փոքրամասնություններ, որոնց ժողովրդագրական զարգացումները բնութագրվում են համեմատաբար բարձր ծնելիությամբ: Այդ հանգամանքը, մեր կարծիքով,

¹⁰³ Աղյուսակը կազմված է Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները) արդյունքների (էջ 365-367) և Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների (էջ 272) հիման վրա, [http:// www.armstat.am /am/?nid =337](http://www.armstat.am/am/?nid=337) (30.03.2015):

պայմանավորված է նրանց ավանդական հասարակական կառուցվածքի տարրերի պահպանմամբ, որը ապահովել է ծնելիության բարձր մակարդակ և նպաստել բազմանդամ ընտանիքի տիպի ապահովմանը:

2. Բնակչության ծերացման ցուցանիշներ ունեցող ազգային փոքրամասնություններ: Նրանք իրենց ժողովրդագրական ցուցանիշներով մոտ են հայերին, ունեն ծնելիության ցածր մակարդակ և համեմատաբար բարձր մահացություն: Բացի արտաքին միգրացիոն գործընթացների ազդեցությունից, ընտանիքի կառուցվածքը և ժողովրդագրական վարքագիծը ժամանակի ընթացքում ենթարկվում են մոդեռնիզացիոն գործընթացների, և փոխվում են նրանց ժողովրդագրական ցուցանիշները:

Ըստ աղյուսակ 6-ում ներկայացված տվյալների՝ առաջին խմբին կարող ենք դասել եզդիներին և քրդերին: Այսպես, ըստ 2001թ. մարդահամարի տվյալների, 0-19 տ. խումբը կազմել է 43.8%, իսկ 2011թ. տվյալներով՝ 34.7%: Քրդերի շրջանում այն համապատասխանաբար կազմել է 39.3% և 37.4%: Օրինակ՝ Արագածոտնի մարզի եզդիաբնակ Շամիրամ գյուղի ընտանիքները, ըստ գյուղապետարանի պատասխանատուների, միջին հաշվով բաղկացած են 3-4 երեխաներից:¹⁰⁴

¹⁰⁴ Ըստ գյուղապետարանի աշխատակազմի ղեկավարի՝ երեխաների թիվը ավելի շատ էր խորհրդային տարիներին՝ միջին հաշվով 5-6 երեխա, մինչդեռ վերջին տարիներին դիտարկվում են կրճատման միտումներ: Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2013թ.:

ՀՀ մշտական բնակչության տարիքային կազմը՝ ըստ 2001թ. և 2011թ. մարդահամարների արդյունքների¹⁰⁵(մարդ)

Ազգային կազմը	Ընդամենը		Տարիքային կազմը					
			0-9		10-19		20-29	
	2001	2011	2001	2011	2001	2011	2001	2011
ՀՀ	3213011	3018854	454603	387501	639054	41712	490148	564163
որից՝								
Հայ	3145354	2961801	443281	379155	626293	403272	479869	553964
Եզդի	40620	35308	8381	5984	9396	6236	6965	6796
Ռուս	14660	11911	1128	1160	1570	1088	1602	1669
Ասորի	3409	2769	476	371	704	374	435	514
Հույն	1176	900	89	79	174	71	123	112
Ուկրաինացի	1633	1176	43	65	69	55	270	101
Քուրդ	1519	2162	278	437	319	373	227	398
Այլ	4640	2727	387	238	529	229	745	586
Հրաժ. պատ.	-	100	-	12	-	9	-	24

Աղյուսակ 6-ի շարունակությունը

Ազգային կազմը	Տարիքային կազմը							
	30-39		40-49		50-59		60+	
	2001	2011	2001	2011	2001	2011	2001	2011
ՀՀ	448851	410426	487662	388024	233909	412290	458784	444738
որից՝								
Հայ	439444	402434	478751	380840	228531	405656	448645	436475
Եզդի	5937	5193	4684	4654	2050	3624	3207	2831
Ռուս	1670	1481	2260	1299	2036	1745	4394	3469
Ասորի	435	331	507	320	229	394	567	465
Հույն	123	121	167	100	132	121	364	296
Ուկրաինացի	270	131	275	167	296	199	536	458
Քուրդ	177	300	177	255	100	198	161	201
Այլ	535	422	841	381	535	339	910	357
Հրաժ.պատասխ.	-	13	-	17	-	14	-	11

¹⁰⁵ Աղյուսակը կազմված է ըստ Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները) արդյունքների (էջ 364-365) և Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների (էջ 272) հիման վրա, <http://www.armstat.am/am/?nid=337> (30.03.2015):

Եզդիների և քույրերի շրջանում ժողովրդագրական նշված ցուցանիշները պայմանավորված են ընտանիքում և համայնքում նրանց ավանդական հասարակական կառուցվածքի պահպանմամբ, որը ապահովում է ծնելիության համեմատաբար բարձր մակարդակ: Նրանց հասարակական կառուցվածքի գլխավոր առանձնահատկությունը դասային բնույթն է, որը ժողովրդագրական վարքագծին հաղորդում է ազգային ինքնատիպություն և սոցիալական ինքնակազմակերպման առանձնահատկություններ: Ժողովրդագրական վարքագծի այդ առանձնահատկությունները համարվում են նշված փոքրամասնությունների ավանդական մշակույթի անբաժանելի մասը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առավելագույն ծնելիությունը պայմանավորված է ինչպես իրենց մշակութային առանձնահատկություններով, այնպես էլ բազմազավակության դեպքում տնտեսության վարման մեջ երեխաների աշխատուժի օգտագործման հանգամանքով: Եզդիական և քրդական համայնքներում, որտեղ դեռևս ըստ տարիքային և սեռային պատկանելության պահպանվում է ընտանիքի անդամների միջև աշխատանքային գործառույթների բաժանում, երեխաները վաղ հասակից նույնպես ներգրավվում են աշխատանքային գործընթացում: Ըստ նրանց՝ տղան ունի հողի և ունեցվածքի ժառանգության իրավունք: Դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ բազմազավակության արժեքը ամրապնդված է նրանց մշակույթում:

Մինչդեռ պատկերը այլ է ռուսների, ասորիների, հույների և ուկրաինացիների շրջանում: Այսպես, 2011թ. մարդահամարի տվյալներով 11911 ռուսներից 0-9 տարիքային խումբը կազմել է 1160, իսկ 50 և բարձր տարիքային խումբը՝ 5214 մարդ, 2769 ասորիներից՝ 0-9 տարիքային խումբը՝ 371, իսկ 50 և բարձրը՝

859 մարդ, 900 հույներից 0-9 տարիքային խումբը՝ 79, իսկ 50 և բարձր՝ 416 մարդ, 1 176 ուկրաինացիներից 0-9 տարիքային խումբը՝ 65, իսկ 50 և բարձր՝ 657 մարդ: Այսինքն՝ նրանցում կրճատվել է ծնելիությունը, և այն չի ապահովում նույնիսկ բնակչության պարզ վերարտադրություն: Նշված ազգային փոքրամասնությունների մոտ նման իրավիճակը պայմանավորված է նաև հանրապետությունից երիտասարդ և միջին սերնդի արտագաղթով: Օրինակ՝ Կոտայքի մարզի նախկին հունաբնակ Հանքավանում, ըստ գյուղապետի, համայնքն ունի 138 բնակիչ, որից միայն 14 ընտանիքն է հույն: Նրանք բոլորը 60-ից բարձր տարիքի ամուսիններ են կամ միայնակ տարեցներ, որոնց ընտանիքների երիտասարդ անդամներն արտագաղթել են Հայաստանից: Համայնքի փակ բնակարանների շուրջ 30%-ը պատկանում է հույներին, որոնք ներկայումս մշտական բնակություն են հաստատել Հունաստանում, սակայն գյուղում չեն վաճառել բնակարանը: Որոշ ընտանիքներ նույնիսկ վերանորոգել են իրենց հայրական տունը և ամառային արձակուրդներին վերադառնում են: Գյուղում մնացածները ֆինանսական օգնություն են ստանում դրսում գտնվող իրենց երեխաներից և հարազատներից:¹⁰⁶ Նույն պատկերն է նաև Լոռու մարզի Յաղդան գյուղում, որտեղ 1987թ. բնակվում էր 900 հույն, 2001թ. մարդահամարի արդյունքներով նրանց թիվը կրճատվել էր 546 մարդով, իսկ 2013թ.՝ մոտ 90 մարդով, որոնք հիմնականում տարեցներ են:¹⁰⁷ Ներկայումս հույն բնակչության հիմնական մասը կենսաթոշակառուներ են, իսկ վերարտադրողական տարիքի մարդկանց արտագաղթի հետևանքով

¹⁰⁶ Գալստյան Մ., ԴԱՆ, Հանքավան, 2013թ.:

¹⁰⁷ Գալստյան Մ., ԴԱՆ, Յաղդան, 2014թ.:

ծնելիությունը գրեթե ամբողջովին դադարել է: Երիտասարդների արտագաղթի հետևանքով Հայաստանում կտրուկ ավելացել է ռուս տարեցների թիվը: Օրինակ, Պրիվոլնոյե գյուղում նախկինում ապրում էր ավելի քան 800 ռուս, իսկ XX դարի վերջին՝ շուրջ 100 մարդ կամ 32 ընտանիք, իսկ 2013թ.¹⁰⁸ մոտ 1/3-ը¹⁰⁸: Նույն պատկերն է նաև Լոռու մարզի Ուրասար, Մեղովկա, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Ելենովկա, Սեմյոնովկա նախկին ռուսաբնակ գյուղերում: Ռուս բնակչությունը հիմնականում արտագաղթել է Ռուսաստանի Դաշնություն: Արտաքին տեղաշարժերի պատճառով կրճատվել է նաև Արզնի համայնքի ասորիների քանակը: Ըստ համայնքի ղեկավարի տվյալների՝ 2012թ. դրությամբ այն ուներ 1200 տնային տնտեսություն, որից միայն 680 տնտեսությունն է ապրում գյուղում, մնացածը փակ է, և նրանց տերերը մեկնել են հանրապետությունից: Համայնքի առկա բնակչությունը կազմել է 2685 մարդ, որից ասորիներ՝ 1150 մարդ, եզդիներ՝ մոտ 120 մարդ, մնացածը հայեր են, կան նաև մի քանի ընտանիք հույներ և ռուսներ: 2012թ. ծնվել է 22 երեխա, իսկ մահացել 18 մարդ¹⁰⁹:

3.3. ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների տեղաբաշխման առանձնահատկությունները

Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների շրջանում տարբեր կերպ էին ընթանում նաև քաղաքայնացման գործընթացները: Արդեն իսկ սկսած XX դարի երկրորդ կեսից և XXI դարի սկզբից՝ ինչպես հայերի, այնպես է որոշ ազգային

¹⁰⁸ Գալստյան Մ., ԴԱՆ, Պրիվոլնոյե, 2014թ.:

¹⁰⁹ Գալստյան Մ., ԴԱՆ, Հանքավան, 2013թ.:

փոքրամասնությունների շրջանում քաղաքաբնակները կազմում էին բարձր տոկոս: Դրա հետ միաժամանակ հատկապես եզդիների և քրդերի շրջանում ավանդական հասարակական կառուցվածքի և արժեքների պահպանումն իր ազդեցությունն է թողնում նրանց տարածքային շարժունության ցուցանիշների վրա: Այնուհանդերձ, ոչ շատ բարձր տոկոսով, սակայն նրանց մեջ նույնպես դիտարկվել է տեղաշարժ դեպի արդյունաբերական խոշոր կենտրոններ, հատկապես բարձրագույն կրթություն և բարձր որակավորում ունեցող մասնագետների շրջանում: Քաղաքային բնակչության կառուցվածքում այդ ազգային փոքրամասնությունների մեջ ավանդական միջանձնային կապերն իրենց ազդեցությունն են թողնում նրանց ժողովրդագրական վարքագծի և արժեքային կողմնորոշումների վրա: Քաղաքայնացման գործընթացը ազգային փոքրամասնությունների մեջ որոշակի փոփոխություններ է առաջ բերում նրանց սոցիալ-մասնագիտական, ժողովրդագրական կառուցվածքում, կենսաձևում, մշակույթում: Աղյուսակ 7-ի տվյալները փաստում են, որ եզդիները, քրդերը և ասորիները հիմնականում գյուղաբնակներ են:

Օրինակ, ըստ 2001թ. մարդահամարի տվյալների՝ գյուղաբնակ էր եզդիների 81.7%-ը, 2011թ.՝ 84.6%-ը, իսկ քրդերը համապատասխանաբար կազմել են 79.3% և 87.1%: Հայաստանաբնակ ասորիների գերակշռող մեծամասնությունը (2001թ.՝ 84.6%, իսկ 2011թ.՝ 82.7%) նույնպես բնակվում է գյուղական համայնքներում:

ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության ազգային կազմը
ըստ 2001թ. և 2011թ. մարդահամարների արդյունքների¹¹⁰
(մարդ)

Ազգային կազմը	Ընդամենը		Քաղաքային		Գյուղական	
	2001	2011	2001	2011	2001	2011
ՀՀ	3213011	3018854	2066153	1911297	1146858	1107567
արից						
Հայ	3145354	2961801	2041622	1892991	1103732	1068810
Եզդի	40620	35308	7413	5443	33207	29865
Ռուս	14660	11191	10489	8095	4171	3816
Ասորի	3409	2769	524	481	2885	2288
Հուլն	1176	900	853	700	323	200
Ուկրաինացի	1633	1176	1386	957	247	219
Քուրդ	1519	2162	315	264	1204	1898
Այլ	4640	2727	3551	2280	1089	447
Հրաժ. պատասխ.	-	100	-	76	-	24

Համեմատության համար նշենք, որ քաղաքայնացման բարձր ցուցանիշներ են առկա հայաստանաբնակ մյուս ազգային փոքրամասնությունների շրջանում. 2011թ. մարդահամարի տվյալներով՝ քաղաքաբնակ ռուսները կազմել են 72.3%, հույները՝ 77.8%, ուկրաինացիները՝ 81.4%:

Որոշակի առանձնահատկություններ են դրսևորվում նաև ազգային փոքրամասնությունների սոցիալ-մասնագիտական կազմում: Ընդհանուր օրինաչափությունն այն է, որ արդյունաբերական ճյուղերը, կապված արդյունաբերական և հետաբ-

¹¹⁰ Աղյուսակը կազմված է Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները) (էջ 362-363) և Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների (էջ 273-274) հիման վրա, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

դյունաբերական տեխնոլոգիաների զարգացման հետ, հատկապես յուրացվում են քաղաքաբնակ ազգային փոքրամասնությունների կողմից, որոնք հիմնականում ընդգրկված են դեկավարման, մշակույթի, կրթության և սպասարկման ոլորտներում: Օրինակ՝ Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Երևանում, հիմնականում կենտրոնացված են արդյունաբերական, մշակութային, գիտության, կրթության, առողջապահության, սպասարկման ոլորտները, որոնցում ընդգրկված են համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող ազգային փոքրամասնությունները: Ի տարբերություն նրանց՝ եզդիները և քրդերը հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և երկրագործությամբ, և նրանց մեջ ցածր տոկոս են կազմում բարձր որակավորում ունեցող մասնագետները և ծառայողները: Եթե նախկինում գյուղաբնակ եզդիների և քրդերի մեջ բացարձակ գերակշռություն ուներ անասնապահների, դաշտավարների, այգեգործների սոցիալ-մասնագիտական խումբը, ապա ներկայումս գյուղատնտեսության ոլորտում զբաղված տղամարդկանց թիվը նույնպես կրճատվել է, քանի որ նրանց մեծ մասը մեկնում է արտագնա աշխատանքի: Այդ առթիվ եզդիաբնակ Ակնալիճ համայնքի բնակիչներից մեկը նշեց, որ տարիներ շարունակ նրա ամուսինը և երկու տղան զբաղվել են անասնապահությամբ, բայց վերջին երկու տարին մեկնում են արտագնա աշխատանքի, քանի որ դրանով զբաղվելը եկամտաբեր չէ. «Առավտոից մինչև իրիկուն անասունների հետևից էին վազում, բայց նույնիսկ կերի ծախսերը չէին կարողանում հանել, դրա համար էլ որոշեցին անասուններին վերացնել: Գյուղում նույնիսկ նորմալ ոռոգման և խմելու ջուր չունենք: Տեգորս տղան Նովոսիբիրսկում էր ապրում, կանչեց, գնացել են այնտեղ՝ առնտուր են անում: Հիմա գյուղի երիտա-

սարդները գյուղատնտեսությամբ հաճույքով չեն զբաղվում, նախընտրում են գնալ Ռուսաստան աշխատանքի: Անասուն պահելը էլ եկամուտ չի բերում: Եզդի, կին, 50տ.»¹¹¹ Արագածոտնի մարզի քրդաբնակ Ջամշու համայնքն ունի 40 տնային տնտեսություն, որի մշտական բնակչությունը կազմում է 150 մարդ, որոնք հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և դաշտավարությամբ: Համայնքի ղեկավարի կարծիքով տնտեսության այդ ոլորտները եկամտաբերության առումով իրենց չեն արդարացնում, որի պատճառով ամեն տարի մոտ 30 մարդ մեկնում է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի, իսկ վերջին 10 տարիներին հանրապետությունից դուրս մշտական բնակության է մեկնել մոտ 50 մարդ:¹¹² Այսպիսով, ազգային փոքրամասնությունների սոցիալական կառուցվածքը տարբերվում է քաղաքային և գյուղական բնակչության քանակով, դրանում տարբեր սոցիալական խմբերի առկայությամբ, որոնք միմյանցից տարբերվում են իրենց սոցիալ-մասնագիտական որակավորմամբ, ունեցվածքային վիճակով և ճյուղային զբաղվածության ոլորտներով: Այդ գործընթացների վրա իրենց ազդեցությունն են թողնում ազգային փոքրամասնությունների զարգացման սոցիալ-տնտեսական մակարդակը, ավանդական մշակութային վարքագիծը: Վերջինիս են առնչվում նաև հասարակական կյանքում նրանց ցուցաբերած ակտիվությունը և տնտեսական վարքագիծը:

Անդրադառնալով Հայաստանում ազգային փոքրամասնությունների ըստ մարզերի տեղաբաշխվածությանը: Ըստ աղյուսակ 8-ում բերված 2001թ. և 2011թ. մարդահամարների տվյալ-

¹¹¹ Գալստյան Մ., ԴԱՆ, Ակնալիճ, 2014թ.:

¹¹² Գալստյան Մ., ԴԱՆ, Ջամշու, 2014թ.:

ների՝ եզդիաբնակ մարզերում (նրանք հոծ խմբերով բնակվում են Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի մարզերում, իսկ ցրված՝ Երևանում) նրանց թիվը կրճատվել է: 2001թ. տվյալներով Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերում ոչ մի եզդի չի բնակվել: Մինչդեռ վերջին մարդահամարի տվյալներով նշված մարզերում բնակություն են հաստատել համապատասխանաբար 57, 21 և 8 մարդ: Ռուսների տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է Երևանում, Լոռու մարզի Տաշիր, Ստեփանավան, Վանաձոր և Շիրակի մարզի Գյումրի քաղաքներում, իսկ գյուղերում՝ հոծ ձևով Լոռու մարզի Լեւոնտովո, Ֆիոլետովո, Կրուգլայա Շիշկա, Մեդովկա, Պրիվեկնոյե, Միխայելովկա, Պուշկինո, Բովաձոր, Ուրասար համայնքներում: Վերջին երկու մարդահամարի արդյունքներով ռուսների թիվը արտաքին միգրացիայի պատճառով մի շարք մարզերում կրճատվել է, բայց ներքին տեղաշարժերի հաշվին, օրինակ, Արագածոտնի, Արարատի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում դիտարկվել են աճման միտումներ:

Ասորիները ցրված բնակվում են Երևանում, Արարատի մարզի՝ Արտաշատ, Կոտայքի մարզի՝ Աբովյան քաղաքներում, իսկ հոծ ձևով՝ Դիմիտրով, Վերին Դվին, Նոր Արտազերս, Արզնի համայնքներում: Ի տարբերություն 2001թ. մարդահամարի տվյալների՝ 2011թվականին փոքր թվով ասորիներ բնակվում են նաև Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերում:

Հույները հիմնականում բնակվում են Երևանում և Լոռու մարզի Ալավերդի, Շամլուղ, Ախթալա քաղաքներում, Յաղդան, Կողես գյուղական համայնքներում, Կոտայքի մարզի Հանքավան գյուղում, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

ՀՀ մշտական բնակչության ազգային կազմը՝ ըստ ՀՀ մարզերի
(ՀՀ 2001թ. և 2011թ. մարդահամարների
արդյունքներով)¹¹³ (մարդ)

Ազգային կազմը	Ընդամենը		Ք. Երևան		Արագածոտն		Արարատ	
	2001	2011	2001	2011	2001	2011	2001	2011
ՀՀ	3213011	3018854	1103488	1060138	138301	132925	272016	260367
որից								
Հայ	3145354	2961801	1088383	1048940	130678	125552	263357	253125
Եզդի	4620	35308	4733	3268	6405	5474	5940	4975
Ռուս	14660	11911	6684	4940	179	180	418	436
Ասորի	3409	2769	239	226	-	11	1926	1626
Հույն	1176	900	308	300	-	13	-	16
Ուկրաինացի	1633	1176	876	603	-	20	70	63
Քուրդ	1519	2162	-	93	846	1616	-	26
Այլ	4640	2727	2259	1714	193	59	305	92
Հրաժ. պատ.	-	100	-	54	-	0	-	9

Աղյուսակ 8-ի շարունակություն

Ազգային կազմը	Արմավիր		Գեղարքունիք		Լոռի		Կոտայք	
	2001	2011	2001	2011	2001	2011	2001	2011
ՀՀ	276223	265770	237650	235075	286808	235537	266023	249508
որից								
Հայ	257363	247852	236804	234474	28471	231066	684	590
Եզդի	17665	16906	-	57	793	652	950	676
Ռուս	480	426	430	328	3882	3152	-	70
Ասորի	242	178	-	15	-	10	-	93
Հույն	-	22	-	15	655	360	229	94
Ուկրաինացի	-	82	-	43	-	91	486	153
Քուրդ	128	157	116	87	-	11	-	2
Այլ	356	137	300	55	607	183	266023	249508
Հրաժ.պատ.	-	9	-	1	-	12	4097	3211

¹¹³ Աղյուսակը կազմված է Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), Եր., 2003, և Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների (էջ 272) հիման վրա, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)) (էջ 272):

Ազգային կազմը	Շիրակ		Սյունիք		Վայոց Ձոր		Տավուշ	
	2001	2011	2001	2011	2001	2011	2001	2011
ՀՀ	283389	251941	152684	141771	55977	52324	134376	128609
որից								
Հայ	280594	279742	152212	141353	55877	52187	133587	128001
Եզդի	974	727	-	21	-	8	-	9
Ռուս	1048	1100	253	259	71	77	531	423
Ասորի	-	6	-	8	-	5	-	9
Հույն	-	50	-	10	-	3	-	41
Ուկրաինացի	222	113	41	26	-	20	-	22
Քուրդ	-	36	-	5	-	2	-	35
Այլ	551	161	178	85	49	19	258	69
Հրաժ. պատ.	-	6	-	4	-	3	-	0

Ուկրաինացիների կեսից ավելին բնակվում է Երևանում: Նրանց քանակը (մինչև 100 մարդ) համեմատաբար մեծ է Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Սյունիքի, Տավուշի մարզերում:

Քրդերը Հայաստանում միակ ազգային փոքրամասնությունն են, որոնց թիվը վերջին երկու մարդահամարի տվյալներով աճել է (643 մարդ)՝ պայմանավորված ոչ միայն նրանց ծնելիության բարձր ցուցանիշներով, այլև եզդիների որոշ մասի մոտ ավելացել է քրդական ինքնություն ունեցողների թիվը: Արագածոտնի մարզում նրանց թիվը ավելացել է շուրջ 2 անգամ (2001թ.՝ 846 մարդ, 2011թ.՝ 1616 մարդ), Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում՝ համապատասխանաբար 29 մարդով: Ներքին տեղաշարժերի պատճառով քրդերի քանակը կրճատվել է Կոտայքի մարզում 135 մարդով, իսկ Արարատի, Շիրակի, Տավուշի մարզերում՝ մինչև 36 մարդով: Այսպիսով, հայաստանաբնակ ազգային փոքրամասնությունների թիվը

(բացառությամբ քրդերի), սկսած 1990-ական թվականներից մինչև մեր օրերը, արտաքին միգրացիայի և ծնելիության պատճառով հիմնականում կրճատվել է: Վերջինս իր բացասական ազդեցությունն է թողել նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների սեռատարիքային կազմի անհամամասնության, բնակավայրի տիպի և բաշխվածության ցուցանիշների վրա:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Միգրանտ ընտանիքների անդամների
թիվը և կառուցվածքը

Անդրադառնանք այն հարցին, թե ինչ կազմ և ինչ կառուցվածք ունի միգրանտների ընտանիքը, նաև ընտանիքի դերին՝ միգրացիոն վարքագծի ձևավորման գործում: Պայմանավորված ազգային փոքրամասնությունների ընտանիքի անդամների թվով և կառուցվածքով՝ նրանց միգրացիոն վարքագծի ձևավորման խնդիրն ունի որոշակի առանձնահատկություններ: Աղյուսակ 9-ում ներկայացված է հետազոտությանը մասնակցած 382 ընտանիքներից 162-ում միգրանտ ունեցող ընտանիքների անդամների թիվը:

Ըստ աղյուսակի տվյալների՝ 1-2 անձից բաղկացած ընտանիքները տարածված են ոռոսների, այնուհետև ուկրաինացիների շրջանում: Եզդիների մոտ այդ ցուցանիշը կազմում է 6.2% (51.2%-ից), որ պայմանավորված է նաև ծնելիության ցուցանիշի անկմամբ: Երեք անձից բաղկացած ընտանիքները նույնպես քիչ են ազգային փոքրամասնությունների շրջանում. դրանց տեսակարար կշիռը կազմում է 7.4%: Հարցման արդյունքներով եզդիների (41.3%), ասորիների (11.8%) և քրդերի (6.7%) շրջանում գերակշռում են 4-7 անձից բաղկացած ընտանիքները:

Միգրանտների ընտանիքների
անդամների թվի (%-ով, n = 162)¹¹⁴

Ընտանիքի անդամների թիվը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
1 մարդ	2.5	7.4	0.0	1.2	0.0	0.0	11.1
2 մարդ	3.7	3.1	0.0	0.6	0.6	3.1	10.5
3 մարդ	1.2	2.5	0.0	0.6	1.2	1.9	7.4
4 մարդ	15.4	2.5	3.1	2.5	0.6	0.0	24.1
5 մարդ	8.0	1.2	3.7	1.2	4.9	0.0	19.1
6 մարդ	8.0	0.0	1.9	0.6	0.6	0.0	11.1
7 մարդ	9.9	0.0	3.1	0.0	0.6	0.0	13.6
8 մարդ	2.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.4
Ընդամենը	51.2	16.7	11.7	6.8	8.6	5.0	100.0

Ինչ վերաբերում է հույներին, ապա 1-2 անձից բաղկացած ընտանիքները կազմել են 1,8%, իսկ 3-6 անձից ընտանիքները՝ 4.9%: Հետազոտված եզդիների ընտանիքների անդամների միջին թիվը կազմել է 5.1 մարդ, ռուսներինը՝ 2.3, ասորիներինը՝ 4.9, հույներինը՝ 3.1, քուրդներինը՝ 4.7 մարդ, իսկ ուկրաինացիներինը՝ 2 մարդ: Ազգային փոքրամասնությունները տարբերվում են նաև ընտանիքի կառուցվածքային առանձնահատկություններով: Աղյուսակ 10-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ միգրանտների ընտանիքների 64.8%-ն ունի միասերունդ կամ երկսերունդ պարզ կառուցվածք, որից 35.2%-ը նուկլեար (ամուսին, կին երեխաներ) են, 11.7%-ը՝ առանց երեխաների (ամուսին, կին), 9.9%-ը՝ միայնակներ են, իսկ 8.0 %-ը՝ ոչ լրիվ կազմ ունեցող (մայր երեխաներ, տատ թոռներ և այլն) ընտանիքներ: Ըստ ընտրանքում ընդգրկված հարցվածների տոկոս-

¹¹⁴ n-ով նշվում է հարցին պատասխանողների թիվը:

սային հարաբերության՝ միայնակները և ամուսնուց ու կնոջից բաղկացած ընտանիքները համեմատաբար բարձր տոկոս են կազմում քաղաքաբնակ ռուսների, հույների և ուկրաինացիների շրջանում, որը հիմնականում պայմանավորված է Հայաստանից նրանց երեխաների արտագաղթի հանգամանքով: Միգրանտների 35.2%-ի ընտանիքներն ունեն ուղղահայաց եռասերունդ կառուցվածք, որից 26.5%-ը բաղկացած է ամուսնուց, կնոջից, երեխաներից, ամուսնու կամ կնոջ ծնողներից, իսկ 8.7%-ը՝ ամուսնուց, կնոջից, երեխաներից, ամուսնու կամ կնոջ ծնողներից, չամուսնացած եղբորից կամ քրոջից:

Աղյուսակ 10

Միգրանտների ընտանիքի կառուցվածքը (%-ով, n = 162)

Ընտանիքի կառուցվածքը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրա- ինացի	Ընդա- մենը
Միայնակ	1.2	7.4	0.0	1.2	0.0	0.0	9.9
Ամուսին, կին	4.9	2.5	0.0	1.2	0.6	2.5	11.7
Ամուսին, կին, երե- խաներ	17.3	1.2	8.6	1.9	3.7	2.5	35.2
Ամուսին, կին, երե- խաներ, ամուս- նու/կնոջ ծնողներ	18.5	2.5	1.2	0.6	3.7	0.0	26.5
Ամուսին, կին, երե- խաներ, ամուս- նու/կնոջ ծնողներ, չամուսնացած եղբայր/քույր	6.2	0.6	1.2	0.0	0.6	0.0	8.7
Մայր, երեխաներ, տատ, պապ, թոռներ - և այլն	3.1	2.5	0.6	1.9	0.0	0.0	8.0
Ընդամենը	51.2	16.7	11.7	6.8	8.6	5.0	100.0

Ըստ աղյուսակ 10-ի տվյալների՝ եռասերունդ ընտանիքները տարածված են եզդիների շրջանում, որի տեսակարար կշիռը կազմում է 24.7%, այնուհետև քրդերի մոտ՝ 4.3%՝ պայմանավորված ոչ միայն ընտանիքի վերաբերյալ նրանց ունեցած ավանդական պատկերացումներով, այլև 1990-ական թվականներից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական պայմաններով, նոր բնակարաններ կառուցելու կամ ձեռք բերելու դժվարություններով: Եզդիների և քրդերի եռասերունդ ընտանիքները հատկապես պահպանվում են գյուղական բնակավայրերում, որտեղ մեկ հարկի տակ կենցաղավարում են երկու և երբեմն ավելի եղբայրների ընտանիքներ: Այդ ընտանիքներում տարբեր սերունդների միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց մշակութային ավանդույթներով՝ ավագության կարգով, որը գործում է ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց շրջանում: Ընտանիքի գլխավորը համարվում է հայրը կամ նրա բացակայության դեպքում՝ ավագ որդին, որը վերահսկում է ընտանիքի տնտեսական կյանքը և ներընտանեկան հարաբերությունները: Նրանց ներընտանեկան հարաբերություններն ունեն պահպանողական բնույթ: Հետազոտության արդյունքներով քաղաքային բնակավայրերում, հատկապես Երևանում, նրանց մոտ գերակշռում են երկսերունդ ընտանիքները, և գոյություն ունի որոշակի շեղում ներընտանեկան հարաբերություններում ընդունված նորմերից:

4.2. Միգրանտների թիվը

Հետազոտված 382 ընտանիքներից 162-ը ներգրավված են արտաքին միգրացիոն գործընթացներում: Ըստ ազգային պատկանելության՝ նրանց 51.2%-ը եզդիներ են (83 ընտանիք),

16.7%-ը՝ ռուսներ (27 ընտանիք), 11.7%-ը՝ ասորիներ (19 ընտանիք), 6.8%-ը՝ հույներ (11 ընտանիք), 8.6%-ը՝ քրդեր (14 ընտանիք), իսկ 5.0%-ը՝ ուկրաինացիներ (8 ընտանիք):

Աղյուսակ 11

Միգրացիայում ներգրավված ընտանիքների թիվը
(%-ով, n=162)

Ազգությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Ընդամենը	51.2	16.7	11.7	6.8	8.6	5.0	100.0

Հետազոտված ընտանիքներում միգրանտների թիվը կազմել է 254 մարդ, ընդ որում եզդիների մոտ նրանց միջին թիվը կազմել է 1.7, ռուսներինը՝ 1.4, ասորիներինը՝ 1.8, հույներինը՝ 2, քրդերինը՝ 1.2, իսկ ուկրաինացիներինը՝ 1 մարդ: Ազգային փոքրամասնությունների շրջանում առկա են ընտանիքներ, որոնց 5 անդամները մինչև մեկ տարի և ավելի գտնվում են հանրապետությունից դուրս: Գերակշռում են մեկ և երկու միգրանտ ունեցող ընտանիքները, որոնց տեսակարար կշիռը կազմել է 84%, երեք միգրանտ ունեցողներինը՝ 8%, իսկ չորս միգրանտ ունեցողներինը՝ 3.7%: Ըստ աղյուսակ 12-ի տվյալների՝ ամենաշատ միգրանտների թիվը գրանցվել է եզդիների մոտ՝ մեկ միգրանտ ունեցողները կազմել են 32.1%, երկու միգրանտ ունեցողները՝ 8.6%, երեք միգրանտ ունեցողները՝ 4.9%, չորս միգրանտ ունեցողները՝ 3.1%, իսկ հինգ միգրանտ ունեցողները՝ 2.5%: Նշենք, որ չորս միգրանտ ունի հույն ընտանիքների միայն 1.2 %-ը, իսկ հինգ միգրանտ՝ ասորիների ընտանիքների նույնպես 1.2%-ը: Հայաստանում միգրանտների նման

բարձր ցուցանիշ ունեցող ընտանիքներում մնացել են միայն տարեց ծնողները, իսկ մյուսներն արտագաղթել են:

Աղյուսակ 12

Ընտանիքում միգրանտների թիվը (%-ով, n=254)

Միգրանտների թիվը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
1 մարդ	32.1	10.5	6.2	3.7	6.8	4.3	63.6
2 մարդ	8.6	5.6	3.7	0.6	1.9	0.0	20.4
3 մարդ	4.9	0.6	0.6	1.2	0.0	0.6	8.0
4 մարդ	3.1	0.0	0.0	1.2	0.0	0.0	4.3
5 մարդ	2.5	0.0	1.2	0.0	0.0	0.0	3.7
Ընդամենը	51.2	16.7	11.8	6.7	8.7	4.9	100.0

«Ընտանիքս բաղկացած է 7 անձից, ունեմ 5 աղջիկ, 2 տղա: Հիմա չորս աղջիկս և մեկ տղաս իրենց երեխաներով մշտական բնակվում են Ռուսաստանում: Այստեղ մնացել է մեկ տղաս, որի տղան՝ թոռս, արդեն մի քանի տարի է այնտեղ է՝ մերոնց մոտ, երևի նա էլ կմնա, էլ չի գա Հայաստան» (եզդի, տղամարդ, 80տ.):¹¹⁵

4.3. Միգրանտների սեռատարիքային և կրթական բնութագիրը

Հետազոտված ազգային փոքրամասնությունների մոտ միգրանտ կանանց քանակը գերազանցում է տղամարդկանց: Սա դեռևս չի նշանակում, թե տղամարդկանց հետ համեմատած՝

¹¹⁵ Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2013թ.:

նրանց միգրացիոն ակտիվության գործակիցն ավելի բարձր է: Այդ հանգամանքն առաջին հերթին պայմանավորված են նախօրոք տղամարդկանց արտագաղթի հետևանքով ձևավորված սեռային կազմի անհամամասնությամբ և հետագայում կանանց՝ իրենց ընտանիքներին վերամիավորվելու խնդրով: Ըստ արդյունակ 13-ի տվյալների՝ եզդի կին միգրանտները 10.2%-ով, ռուս կանայք՝ 1.2%-ով, ասորի կանայք՝ 9.6%-ով, հույն կանայք՝ 29.4%-ով, քուրդ կանայք՝ 5.2%-ով, իսկ ուկրաինացի կանայք 61.0%-ով ավելի են տղամարդկանցից:

Արդյունակ 13

Միգրանտների սեռային կազմը (%-ով, n=254)

Սեռը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի
Արական	44.9	49.4	45.2	35.3	47.4	19.5
Իգական	55.1	50.6	54.8	64.7	52.6	80.5
Ընդամենը	100	100	100	100	100	100

Հետազոտության արդյունքներով միգրացիոն որոշ ակտիվություն դրսևորվել է միայն ռուս (ոչ հնաբնակների), ուկրաինացի և հույն կանանց մոտ, իսկ մնացած դեպքերում նրանք Հայաստանից մեկնել են ընտանիքներով՝ ամուսինների հետ: Իսկ ինչ վերաբերում է աշխատանքային միգրացիայի խնդրին, ապա բացառությամբ եզդի և քուրդ կանանց, մյուսները երբեմն հանրապետությունից դուրս ընդգրկվում են առևտրի և սպասարկման ոլորտներում, զբաղվում են տարեցների և երեխաների խնամքով: Հատկապես եզդի և քուրդ կանայք, ելնելով ազգային-մշակութային նորմերից, հասարակական, ընտանեկան կյանքում ունեցած իրենց կարգավիճակից և դերերից, առանց ամուսինների չեն մասնակցում միգրացիոն գործընթացներին:

Նրանք հիմնականում մնում են տանը, զբաղվում են տնային հոգսերով, երեխաների դաստիարակությամբ, իսկ տղամարդկանց բացակայության դեպքում նրանց ընտանիքներին օգնում են միգրանտի հարազատները:

Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ բոլոր ազգային փոքրամասնությունների մոտ գերակշռում են երիտասարդ (16-29տ.), այնուհետև միջին տարիքի (30-49տ.) միգրանտները, այսինքն՝ հանրապետությունից այլ երկրներ մշտական բնակության մեկնած կամ աշխատանքի մեկնած միգրանտները ակտիվ աշխատունակ և վերարտադրողական տարիքի մարդիկ են: Միայն ռուսների մոտ է, որ ավագ սերնդի միգրանտները կազմել են 4.3%, իսկ մյուս ազգային փոքրամասնությունների շրջանում այն բացակայում է (տե՛ս աղյուսակ 14):

Աղյուսակ 14

Միգրանտների տարիքային կազմը (%-ով, n=254)

Տարիքը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի
16-29	66.2	91.3	83.3	87.5	66.6	66.7
30-49	33.8	4.4	16.7	12.5	33.4	33.3
50 և ավելի	0.0	4.3	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Անդրադառնանք նաև միգրանտների կրթական մակարդակին: Հետազոտված ազգային փոքրամասնությունների քանակում գերակշիռ մեծամասնություն է կազմել միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը (39.4%), որին հաջորդում են թերի միջնակարգ (28.7%) և բարձրագույն (14.2%), այնուհետև տարրական կրթություն ունեցողները (3.1%): Ազգային փոքրամասնությունների 1.7%-ը նշել է, որ

կրթություն չի ստացել: Առանձին վերցրած՝ ազգային փոքրամասնությունների կրթական մակարդակում գոյություն ունեն որոշ առանձնահատկություններ: Այսպես, եզդի միգրանտների 3.0%-ը և քուրդ միգրանտների 2.1%-ը կրթություն չեն ստացել, իսկ ընդհանուր տարրական կրթություն ունեցողները կազմել են համապատասխանաբար 6.0% և 5.1%: Համեմատության համար նշենք, որ 2011թ. մարդահամարի տվյալներով եզդիների 17.0%-ը, իսկ քրդերի 14.2%-ը չեն ունեցել տարրական կրթություն, իսկ ընդհանուր տարրական կրթություն ունեցողները եզդիների մեջ կազմել են 31.8%, իսկ քրդերի մեջ՝ 23.3%:¹¹⁶

Աղյուսակ 15

Միգրանտների կրթական մակարդակը (%-ով, n=254)

Կրթությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի
Տարրական	6.0	0.0	0.0	0.0	5.1	0.0
Թերի միջնակարգ	42.1	7.7	20.0	10.0	10.4	10.0
Միջնակարգ	39.1	41.0	51.4	30.0	47.1	40.0
Միջնակարգ մասնագիտական	6.8	15.4	14.3	35.0	23.5	10.0
Բարձրագույն	3.0	33.3	14.3	25.0	11.8	40.0
Գիտական աստիճան	0.0	2.6	0.0	0.0	0.0	0.0
Կրթություն չունեն	3.0	0.0	0.0	0.0	2.1	0.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ինչպես կարելի է դատել բերված վիճակագրական տվյալներից, նրանք կրթությունը դեռևս չեն դասում խիստ կարևոր արժեքների համակարգին՝ պայմանավորված համայնքի էթնո-

¹¹⁶ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքները, էջ 272, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

սոցիալ կառուցվածքում պահպանված ավանդական նորմերով: Հատկապես աղջիկների վաղամուսնական սովորույթի հետևանքով նրանք բարձրագույն կրթություն չեն ստանում, իսկ միջնակարգ կրթությունը համարվում է բավարար: Քրդերի և եզդիների մեջ առկա է այն մտավախությունը, որ բարձրագույն կրթություն ստանալը և նոր արժեքներ ձեռք բերելը կարող են նրանց շեղել ազգային-ավանդական դաստիարակությունից: Տղաներից շատերը նույնպես բավարարվում են ութնամյա և միջնակարգ կրթությամբ, որից հետո զբաղվում են տնտեսական գործունեությամբ. «Կրթյալ եզդիների թիվը մեծանում է, բայց մեծանալու հետ միասին թուլանում է ազգային ավանդույթների պահպանումը, որը վերջին հաշվով մեզ օգուտ չի բերում» (եզդի, տղամարդ, 50տ.):¹¹⁷

Կրթության նկատմամբ հետաքրքրությունը համեմատաբար մեծ է քաղաքային եզդիների և քրդերի շրջանում: Չնայած կրթության նկատմամբ նման մոտեցումներին՝ այնուհանդերձ, բարձրագույն կրթություն ունեցողները մեծ հեղինակություն և հարգանք ունեն նրանց հանրության մեջ:

Բարձրագույն կրթությամբ միզրանտները հատկապես բարձր տոկոս են կազմում ուկրաինացիների (40.0%), ռուսների (33.3%), հույների (25.0%) մեջ: Նշենք որ 2011թ. մարդահամարի տվյալներով բարձրագույն և հետբուհական, գիտական աստիճան ունենցող ուկրաինացիները կազմել են 24.2%, ռուսները՝ 20%, հույները՝ 14.8%, ասորիները՝ 6.4%, քրդերը՝ 4.8%, իսկ եզդիները՝ 1.0%:¹¹⁸ Այսպիսով, ազգային փոքրամասնությունների

¹¹⁷ Գալստյան Մ., ԴԱՆ, Ջաբթոնք, 2014թ.:

¹¹⁸ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքների, էջ 272, [http://www.armstat.am/am/?nid=337\(30.03.2015\)](http://www.armstat.am/am/?nid=337(30.03.2015)):

միգրանտները տարբերվում են իրենց կրթական աստիճանով, որն իր ազդեցությունն է թողնում նրանց որակավորման մակարդակի և սոցիալական շարժունության տեմպերի վրա: Ըստ հետազոտության արդյունքների՝ ամուսնացած միգրանտների տեսակարար կշիռը կազմել է հետազոտված միգրանտների 79.1%-ը: Ըստ աղյուսակ 16-ի՝ ամուսնալուծված միգրանտների 2.3%-ը եզդիներ (3 ընտանիք) են, 2.9%-ը՝ ասորիներ (1 ընտանիք), 10%-ը՝ ուկրաինացիներ (1 ընտանիք):

Աղյուսակ 16

Միգրանտների ամուսնական կարգավիճակը (%-ով, n=254)

Ամուսնական կարգավիճակը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի
Ամուրի	9.8	28.2	17.1	15.0	5.9	20.0
Ամուսնացած	79.7	69.2	80.0	85.0	94.1	70.0
Ամուսնալուծված	2.3	0.0	2.9	0.0	0.0	10.0
Այրի	8.3	2.6	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Իրականում ազգային փոքրամասնությունների շրջանում ամուսնալուծվածների թիվը կարող է ավելի բարձր լինել, քանի որ հարցազրույցների ժամանակ մասնակիցները շատ քիչ էին բարձրաձայնում դրա մասին: Բացի դրանից, հատկապես այն ընտանիքներում, որտեղ առկա են երեխաներ, ելնելով հասարակական կարծիքի ազդեցությունից, ամուսնալուծությունը պաշտոնապես գրանցում չի ստացել: Օրինակ, Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի եզդի բնակչության հետ խորացված հարցազրույցներից պարզվեց, որ գյուղում կա մոտ երեք լքված ընտանիք: Նրանց ամուսինները շուրջ 20 տարի և ավել Ռուսաստանի Դաշնությունում են, կապերը խզել են ընտանիքի

հետ, սակայն կանայք չեն դիմել ապահարգանի: Ըստ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի՝ մոտավոր տվյալներով աշխատանքային միգրացիայի պատճառով ասորիների մեջ կա հինգ ամուսնալուծված ընտանիք: Այսպիսով, կարող ենք փաստել, որ արտաքին միգրացիան նպաստում է ամուսնալուծությունների աճին:

4.4. Միգրանտների արտերկիր մեկնելու նպատակը

Հետազոտվող ժամանակահատվածում նրանց 91.3%-ը (232 մարդ) մշտական բնակության կամ աշխատանքի նպատակով գտնվել է հանրապետությունից դուրս, իսկ 8.7%-ը (22 մարդ) վերադարձել էր:

Աղյուսակ 17

Միգրանտների գտվելու վայրը (%-ով, n=254)

Գտնվելու վայրը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
ՀՀ-ից դուրս	49.6	14.2	12.2	5.9	5.5	3.9	91.3
ՀՀ-ում	3.5	1.2	1.6	2.0	0.4	0.0	8.7
Ընդամենը	53.1	15.4	13.8	7.9	5.9	3.9	100.0

«Երկու տղաս իրենց ընտանիքներով արդեն 7 տարի ապրում են Ռուսաստանում, երեխաները այնտեղ դպրոց են գնում: Այստեղ տուն ունեն, դռները փակել գնացել են, մեկ-մեկ ամռանը երեխաներին են ուղարկում: Էնտեղ առևտրով են զբաղվում, գործերը լավ են, քաղաքացիություն ունեն, հարմարվել են այնտեղի կյանքին, դժվար թե էլ հետ գան» (քուրդ, տղամարդ, 49տ.):¹¹⁹

¹¹⁹ Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2013թ.:

Հարցվածների կարծիքով նրանց 81.9%-ը (208 մարդ) արդեն երկար տարիներ արտերկրում է՝ մշտական բնակության նպատակով: Այսպես, 38.2%-ը հանրապետությունից մեկնել է շուրջ 20-25 տարի առաջ, այսինքն՝ 1990թ. մինչև 2000-ական թվականները, 37.6%-ը՝ 2008-2012 թվականներին, իսկ 11.3%-ը՝ վերջին մեկ-երկու տարվա ընթացքում: Ըստ հետազոտության արդյունքների՝ հույների 60.4%-ը, ասորիների 48.2%-ը, ռուսների 43.2%-ը, քրդերի 43%-ը, եզդիների 37%-ը հանրապետությունից մեկնել են մինչև 2000 թվականը, իսկ մնացածը՝ դրանից հետո: Նրանց 18.1%-ը (46 մարդ) աշխատելու նպատակով հանրապետությունից բացակայում է մինչև մեկ տարի և արդեն վերադարձել է Հայաստան, իսկ 81.9 %-ը՝ արտերկիր է մեկնել մշտական բնակության:

Աղյուսակ 18

Միգրանտների՝ արտերկիր մեկնելու նպատակը (%-ով, n=254)

Նպատակը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Մշտական բնակության	44.1	13.0	9.8	6.7	4.3	3.9	81.9
Աշխատանքի	9.1	2.0	3.9	1.2	2.0	0.0	18.1
Ընդամենը	53.1	15.0	13.8	7.9	6.3	3.9	100.0

Այսինքն՝ հետազոտության արդյունքներով բացահատվել է, որ նրանց գերակշռող մասը էմիգրանտներ են, իսկ մոտ մեկ հինգերորդը՝ ռեէմիգրանտներ: Այդ խմբերի հետ կապված խնդիրները հետագա շարադրանքում կներկայացվեն առանձին բաժիններով:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՊՏՆՎՈՂ ՄԻԳՐԱՆՏԵՐ

5.1. ՀՀ-ից արտագաղթելու պատճառները

Հետազոտության արդյունքները վկայում են, որ ազգային փոքրամասնությունների 75.1%-ի՝ Հայաստանից արտագաղթի պատճառն ընդհանուր առմամբ կապված է աշխատանքի բացակայության հետ (46.3%-ը՝ աշխատանքի բացակայություն, 5.9%-ը՝ մասնագիտական աշխատանքի բացակայություն, 22.9%-ը՝ ընտանիքը պահելու համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինություն):

Համեմատության համար նշենք, որ հայերը արտագաղթի գլխավոր պատճառը նույնպես համարում են աշխատանքի բացակայությունը (2013 թ. դրությամբ՝ 89.7 %):¹²⁰

«Այն ժամանակ արտագաղթի պատճառը պատերազմն էր, բլոկադան և տնտեսական ծանր վիճակը: Գյուղերից երևի թե ամենաշատը արտագաղթել են Կոտայքի մարզի Արզնի համայնքից, Արարատի մարզի Դմիտրով գյուղից, արտագաղթում էին ընտանիքներով: Արտագաղթը հիմնականում եղավ, երբ պատերազմ էր: Բայց եթե թվերի վերածենք, հայ ազգը ավելի շատ է արտագաղթել տոկոսային հարաբերությամբ, քան ասորիները: Քանի որ ասորիները կոմպակտ գյուղերում էին բնակվում, նրանք այդքան շուտ չլքեցին իրենց գյուղերը, մինչև այսօր էլ Վերին Դվինում, Նոր Արտագերսում տները մնում են, այսինքն՝ հետադարձի հույս ունեն մարդիկ:

¹²⁰ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Ե., 2014, էջ 23: <http://www.armstat.am/am/?nid=82&id=1618> (30.03.2015):

Արտերկիր մեկնելու պատճառները (%-ով, n=188)

Պատճառները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Աշխատանքի բացակայություն	23.4	8.0	3.7	3.2	5.9	2.1	46.3
Մասնագիտական աշխատանքի բացակայություն	3.2	1.1	0.0	0.0	1.1	0.5	5.9
Ընտանիք պահելու համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինություն	15.4	0.0	1.6	0.0	5.9	0.0	22.9
Երկրի/ բնակավայրի զարգացման հեռանկարի բացակայություն	4.3	2.1	0.5	0.0	0.0	0.0	6.9
Մայրենի լեզվի գործածման դժվարություններ	0.0	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.5
Ազգային պատկանելության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Հայրենիքում ապրելու ցանկություն	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.0	0.5
Աշխարհաքաղաքական անկայուն վիճակ	0.5	0.5	0.0	0.5	0.0	0.0	3.7
Ընտանեկան հանգամանքներ	5.3	2.7	0.0	0.5	0.5	1.1	10.1
Ուսում	0.0	2.1	0.0	0.0	0.0	1.1	3.2
Ընդամենը	53.2	17.6	5.9	5.3	13.3	4.8	100.0

Իսկ Արգնին ընենց եղավ, որ մարդիկ տները ծախեցին, գնացին, դա էր ցավալի: Մեծ մարդիկ հիմնականում շատ դժվար են ինտեգրվում Ռուսաստանի միջավայրին: Քանի որ ասորիները ռուսալեզու էին, Ռուսաստան են գնում»:¹²¹ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերից ազգային փոքրամասնությունների արտագաղթի պատճառը պայմանավորված էր Լեռնային Ղարաբաղի հարցում հայ-ադրբեջանական կոնֆլիկտով և նրանց անվտանգության ապահովման խնդրով: Այդ կապակցությամբ ռուսական համայնքի ներկայացուցիչ Լ. Ռշտունին նշում է Ճամբարակի (Կրասնոսելսկի) մոլոկանների օրինակը: Նրանք ստիպված էին տեղափոխվել, որովհետև քաղաքը ուժեղացավ, իսկ այնտեղ ապրելը վտանգավոր էր. «Հիմա Ճամբարակում գրեթե մոլոկան չի մնացել: Ընտանիքներով տեղափոխվեցին Վորոնեժ, Ռոստով: Շատերին ես գիտեմ, որ գնացել են Արգենտինա: Ճամբարակում այս տարի պետք է նշենք այնտեղ բնակվելու 140 տարին: Ես գիտեմ, որ նրանք չէին ուզում հեռանալ այստեղից, միայն այդ ծանր դրությունն էր պատճառը: Լեզվական խնդիր չկար: Նրանք բոլորն էլ հայերեն խոսում էին: Համենայն դեպս, մոլոկանների պարագայում ոչ մի լեզվական խոչընդոտ չի եղել»:¹²²

«Քուրդ մտավորականների խորհուրդ» կազմակերպության ղեկավար Ա. Սարդարյանը, անդրադառնալով այդ խնդրին, նշել է, որ մինչև 2000թ. Հայաստանից արտագաղթը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական պատճառներով, հատկապես

¹²¹ Տե՛ս Մարկոսյան Ա., Ա. Միխայլովի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

¹²² Տե՛ս Մարկոսյան Ա., Լ. Ռշտունու հետ նշված հարցազրույցի արդյունքները:

հանրապետության նախալեռնային շրջաններում բնակվող քրդերի համար: Նա բերում է Արագածոտնի մարզի քրդաբնակ մի շարք գյուղերի օրինակը, որոնք ունեն ոչ բերրի հող, ոռոգման և խմելու ջրի խնդիր, ինչպես նաև ոչ բարեկարգ ճանապարհներ և սոցիալ-մշակութային, առողջապահական հաստատություններ: Ըստ նրա՝ վերջին տարիների արտագաղթը մեծ չափեր է ընդունել նաև Արարատյան դաշտավայրի քրդաբնակ համայնքներում, որտեղից մեկնում են նաև Գերմանիա և Ֆրանսիա:¹²³

Այն կանխավարկածը, որ Հայաստանից արտամղող գործոնների շարքում կարևոր դեր կարող են ունենալ նաև ազգային մշակույթի պահպանման, մայրենի լեզվի կիրառման, ազգային պատկանելության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրները, ինչպես նաև հայրենիքում ապրելու ցանկությունը, հետազոտության արդյունքներով չհիմնավորվեցին, քանի որ դրանց կողմնակիցները թիվը կազմել է ընդամենը 1.0%: «Արդեն յոթանասուն տարեկան եմ, մեր գյուղում դեռ չեմ լսել մի դեպք, որ ինչ-որ մեկը իր մայրենի լեզուն չի կարողանում ազատորեն օգտագործել, կամ էլ ազգային պատանելության պատճառով մեկնել է Հայաստանից: Լեզուն, կրթությունը, ազգությունը չէ պատճառը, որ մեկնում են: Պատճառը սոցիալ-տնտեսական է, աշխատանք չկա, դրա համար էլ մարդիկ մեկնում են: Ազգային խնդիրը այստեղ դեր չի կատարում» (եզդի, տղամարդ, 70տ.):¹²⁴ Մեջբերենք նաև ասորիներից ևս մեկի կարծիքը. «Իմ տղան և աղջիկը արդեն 6 տարի ապրում են Ռուսաստանում: Հայերի կողմից ազգային խտրականությ-

¹²³ Տե՛ս Մարկոսյան Ա., Ա. Սարդարյանի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

¹²⁴ Գալստյան Մ., ԴԱՆ, Հուլիս, 2014թ.:

յունը չէ պատճառը, որ նրանք գյուղից հեռացան: Երկուսն էլ բարձրագույն կրթություն ունեին, բայց աշխատանք չունեին, ստիպված գնացին» (ասորի, կին, 55տ.):¹²⁵

Որպես Հայաստանից արտագաղթելու պատճառ՝ հարցման մասնակիցների 10.1%-ը նշել է ընտանեկան հանգամանքները, մասնավորապես ընտանիքների վերամիավորման խնդիրը: Օրինակ, ուկրաինացիների 11%-ը, որպես միգրացիայի շարժառիթ, նշել է հարազատներին մոտ ապրելու հանգամանքը:¹²⁶ Նշենք, որ հետազոտության ընթացքում հանդիպել ենք բազմաթիվ այդպիսի դեպքերի, երբ ընտանիքի մի մասը (ամուսինը, տղան, հայրը և այլն) բնակություն էր հաստատել արտերկրում, իսկ տեղում մնացածները ցանկանում էին տեղափոխվել նրանց մոտ: Սակայն եթե երիտասարդների մեծ մասը մեկնելուց հետո կարողանում է հարմարվել այլեթնիկ միջավայրին, ապա շատ դեպքերում նույնը չենք կարող ասել տարեցների մասին: Նրանք, այնտեղ բախվելով օտար մշակութային արժեքներին և բարքերին, որոշ ժամանակ անց վերադառնում են: «Տղաներից երկուսը Ռուսաստան են մեկնել 1995թ., իսկ երրորդը՝ 2010թ., իսկ աղջիկս գնացել է եղբայրների մոտ և ամուսնացել իր ազգության տղայի հետ: Տղաներս Հայաստանից Նովոսիբիրսկ կոշիկ են տարել վաճառելու և հետո մշտական բնակություն են հաստատել: Հիմա այնտեղ զբաղվում են առևտրով և Չինաստանից ապրանքներ են ներկրում, այնտեղ ունեն խանութներ: Երկու անգամ գնացել եմ տղաներիս մոտ, բայց չկարողացա հարմարվել, ստիպված

¹²⁵ Գալստյան Մ., ԴԱՆ, Վերին Դվին, 2015թ.:

¹²⁶ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները բաղա-
բացիական հասարակության կայացման արդի պայմաններում II, 2005, էջ 69:

վերադարձա: Նրանք մեզ մշտապես օգնում են» (եզդի, տղամարդ, 67 տ.):¹²⁷

Հանրապետությունից մեկնելու մյուս պատճառներից հարցման մասնակիցների 6.9%-ը նշել է երկրի/ բնակավայրի զարգացման հեռանկարի բացակայությունը, 3.7%-ը՝ աշխարհաքաղաքական անկայուն վիճակը, իսկ 3.2%-ը՝ դրսում կրթություն ստանալու հանգամանքը: Խորացված հարցազրույցներից պարզվեց, որ բացի վերը նշված ընդհանուր պատճառներից, Հայաստանից որոշ ազգային փոքրամասնությունների արտագաղթը պայմանավորված է նաև ազգային առանձնահատուկ գործոններով: Մասնավորապես նկատի ունենք ազգային պետության գոյությունը և վարած միգրացիոն քաղաքականությունը, որը երբեմն այդ գործընթացին հաղորդում է կազմակերպված բնույթ: Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններից միայն երեքը՝ ռուսները, հույները և ուկրաինացիները, Հայաստանի Հանրապետությունից դուրս ունեն իրենց պատմական հայրենիքը և ստանում են որոշակի օգնություն և աջակցություն: Օրինակ, 2000թ. Հունաստանի խորհրդարանն ընդունեց նախկին ԽՍՀՄ-ից հույն հայրենադարձներին տեղավորելու մասին օրենք, որի շնորհիվ արտասահմանյան հույներին տրվում էր Հունաստանի անձնագիր (այն երկրներում, որտեղ թույլատրված էր երկքաղաքացիությունը) կամ անձը հաստատող փաստաթուղթ (երկրներ, որտեղ երկքաղաքացիություն նախատեսված չէ սահմանադրությամբ): Այդ օրենքի համաձայն՝ էթնիկ հույները երկրից ազատ տեղաշարժվելու իրավունք ստացան, հնարավորությո-

¹²⁷ Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2014թ.:

յուն տրվեց լեզալ տեղավորվելու աշխատանքի:¹²⁸ «90-ական թվականներից սկսած՝ արտագաղթը մեծ չափերի հասավ: Հիմնական արտագաղթը եղել է 1990-1996 թվականներին: Պատճառները հայտնի էին, բայց որոշ մասն էլ ուղղակի ուզում է վերադառնալ իր պատմական հայրենիքը: Հույներին այնտեղից մեկնելուն օգնել էր Հունաստանի կառավարությունը և Հայաստանում Հունաստանի դեսպանատունը: Հունաստանը և Կիպրոսը անշահախնդիր օգնում էին ոչ միայն հույներին, այլև հայերին: Եվ ոչ միայն Հայաստանի, նաև Ղարաբաղի հույներին ու հայերին: Ղարաբաղի Մարտակերտի շրջանում կա մի հունաբնակ գյուղ. 1993 թվականին Հունաստանի կառավարությունը այնտեղից ինքնաթիռներով 74 հույների տեղափոխեց»:¹²⁹ Խորացված հարցազրույցներից պարզվեց նաև, որ այդ տարիներին Հայաստանից արտագաղթեցին նաև հայ-հունական ընտանիքներ և նրանց երեխաները, որոնք ունեին կրկնակի էթնիկ ինքնագիտակցություն և Հունաստանը համարում էին իրենց ծնողներից մեկի հայրենիքը: Անշուշտ, այդ երևույթին խթանեց նաև Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը: Հույների որոշ մասն այդ տարիներին մշտական բնակության է մեկնել նաև Ռուսաստանի Դաշնություն:

Ըստ «Ռոսսիյա» ՀԿ-ի ղեկավար Յու. Յակովենկոյի՝ Ղարաբաղյան պատերազմի ծանր տարիներին Ռուսաստանի Դաշնության կառավարության անմիջական օգնությամբ և իրենց կազմակերպության աջակցությամբ Տաշիրից 3 ինքնաթիռ ոռոսներ (հիմնականում մոլդկաններ) են մեկնել: Ռուսաստանի

¹²⁸ Греки. <http://mitq.org/print/?l=rus&dir=2&news=829> (27.03.2015):

¹²⁹ Տե՛ս Մարկոսյան Ա., Է. Պոլատովի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

կառավարությունը նաև այդ տարիներին Հայաստանում ապրող ռուսներին ցուցաբերել է հումանիտար օգնություն: Ներկա պայմաններում ՌԴ-ն Հայաստանում իրականացնում է նաև «Հայրենակիցներ» միգրացիոն ծրագիրը, որի միջոցով մի շարք ընտանիքներ տեղափոխվել են մշտական բնակության: «Ռուսաստանում կյանքի մակարդակը բարձր է, մարդիկ իրենց ավելի ապահով են զգում, թռչակը բարձր է: Իսկ մարդը բնագդաբար այն տեղն է փնտրում, որտեղ իրեն լավ է: Բայց շատերը, որոնց հետ ես նամակագրություն ունեմ, մեծ կարոտով և նոստալգիայով են հիշում Հայաստանը»:¹³⁰

Եզդիների և քրդերի շրջանում լայն տարածում ունի նաև ամուսնական պատճառներով միգրացիան՝ պայմանավորված համայնքի դասային կառուցվածքով և դրանից բխող մի շարք սովորույթներով: Նրանք բաժանվում են աշխարհիկ և հոգևոր կրոնական դասերի: Աշխարհիկ դասերն են մրիդները և բեկերը, իսկ հոգևոր կրոնականը՝ շեյխերը և փիրերը: Վերջիններս իրենց հերթին բաժանվում են աստիճանակարգային ուրույն համակարգում միավորված մի քանի ենթադասերի և կատարում ու ղեկավարում են կրոնաժիսական արարողությունները: Մրիդները ներկայացնում են աշխարհիկ շարքային խավը, իսկ բեկերը՝ վերնախավը: Դասային պատկանելությունը փոխանցվում է ժառանգաբար և համարվում է տվյալ ընտանիքի բնութագրիչը. յուրաքանչյուրն ընտանիք է կազմում միայն իր դասի ներկայացուցչի հետ: Դասային պատկանելությամբ պայմանավորված՝ երբեմն աղջիկը կամ տղան, Հայաստանում չգտնելով համապատասխան կարգավիճակ ունեցող երիտասարդի, ամուսնանում է արտերկրում բնակվող նույն դասին պատկա-

¹³⁰ Տե՛ս Մարկոսյան Ա., Յու . Ի. Յակովլենկոյի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

նող հայրենակցի հետ. «Մեր գյուղի մրիդներից մեկը աղջիկ ուներ, բայց գյուղում չկար համապատասխան թեկնածու: Մենք Գերմանիայում եզդիների մեծ համայնք ունենք, որտեղ մեր գյուղից գնացած ընտանիքներ էլ կան: Այնտեղ ապրող մրիդ ընտանիքներից մեկը եկավ և այդ աղջկան ուզեց իր տղային: Ամուսնացավ, գնաց Գերմանիա» (եզդի, տղամարդ, 64տ.):¹³¹ Այդ հարցը խիստ է դրված նաև արտերկրում ձևավորված եզդիական և քրդական համայնքներում. երիտասարդները ամուսնանում են տեղի կամ մյուս երկրների իրենց համայնքների անդամների հետ: Շատ դեպքերում հատկապես տղաները Հայաստանի իրենց ազգային համայնքներից են աղջիկ ուզում: Տղայի կողմը հիմնականում աղջկան ընտրում է Հայաստանում բնակվող ազգականների, բարեկամների, հարևանների խորհրդով: Նման ամուսնությունների համար շատ քիչ նշանակություն ունի կրթական մակարդակի և աշխարհայացքների տարբերությունը: Այսպիսով, ազգային երեք փոքրամասնությունների (հույներ, ռուսներ, ուկրաինացիներ) արտաքին միգրացիան պայմանավորված է ոչ միայն Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակով, այլև նրանց ազգային պետության վարած միգրացիոն քաղաքականությամբ: Այդ պետությունների կողմից հայրենակիցների միգրացիայի վերաբերյալ ադմինիստրատիվ որոշումների ընդունումը և տարբեր աջակցությունների շնորհիվ հեշտացել է նրանց մուտքը այդ երկրներ: Մյուս կողմից՝ ազգային փոքրամասնությունների շրջանում միգրացիոն վարքագծի ձևավորումը կապված է նաև նրանց անհատական որոշումների հետ. հիմքում նրանց կենսամակարդակի բարելավման և եկամուտների բարձրացման մոտիվացիան է: Որոշ միգրանտների մոտ այդ

¹³¹ Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2014թ.:

հարցում որոշակի դեր է ունեցել նաև պատմական հայրենիքում ապրելու ձգտումը:

5.2. Միգրանտների մուտքի երկրները

Հետազոտության արդյունքներով արտերկիր մեկնածների կազմում գերակշռել է Ռուսաստանի Դաշնությունում գտնվող միգրանտների մասնաբաժինը՝ 67.4%, որից 34.7%-ը եզդիներ են, 15.6%-ը՝ ռուսներ, 7.4%-ը՝ ասորիներ, 5.2 %-ը՝ քրդեր, իսկ 3.7 %-ը՝ ուկրաինացիներ:

Աղյուսակ 20

Միգրանտների մուտքի երկրները (%-ով, n=208)

Երկրները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
ՌԴ	34.8	15.6	7.4	0.7	5.2	3.7	67.4
ԱՊՀ	3.0	0.7	0.7	0.0	3.0	2.2	9.6
ԱՄՆ	0.0	0.7	0.0	0.0	0.0	0.0	0.7
Եվրոպա	14.8	0.0	0.7	5.2	0.7	0.7	22.2
Ընդամենը	52.6	17.0	8.9	5.9	8.9	6.7	100.0

Ազգային փոքրամասնությունների 22.2%-ը հետազոտվող ժամանակահատվածում գտնվել է եվրոպական երկրներում՝ հիմնականում Ֆրանսիայում, Հունաստանում և Գերմանիայում: Ֆրանսիա և Գերմանիա մեկնողների մեջ բարձր է տոկոս են կազմում եզդիները: Միգրանտների 9.6%-ը բնակություն է հաստատել ԱՊՀ երկրներում՝ հիմնականում Ուկրաինայում և Ղազախստանում: Այսպես, Արմավիրի մարզի Շամիրամ համայնքից 1990-ական թվականներից մինչև մեր օրերը գյուղից հեռացել է շուրջ 1000 եզդի երիտասարդ և մշտական բնակու-

թյուն հաստատել Ռուսաստանի Դաշնությունում, մասնավորապես Նովոսիբիրսկում, Եկատերինբուրգում, Սանկտ Պետերբուրգում, Կրասնոդարում, իսկ եվրոպական երկրներից՝ մոտ 25 մարդ Գերմանիայում, 12 մարդ՝ Ֆրանսիայում, 10 մարդ՝ Հոլանդիայում, 6 մարդ՝ Իտալիայում:¹³² Նույն մարզի Ակնալիճ համայնքի ավագանու եզդի անդամը նշեց, որ նրանց գյուղից, բացի Ռուսաստանի նշված վայրերից, մեկնում են նաև Ղազախստան, իսկ վերջին 3 տարվա ընթացքում շուրջ 8 ընտանիք տեղափոխվել է Գերմանիա՝ մշտական բնակության:¹³³ Նույն պատկերն է նաև մարզի Զարթոնք եզդիաբնակ համայնքում, որտեղից մոտ 40 ընտանիք մշտական բնակություն է հաստատել Ռուսաստանի Դաշնության Յարոսլավլի, Սվերդլովսկի, Ռոստովի մարզում, իսկ մոտ 30-ը տեղափոխվել են Գերմանիա, Ֆրանսիա, Շվեդիա, Հոլանդիա, Ավստրիա: Նրանցից մի քանի ընտանիք մեկնել է 1990-ական թվականներից հետո և հաստատվել այդ երկրներում, իսկ հիմնական մասը վերջին տարիներին է տեղափոխվել՝ այնտեղի իրենց հարազատների անմիջական աջակցությամբ:¹³⁴ Հայաստանից մեկնած եզդիները և քրդերը համալրել են Ռուսաստանի բնակչության կազմը:¹³⁵ Այսպես, 2010 թվականի Ռուսաստանի Դաշնության մարդահամարի տվյալներով, ըստ ազգային պատկանելության, քրդերը կազմել են 23322 մարդ (Ռուսաստանի բնակչության 0,02%-ը), որից քաղաքայինը կազմել է 40505

¹³² Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2013թ.:

¹³³ Գալստյան Մ., ԴԱՆ, Ակնալիճ, 2014թ.:

¹³⁴ Գալստյան Մ., ԴԱՆ, Զարթոնք, 2014թ.:

¹³⁵ Համեմատության համար նշենք, որ հայերի հիմնական զանգվածը՝ 95.5%-ը, նույնպես մեկնում է ՌԴ աշխատանք փնտրելու նպատակով, Մոցիլայական պատկերը և աղքատությունը Հայաստանում, Ե., 2014, էջ 25, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1618> (30.03.2015):

մարդ, իսկ գյուղականը՝ 19137 մարդ: Առավել խոշոր համայնք քրդերն ունեն Կրասնոդարի երկրամասում՝ 5899 մարդ: Նույն մարդահամարի տվյալներով իրեն եզդի է համարել 40586 մարդ (Ռուսաստանի բնակչության 0,03%-ը), որից քաղաքային բնակչությունը՝ 22452 մարդ, իսկ գյուղականը՝ 18 134 մարդ: Առավել խոշոր համայնք եզդիներն ունեն Յարոսլավլի մարզում, որտեղ ապրում է 3287 եզդի, Կրասնոդարի երկրամասում և այլն:¹³⁶

Ռուսների հիմնական մասը մեկնել է Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասեր, ինչպես նաև Ռուսաստանի կենտրոնական մարզեր:

Դիմիտրով համայնքից ասորիները արտագաղթել են 1990-1996թթ., և ներկայում մոտ 126 ընտանիք գտնվում է արտերկրում: Նրանք մեկնել են ՌԴ, Ուկրաինա, Գերմանիա, Հոլանդիա, Ֆրանսիա, Ավստրալիա: ՌԴ-ում հիմնականում բնակվում են Ռոստովում, քանի որ դեռևս 1970-80-ական թվականներին այնտեղ մեկնել էին արտագնա աշխատանքի, և նրանց մի մասը հաստատվել էր այնտեղ: Ռոստովում, Կրասնոդարում կան կազմակերպված ասորական մեծ համայնքներ, որոնց ղեկավարները Հայաստանի ասորիներ են:¹³⁷ Այդ տարիներին Վերին Դվինից արտագաղթել է մոտ 90 ընտանիք:¹³⁸

Սիբիրացիան ազգային փոքրամասնությունների շրջանում ուղեկցվում է ուղղահայաց և հորիզոնական վերընթաց և վարընթաց շարժունությամբ: Մասնավորապես, ազգային փոքրամասնությունների մի մասի մոտ այն ուղեկցվում է աշխարհա-

¹³⁶ Мосаки Н. Курды и езиды в российской переписи 2010г., <http://www.regnum.ru/news/society/1488222.html> (20.03.2015):

¹³⁷ Գալստյան Մ., ԴԱՆ, Դիմիտրով, 2015թ.:

¹³⁸ Գալստյան Մ., ԴԱՆ, Վերին Դվին, 2015թ.:

գրական շարժունությամբ, որի շնորհիվ չի փոխվում նրանց կարգավիճակը: Այսինքն՝ Հայաստանի գյուղական բնակավայրերում ապրող ազգային փոքրամասնությունների մի մասը մուտքի երկրներում բնակություն է հաստատում նույն կարգավիճակ ունեցող բնակավայրերում: Մակայն միգրանտների որոշ մասը նախկին գյուղական բնակավայրը մուտքի երկրներում փոխում է քաղաքայինով, որը հանգեցնում է նաև կարգավիճակի փոփոխության: Տեղի է ունենում նաև սոցիալ-մշակութային միջավայրի փոփոխություն, որի շնորհիվ նրանք յուրացնում են քաղաքային մշակույթին բնորոշ առանձնահատկություններ:

Հետազոտության արդյունքներով երկրների ընտրության աշխարհագրության հարցում իր որոշակի ազդեցությունն է թողել նաև պատմական հայրենիքի գոյության, միգրանտների լեզվական իմացության (հատկապես Ռուսաստանի Դաշնության համար), երկրների վարած միգրացիոն քաղաքականության և այնտեղ ձևավորված ազգային համայնքների առկայության փաստը: Այդ մասին են փաստում նաև հարցվածներին տրված «Ինչո՞վ է պայմանավորված հատկապես այդ երկրի ընտրությունը» հարցի պատասխանները, որոնք ներկայացված են աղյուսակ 21-ում:

Ազգային փոքրամասնությունների 56.4%-ը երկրների ընտրության պատճառների հարցում կարևորել է այնտեղ բնակվող ընտանիքի անդամների, բարեկամների փաստը, 34.9%-ը՝ հեշտությամբ աշխատանք գտնելու, 11.9%-ը՝ այդ երկրներ մեկնելու դյուրին և հասանելի լինելու հանգամանքը: Նույն աղյուսակից կարող ենք եզրակացնել, որ երկրի ընտրության հարցում հայրենիքում ապրելու շարժառիթը, քաղաքացիություն ձեռք բերելու համար ազգային պատկանելության, լեզվի իմա-

ցության, անվտանգության գործոնները կազմել են ցածր տոկոս:

Անդրադառնանք այն խնդրին, թե արտերկիր տեղափոխվելու հարցում միգրանտները ինչ միջոցներ են ընտրում, և դրանում ինչ մասնաբաժին ունեն ինստիտուցիոնալ կառույցներն ու սոցիալական ցանցերը:

Աղյուսակ 21

Երկրների ընտրության պատճառները (%-ով, n=126)

Երկրի ընտրությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Հնդկամենք
Ուզում է ապրել իր հայրենիքում	0.0	4.8	0.0	1.6	0.0	0.0	6.4
Այնտեղ են ապրում ընտանիքի անդամներ/բարեկամներ	29.4	9.5	4.0	4.0	4.8	4.8	56.4
Այնտեղ հեշտ է աշխատանք գտնել	19.0	6.3	3.2	1.6	3.2	1.6	34.9
Այնտեղ ավելի անվտանգ է	2.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.4
Ազգային պատկանելությունը հնարավորություն էր տալիս ձեռք բերել քաղաքացիություն	0.0	0.0	0.8	0.8	0.8	0.0	2.4
Լեզուներ գիտեր	1.6	0.0	0.0	1.6	0.0	0.0	3.2
Այնտեղ մեկնել ավելի հեշտ էր	7.1	0.0	1.6	2.4	0.8	0.0	11.9
Ուսման համար	1.6	0.8	0.0	0.0	0.8	0.0	3.2
Զին. ծառայության համար	0.0	1.6	0.0	0.0	0.0	0.0	1.6
Դժվարանում եմ պատասխանել	1.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.6
Հնդկամենք	51.6	18.3	8.7	6.3	8.7	6.3	100.0

Ըստ աղյուսակ 22-ի տվյալների՝ կարող ենք եզրակացնել, որ միգրանտների 57.9%-ը (արտասահմանում ապրող հարազատ, բարեկամ, ընկերներ՝ 52.9%, արտասահմանում գտնվող միջնորդ՝ 5.0%) արտերկիր մեկնել են ոչ ֆորմալ կապերի կամ արտերկրում ունեցած սոցիալական ցանցերի միջոցով: Դրանք միջանձային կապերի մի ամբողջ համախումբ են, որոնք ուղարկող և ընդունող երկրներում միավորում են հին և նոր միգրանտ և ոչ միգրանտ ընտանիքներին:

Աղյուսակ 22

Արտերկիր մեկնելու ուղիները (%-ով, n=140)

Ուղիները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Արտասահմանում ապրող հարազատ, բարեկամ, ընկերներ	32.1	5.7	5.0	4.3	5.7	0.0	52.9
Արտասահմանում գտնվող միջնորդ	1.4	2.1	0.0	0.7	0.7	0.0	5.0
Արտասահմանում գտնվող ազգային-մշակութային կազմակերպություններ	2.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.1
Հայաստանում գործող ազգային-մշակութային կազմակերպություններ	0.7	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.7%
Հայրենակիցների շրջանում ազգային պետության իրականացրած ծրագրեր	0.0	0.0	0.0	0.7	0.0	0.0	0.7
Ինքնուրույն	13.6	10.7	4.3	1.4	1.4	5.7	37.1
Դժվարանում եմ պատասխանել	1.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.4
Ընդամենը	51.4	18.6	9.3	7.1	7.9	5.7	100.0

- Այդ ցանցերի առկայությունը նպաստում է միգրացիայի մեկնելու վերաբերյալ նրանց որոշումների կայացման հնարավորությունների և հասանելիության ընդլայնմանը: Դրանք կարող ենք անվանել «ցանցերով պայմանավորված միջնորդավորված միգրացիա»,¹³⁹ քանի որ հենվելով ավելի վաղ միգրացիայի ուղին բռնած ազգականների և բարեկամների սոցիալական կապերի վրա՝ նոր մեկնողները հնարավորություն են ունենում ստանալու գիտելիք և օգնություն: Հին միգրանտները նորերի համար դառնում են «հովանավորողներ», կարևոր օղակ նոր միգրացիոն հոսքերի ընդլայնման, տեղափոխման ծախսերի և ռիսկերի նվազեցման, միգրացիայից ակնկալվող օգուտների մեծացման, կորուստների նվազեցման, այլ էթնիկ միջավայրում ինտեգրման հարցերում:¹⁴⁰ Համեմատական կարգով նշենք, որ հայերի արտաքին միգրացիայի համար նույնպես կարևոր դեր են կատարում արտերկրում ձևավորված հայկական էթնիկ սոցիալական ցանցերը:¹⁴¹

«Ասորիների մոտ Արգնի գյուղից արտագաղթը սկսվել է 1990-ական թվականներից: Նրանք հիմնականում գնում են ՌԴ՝ Կրասնոդարի երկրամաս, Կրիմսկ քաղաք, որտեղ ներկայումս ապրում է մոտ 500 ընտանիք: Բնակություն են հաստատել նաև Ռոստովի մարզում, Կիրով քաղաքում՝ մոտ 250 ընտանիք: Այնտեղ ստեղծվել է ասորական համայնք: Քանի որ դեռևս 70-ական թվականների կեսերին որոշ ասորի ընտա-

¹³⁹ Wilson T.D. What Determines Where Transnational Labor Migrants Go? Modifications in Migration Theories, *Human Organization*, N53 (4), 1994, p. 272:

¹⁴⁰ Садовская Е.Ю. Социология миграций и современные западные теории международной миграции// Социальная политика и социология N 1, М., 2004, с. 86.

¹⁴¹ Գալստյան Մ., Սոցիալական ցանցերը և Հայաստանից աշխատանքային միգրացիայի ձևավորման առանձնահատկությունները, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., N1, էջ 203-2013:

նիքներ բնակություն են հաստատել այնտեղ, 90-ական թվականներից սկսած՝ շատ ասորիներ գնացին այդ բնակավայրերը իրենց հարազատների, բարեկամների մոտ: Երեխաները այնտեղ հաճախում են ռուսական դպրոց: Շատ քչերը գնացին Ուկրաինա, դրանից ավելի քիչ՝ Եվրոպա»:¹⁴² Սոցիալական ցանցերի միջոցով նոր բնակավայրերում հաստատված եզդիները, քրդերը, ասորիները և Հայաստանի հնաբնակ ռուսները ձևավորել են իրենց ազգային համայնքները և այնտեղ շարունակում են ավանդական, ընտանեկան, ազգակցական կապերը: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այստեղից մեկնած ազգային փոքրամասնությունների որոշ մասը մուտքի երկրներում ապրում է հավաք ձևով: Այսպես, ըստ Ռուսաստանի Դաշնությունում 2002 թ. իրականացված մարդահամարի տվյալների՝ ասորիներից 3754 մարդ ապրում է Կրասնոդարի երկրամասում, 2737-ը՝ Մոսկվայում, 2040-ը՝ Ռոստովի մարզում, 872-ը՝ Ստավրոպոլի մարզում, իսկ 487-ը՝ Սանկտ Պետերբուրգում:¹⁴³

Հարցման մասնակիցների կարծիքով միգրանտների 37.1%-ը արտերկիր է մեկնել ինքնուրույն՝ առանց որևէ միջամտության: Ինստիտուցիոնալ կառույցների միջոցով արտերկիր մեկնած միգրանտների թիվն ընդամենը կազմել է 3.5% (արտասահմանում գտնվող ազգային-մշակութային կազմակերպություններ՝ 2.1%, Հայաստանում գործող ազգային-մշակութային կազմակերպություններ՝ 0.7%, հայրենակիցների շրջանում ազգային պետության իրականացրած ծրագրեր՝ 0.7%) (աղյուսակ 22): Սա վկայում է այն մասին, որ միգրանտ-

¹⁴² Գալստյան Մ., ԴԱՆ, Արգնի, 2014թ.:

¹⁴³ Ассирийцы в России, <http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1734807> (20.03.2015):

ների շրջանում դեռևս շատ ցածր է վստահությունը այդ կազմակերպությունների նկատմամբ, և դա նրանք չեն համարում միգրացիայի հուսալի աղբյուր: Մինչդեռ դրսում հաստատվելու համար նրանք կարևորել են սոցիալական ցանցերի դերը՝ հարազատների, բարեկամների, ընկերների միջոցով արտերկիր մեկնելու հանգամանքը, որն ազգային փոքրամասնությունների շրջանում դարձել է շղթայական արտագաղթի կարևոր աղբյուր:

5.3. Արտերկրում միգրանտների գրադվածության ոլորտները

Հետազոտության արդյունքներով արտերկրում հաստատված միգրանտների շուրջ կեսը (54.3%-ը) վարձու աշխատողներ են, 17.3%-ը՝ ինքնագրադվածներ: Ուշագրավ է, որ նրանց 7.2%-ը գործատուներ են, ունեն իրենց սեփական բիզնեսը և ստեղծել են նոր աշխատատեղեր: Նրանց 6.3%-ը դեռ չի կարողացել գտնել աշխատանք, իսկ 1.6%-ը հիվանդության կամ այլ պատճառներով ի վիճակի չի եղել աշխատելու: Քանի որ արտերկրում միգրանտների աշխատանքի բնույթի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվել է Հայաստանում բնակվող նրանց ընտանիքի անդամներից, ապա 13.5%-ը տեղյակ չի եղել և դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Ըստ աղյուսակ 23-ի տվյալների՝ արտերկրում միգրանտները հիմնականում ընդգրկված են շինարարության, սպասարկման, առևտրի, արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության ոլորտներում: Այդ միգրանտների մի մասը, ունենալով բարձրագույն կրթություն և լինելով բարձր որակավորում ունեցող մասնագետ (հատկապես ռուսները,

ուկրաինացիները, հույները), արտերկրում համապատասխան մասնագիտությամբ աշխատանք չգտնելու պատճառով երբեմն կատարում է ցածր կամ միջին որակավորում պահանջող աշխատանքներ:

Աղյուսակ 23

Արտերկրում գտնվող միգրանտների աշխատանքի բնույթը (%-ով, n=208)

Աշխատանքի բնույթը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Վարձու աշխատանք	24.0	11.5	5.8	6.3	1.9	4.8	54.3
Ինքնագրաված	13.0	1.0	1.9	0.0	1.4	0.0	17.3
Գործատու	3.4	1.0	1.9	0.0	1.0	0.0	7.2
Աշխատանք չի գտել	2.4	2.4	0.5	1.0	0.0	0.0	6.3
Ի վիճակի չի եղել աշխատելու	0.5	0.0	0.5	0.0	0.5	0.0	1.4
Դժվարանում եմ պատասխանել	10.6	0.0	1.4	1.0	0.5	0.0	13.5
Ընդամենը	53.8	15.9	12.0	8.2	5.3	4.8	100.0

Ըստ ազգային կազմի՝ արտերկրում եզդիների և քուրդի գերակշիռ մասն աշխատում է շինարարության, սպասարկման, առևտրի և տրանսպորտի ոլորտներում: Մինչև մեկնելը նրանց մեծ մասը գյուղական համայնքներում զբաղված է եղել անասնապահությամբ և հողագործությամբ, իսկ քաղաքայինում՝ առևտրի և սպասարկման ոլորտներում: Ռուսները հիմնականում ընդգրկված են սպասարկման ոլորտում, որոշ մասը (1.1%-ը) պետական ծառայողներ են, իսկ 2.2%-ը՝ գիտության ոլորտի աշխատողներ: Կրասնոդարի և Ռոստովի մարզի գյուղական բնակավայրերում հաստատված ասորիները հիմնականում զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով,

իսկ քաղաքային բնակավայրերում ընդգրկված են շինարարության, առևտրի, սպասարկման և տրանսպորտի ոլորտներում: Ըստ հարցման արդյունքների՝ հույների և ուկրաինացիների մեծ մասն ընդգրկված է արդյունաբերության ոլորտում:

Աղյուսակ 24

Արտերկրում գտնվող միգրանտների աշխատանքի ոլորտը
(%-ով, n=185)

Աշխատանքի ոլորտները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Արդյունաբերություն	2.0	2.2	1.2	1.7	0.0	2.2	9.3
Շինարարություն	18.6	1.6	5.9	3.2	1.1	1.6	32.0
Տրանսպորտ	5.4	1.1	1.1	0.0	0.0	0.0	7.6
Սպասարկում	7.6	6.5	1.1	3.2	0.5	0.0	18.9
Առևտուր	13.5	0.0	1.6	0.0	2.2	0.0	17.3
Գիտություն/կրթություն	1.1	2.2	0.5	0.0	0.0	0.5	4.3
Գյուղատնտեսություն	3.2	0.0	1.1	0.0	0.5	0.0	4.9
Առողջապահություն	0.0	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.5
Պետ. ծառայություն	0.0	1.1	0.0	0.0	0.0	0.0	1.1
Դժվարանում եմ պատասխանել	3.6	0.5	0.0	0.0	0.0	0.0	4.1
Ընդամենը	55.1	15.1	12.4	8.1	4.9	4.3	100.0

Աղյուսակ 25

Արտերկրում գտնվող միգրանտները՝ ըստ աշխատանքի
ձևակերպման օրինականության (%-ով, n=185)

Աշխատանքի օրինականությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Այո, օրինական է	30.3	12.4	9.7	7.0	1.6	2.7	63.8
Ոչ, օրինական ձևակերպված չէ	0.5	1.1	1.1	0.0	0.5	0.0	3.2
Դժվարանում եմ պատասխանել	24.3	1.6	1.6	1.1	2.7	1.6	33.
Ընդամենը	55.1	15.1	12.4	8.1	4.9	4.3	100.0

Հայաստանում գտնվող նրանց հարազատները նշել են, որ միգրանտների 63.8%-ի աշխատանքը եղել է օրինական, իսկ 3.2%-ինը՝ ոչ օրինական՝ ձևակերպված չի եղել: Հայաստանում նրանց ընտանիքների 33.0%-ը չի ունեցել բավարար տեղեկատվություն և դժվարացել է պատասխանել դրսում աշխատանքային կարգավիճակ ունենալու հարցին:

5.4. Արտերկրում գտնվող միգրանտների կարգավիճակը և սոցիալ-իրավական պայմանները

Ըստ Հայաստանում գտնվող նրանց ընտանիքի անդամների տրամադրած տեղեկությունների՝ հանրապետությունից արտագաղթած ազգային փոքրամասնությունների 59.6%-ը արտերկրում ունի քաղաքացիություն, 13.9%-ը՝ բնակության իրավունք, 9.6%-ը՝ աշխատանքի իրավունք, իսկ 5.8%-ը՝ ժամանակավոր հաշվառում: Փախստականները և ապաստան հայցողները կազմում են 6.3%:

Աղյուսակ 26

Արտերկրում միգրանտների կացության կարգավիճակը (%-ով, n=208)

Կացության կարգավիճակը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Քաղաքացիություն	26.0	12.5	10.6	7.2	0.5	2.9	59.6
Բնակության իրավունք	6.7	1.4	1.0	0.5	2.9	1.4	13.9
Աշխատելու իրավունք	6.3	0.5	0.5	0.5	1.9	0.0	9.6
Փախստական կամ ապաստան հայցող	5.8	0.5	0.0	0.0	0.0	0.0	6.3
Ժամանակավոր հաշվառում	5.3	0.5	0.0	0.0	0.0	0.0	5.8
Դժվարանում են պատասխանել	3.8	0.5	0.0	0.0	0.0	0.5	4.8
Ընդամենը	53.8	15.9	12.0	8.2	5.3	4.8	100.0

Վերոնշյալ վիճակագրական տվյալները փաստում են, որ նրանց գերակշիռ մեծամասնությունը դարձել է արտերկրի քաղաքացի, որոշ մասը ձեռք է բերել բնակության, աշխատելու իրավունք: Դրան նպաստել են նաև երկրից դուրս գտնվող հայրենակիցների նկատմամբ այդ պետությունների վարած քաղաքականությունը և այնտեղ գտնվելու ժամանակահատվածը:

Աղյուսակ 27

Արտերկրում միգրանտների բնակարանային պայմանները
(%-ով, n=208)

Բնակարանային պայմանները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Սեփական բնակարան/տուն	20.7	10.1	7.7	3.8	1.9	2.9	47.1
Ապրում է բարեկամի/ծանոթի տանը	9.6	1.0	0.0	0.0	1.0	0.5	12.0
Վարձով բնակարան	13.5	4.8	0.5	4.3	1.9	1.0	26.0
Վարձով սենյակ	4.8	0.0	3.8	0.0	0.5	0.0	9.1
Հանրակացարան	5.3	0.0	0.0	0.0	0.0	0.5	5.8
Դժվարանում եմ պատասխանել	1.9	0.5	0.0	0.5%	0.0	0.0	2.9
Ընդամենը	53.8	15.9	12.0	8.2	5.3	4.8	100.0

Արտերկրում կացության կարգավիճակն իր ազդեցությունն է թողնում նրանց բնակարանային պայմանների վրա: Նրանք, ովքեր երկար տարիներ ապրում և աշխատում են արտերկրում, ունեն քաղաքացիություն և նյութական միջոցներ՝ այնտեղ ձեռք են բերել սեփական բնակարան/տուն (47.1%): Նրանց 35.1%-ը ապրում է վարձով, իսկ 5.8%-ը՝ հանրակացարանում:

Այդ հարցում միգրանտների 12.0%-ին օգնում և աջակցում են նաև այնտեղ գտնվող հարազատները, բարեկամները և

ծանոթները, որոնք բնակվելու համար տեղ են հատկացրել իրենց հարկի տակ:

5.5. Արտերկրում գտնվող միգրանտների կապը Հայաստանի հետ և հարազատներին ցուցաբերվող օգնությունը

Արտերկիր մեկնելուց հետո ազգային փոքրամասնությունների 43.7%-ը տարբեր հաճախականությամբ՝ տարին մեկ կամ մի քանի անգամ կամ մեկնելուց հետո 1-2 անգամ, այցելել է Հայաստանում իր հարազատներին և այդ առումով պահպանել կապերը բնակավայրի հետ: Ըստ հետազոտության արդյունքների՝ 25.0%-ը հազվադեպ, իսկ 29.3%-ը ընդհանրապես չի այցելել հարազատներին:

Աղյուսակ 28

Հայաստանում բնակվող հարազատներին այցելելու
հաճախականությունը (%-ով, n=208)

Հաճախականությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Մեկնելուց հետո 1-2 անգամ	7.7	1.9	3.4	0.5	0.5	0.0	13.9
Տարին մի քանի անգամ	3.8	1.0	1.0	0.5	1.4	0.0	7.7
Տարին մեկ	9.1	5.8	1.4	2.9	1.0	1.9	22.1
Հազվադեպ	12.5	2.9	4.8	2.9	1.4	0.5	25.0
Չեն այցելել	18.8	4.3	1.4	1.4	1.0	2.4	29.3
Դժվարանում են պատասխանել	1.9	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.9
Ընդամենը	53.8	15.9	12.0	8.2	5.3	4.8	100.0

Վերջիններս հիմնականում ամբողջ ընտանիքով և հարազատներով Հայաստանից տեղափոխված միգրանտներն են կամ էլ նրանք, ովքեր չունեն ֆինանսական հնարավորություններ: Ըստ տոկոսային հարաբերության՝ հարազատներին չեն այցելել եզդիների 18.8%-ը, ռուսների 4.3%-ը, ուկրաինացիների 2.4%-ը, համապատասխանաբար ասորիների և հույների 1.4%-ը, քրդերի 1.0%-ը:

Հետազոտությունը ցույց տվեց, որ հարազատներին այցելում են տարբեր պատճառներով, սակայն գերակշռում են մոտ հարազատների հուղարկավորությանը կամ հարսանիքին մասնակցելու առիթները, ինչպես և ննջեցյալների գերեզմաններին այցելությունները: Այսպես, եզդիաբնակ Շամիրամ, Ակնալիժ, Զարթոնք և այլ գյուղերում հարցման մասնակիցները չափազանց կարևորել են հայրենի բնակավայրում հարազատներին հուղարկավորվելու գաղափարը, և հնարավորության դեպքում նրանք մեծ գումարներ են ծախսում աճյունը արտերկրից բերելու և իրենց պապական գերեզմանոցում հողին հանձնելու համար: Այդ վարքագիծը նրանք բացատրում են նաև Հայաստանը՝ որպես իրենց հայրենիք ընդունելու հանգամանքով: Օրինակ, վերջին երեք տարիներին Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից, Ֆրանսիայից 6 հանգուցյալ են բերել և հուղարկավորել վերը նշված համայնքներում: Եզդի և քուրդ միգրանտների համար հանգուցյալների շիրիմներին այցելությունները և նախնիների հիշատակման արարողությունները համարվում են էթնիկ ինքնության և հայրենիքի հետ կապերը պահպանելու, ինչպես նաև ազգակիցների և դրացիների հետ շփվելու կարևոր բաղադրիչ: Եզդիների տոնացույցում գոյություն ունի «Ռոժա Մազալան»՝ գերեզմանի օր ավանդույթը, որը նշվում է յուրաքանչյուր տարվա հունիսի

15-ին:¹⁴⁴ Այդ օրը արտերկրում ապրող եզդիների որոշ մասը, որ ունի հնարավորություն, այցելում է Հայաստան՝ ննջեցյալների գերեզմանին: Մյուս հիշարժան տոնը, որին Հայաստանում մասնակցում է արտերկրի միգրանտների որոշ մասը, սրբավայրի հիշատակման օրն է (Կվա-եզիդի): Մոսկվայաբնակ Միրզա Սլոյանը Ակնալիճում իր ֆինանսական միջոցներով կառուցել է Իրաքում գտնվող եզդիների սրբավայրի՝ Լալեշի կրկնօրինակը: Սրբավայրի հիշատակման միջոցառումները տեղի են ունենում յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 29-ին: Հարազատների հուղարկավորությանը, ննջեցյալների գերեզմանոցներին այցելությունները, ինչպես նաև ազգային տոներին և մոտ հարազատների հարսանիքին մասնակցելու երևույթը տարածված են նաև արտերկրում բնակություն հաստատած հույների և ասորիների մեջ: Օրինակ, ըստ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի՝ 2013թ. ապրիլի 1-ին, որը համարվում է ասորիների Նոր տարին, արտերկրի ասորիները շուրջ 40 մեքենայով եկել են հայրենի բնակավայր այդ տոնը նշելու և մասնակցելու: Իսկ Դոնի Ռոստովի ասորական համայնքը Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առթիվ խաչքար է տեղադրել համայնքի եկեղեցու բակում:¹⁴⁵ Նշենք նաև, որ վերը նշված ազգային փոքրամասնությունների շրջանում, սակայն, վերջին տարիներին այդ հարցում արձանագրվել են նվազման միտումներ: Դա պայմանավորված է ոչ միայն ֆինանսական դժվարություններով, նշված ազգային փոքրամասնությունները մուտքի երկրների իրենց կոմպակտ բնակավայրերում հիմնել են նոր գերեզմա-

¹⁴⁴ Եզդիաբնակ գյուղերում այդ տոնը նշվում է տարբեր օրերի:

¹⁴⁵ Գալստյան Մ., ԴԱՆ, Դիմիտրով, 2015թ.:

նոցներ, իսկ հարսանիքներն էլ երբեմն կատարում են դրսում՝ հրավիրելով այստեղի իրենց հարազատներին: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Յարոսլավլի մարզում եզդիները կազմում են մեծ համայնք, որտեղ արդեն հիմնադրել են նաև գերեզմանոց, որը կոչվում է Մալաեզդիա (եզդիների տուն), որտեղ կատարվում է ննջեցյալների հուղարկավորությունը: Ասորիները Կրասնոդարում և Ռոստովում իրենց մահացածների համար հիմնել են գերեզմանոց և այդ տարածաշրջանից մահացածների աճյունը Հայաստան տեղափոխում են միայն ծայրահեղ դեպքերում:

Արտերկրի եզդիները և քրդերը մտահոգված են նաև իրենց երեխաների ազգային ինքնության պահպանման խնդիրներով: «Այստեղ և այնտեղ ապրող եզդի երեխաների միջև շատ տարբերություն կա: Իմ թոռներն այնտեղ սովորում են ռուսական դպրոցում: Ռուս երեխաները շատ ազատ են, նրանք ինչ անում են՝ մեր երեխաները սովորում են: Մեր երեխաները այնտեղ ռուսերեն ավելի լավ են խոսում ու գրում, քան մեր լեզվով» (եզդի, տղամարդ, 55տ.):¹⁴⁶

Որպեսզի այլեթնիկ միջավայրում նրանք չկորցնեն մայրենի լեզուն և ազգային սովորույթները, ամռանը երեխաներին ուղարկում են Հայաստան հարազատների մոտ՝ ապահովելով ազգային մշակույթի հետ շփումը և մայրենի լեզվով հաղորդակցումը:

Անդրադառնանք նաև արտերկրում բնակվող միգրանտների կողմից հարազատներին ցուցաբերվող օգնությանը (տվյալները ներկայացված են 29-րդ աղյուսակում): Ըստ այդմ՝ նրանց 14.9%-ը Հայաստանում գտնվող հարազատներին ցուցաբերել է

¹⁴⁶ Գալստյան Մ., ԴԱՆ, Զարթոնք, 2014թ.:

մշտական, 19.2%-ը՝ հաճախակի օգնություն, իսկ 25.5%-ը՝ հազվադեպ: Ըստ Հայաստանում գտնվող միգրանտների հարազատների տրամադրած տեղեկատվության՝ նրանց 19.2 %-ը օգնություն ցուցաբերելու հնարավորություն չի ունեցել, իսկ 19.7%-ը՝ դրա կարիքը չի ունեցել:

Աղյուսակ 29

Հայաստանում գտնվող հարազատներին ցուցաբերվող
նյութական օգնությունը (%-ով, n= 208)

Օգնությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Մշտապես	8.2	3.8	1.0	0.0	0.5	1.4	14.9
Հաճախակի	11.5	1.9	3.8	0.5	1.4	0.0	19.2
Հազվադեպ	14.4	2.9	3.4	1.4	2.4	1.0	25.5
Հնարավորություն չի եղել օգնելու	7.7	3.8	0.0	5.8	0.5	1.4	19.2
Անհրաժեշտ չի եղել	11.1	3.4	3.8	0.0	0.5	1.0	19.7
Դժվարանում եմ պատասխանել	1.0	0.0	0.0	0.5	0.0	0.0	1.4
Ընդամենը	53.8	15.9	12.0	8.2	5.3	4.8	100.0

Հետազոտությունից պարզվեց, որ արտերկրից միգրանտները օգնություն են տրամադրում երկու ուղղությամբ. առաջին՝ նեղ ընտանեկան-ազգակցական, և երկրորդ՝ համայնքային մակարդակով: Առաջին մակարդակում միգրանտների շրջանում առավել տարածված է Հայաստանում գտնվող տարեց ծնողներին և մոտ ազգակիցներին պարբերաբար ցուցաբերվող ֆինանսական օգնությունը, որը գնահատում են որպես նրանց եկամտի կարևոր աղբյուր: «Մրտի վիրահատություն եմ տարել: Այդ գումարը Ռուսաստանում գտնվող տղաներս են

ուղարկել: Ամեն ամիս նրանք գումարներ են ուղարկում, որ կարողանանք այստեղ տունը յուր տանենք: Բացի դրանից, մեր ազգային տոները նշելու առիթով նույնպես առանձին գումար են ուղարկում» (քուրդ, տղամարդ, 54 տ.):¹⁴⁷

Միգրանտներն իրենց ազգակիցներին էական օգնություն են ցուցաբերում նաև հարսանիքների, ծնունդների, թաղման ծիսակատարությունների և դժբախտ պատահարների դեպքում:

Հետազոտության ընթացքում հարցման մասնակիցները նշել են բազմաթիվ դեպքեր, երբ իրենց հայրենակիցները, 1990-ական թվականներին հաստատվելով արտերկրում, դարձել են խոշոր գործարարներ և տարբեր տեսակի օգնություն են ցուցաբերում իրենց հայրենի բնակավայրին: Արգնի գյուղի համայնքի ղեկավարը պատմեց իրենց համագյուղացիներից մեկի՝ Լիտվայում ապրող Պ. Սայադովի մասին, որը հոգացել է հինգ ասորի երիտասարդների ֆինանսական ծախսերը. նրանք բարձրագույն կրթություն են ստանում Ռիգայում: Բացի դրանից, նա ցանկություն է հայտնել համայնքում ստեղծել փոքր բիզնեսի օբյեկտներ և հայրենակիցներին տեղում ապահովել աշխատանքով: Արտերկրում ապրող ասորիները օգնություն են ցուցաբերել գյուղի դպրոցին և մանկապարտեզին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին: Եզդիաբնակ համայնքներում նշեցին նաև Ֆ. Ալոյանի մասին, որը եզդիաբնակ Շամիրամ համայնքում մոտ 100 հազ. ԱՄՆ դոլար է ծախսել և գյուղի գերզմանոցի մոտ տղամարդկանց համար կառուցել 2000-հոգանոց սզո սրահ: Ընդունված ավանդույթի համաձայն՝ հոգեհացի ժամանակ տղամարդիկ և կանայք միասին չեն նստում: Իսկ ռուսաստա-

¹⁴⁷ Գալստյան Մ., ԴԱՆ, Ալազյազ, 2014թ.:

նախնակ Ֆ. Օզմանյանի միջոցներով նույն տեղում սգո սրահ է կառուցվել նաև կանանց համար: Արտերկրի եզդիներն իրենց ֆինանսական ներդրումն են ունեցել նաև Շամիրամ գյուղում սրբավայրի կառուցման գործում, ինչպես նաև ֆինանսական աջակցություն են ցուցաբերել համայնքի դպրոցին:

Եզդի գործարարները որոշ բարեգործություն են անում նաև ՌԴ-ում: Այսպես, Շամիրամ համայնքի եզդիներից մեկը պատմեց, որ նրա տղաները Նովոսիբիրսկում զբաղվում են բիզնեսով և ամեն ամիս հովանավորում են այդ քաղաքի 3-4 մանկապարտեզների երեխաների սնունդը:

Աղյուսակ 30

Միգրանտների վերադարձի հետ կապված հետազա
ծրագրերը (%-ով, n=208)

Վերադարձի ծրագիրը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Կվերադառնալ	5.3	0.5	0.0	0.5	0.0	1.0	7.2%
Նայած՝ ինչպես կատացվի	8.2	1.0	0.0	1.4	0.0	1.9	12.5
Չեն վերադառնա	32.2	14.4	9.6	6.3	1.9	0.5	64.9
Դժվարանում են պատասխանել	8.2	0.0	2.4	0.0	3.4	1.4	15.4
Ընդամենը	53.8	15.9	12.0	8.2	5.3	4.8	100.0

Իսկ «Ի՞նչ հետազա ծրագրեր ունեն, կվերադառնա՞ն նրանք արդյոք Հայաստան» հարցին Հայաստանում գտնվող նրանց հարազատների գերակշիռ մեծամասնությունը (64.9%) տվել է բացասական և միայն 7.2%-ը՝ դրական պատասխան: Հայաստան վերադարձի հետազա պլանները դեռևս չի հստակեցրել միգրանտների 12.5%-ը: Այդ հանգամանքը առաջին հերթին

պայմանավորված է Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի հետագա բարելավման խնդրով:

Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարների և բնակչության շրջանում խորացված հարցազրույցների միջոցով հավաքված կարծիքները նույնպես փաստում են, որ միգրանտների գերակշռող մեծամասնությունը Հայաստանից հեռացել է ընդմիշտ և մշտական բնակություն հաստատել արտերկրում: Օրինակ, «Քուրդ մտավորականների խորհուրդ» ՀԿ-ի ղեկավար Ա. Սարդարյանը արտահայտել է հետևյալ տեսակետը. «Հայաստան չեն վերադառնա: Առաջ գոնե եթե մահվան դեպք էր լինում, բերում էին այստեղ հուղարկավորում: Հիմա դա էլ չկա: Եթե տնտեսապես էլ Հայաստանը անցնի Գերմանիային, Ֆրանսիային, մեկ ա հետ չեն գա, որովհետև արդեն այնտեղ սովորել են: Այնտեղ մեր մշակույթը արագ են կորցնում»:¹⁴⁸Իսկ Հայաստանի հույների «Պատրիդա» ՀԿ-ի նախագահ Է. Պոլատովը նշեց. «Չեն կարող ասել կվերադառնան, թե ոչ, եթե Հայաստանից հեռանում են, ոնց հետ կգան: Շատերը ժամանակին նույնիսկ այստեղի քաղաքացիությունից են հրաժարվել: Հիմա դժվար կլինի վերականգնել այդ քաղաքացիությունը: Գուցե մի բան փոխվի՝ գան, բայց դժվար գան, չեն հավատում»:¹⁴⁹

Հ. Թամոյանը, անդրադառնալով եզդիների վերադարձի խնդրին, նշում է. «Տպավորությունն այնպիսին է, որ մեկնածուները մեծ մասամբ հետ չեն գա: Այդ միտումը չկա: Չնայած հոգով, մտքով նրանք կապված են Հայաստանի հետ, հատկա-

¹⁴⁸ Տե՛ս Մարկոսյան Ա., Ա. Սարդարյանի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

¹⁴⁹ Տե՛ս Մարկոսյան Ա., Է. Պոլատովի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

պես այն սերունդը, որը այստեղ է մեծացել, ծնվել: Նրանք հոգեպես շատ դժվար են տանում Հայաստանից գնալը, որովհետև այստեղ են մեր գերեզմանները, այստեղ է եզդիական ամենամեծ համայնքը, այստեղ են նրանց ազգականները, բարեկամները»:¹⁵⁰

Վերադարձի խնդրին առնչվող կարծիքներում հանդիպում ենք նաև լավատեսական մոտեցումների: Օրինակ, «Աթուր» ասորական ասոցիացիայի նախագահը նրանց վերադարձը կապում է Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման հետ. «Եթե առաջիկայում Հայաստանում կյանքը բարելավվի, ապա ես համոզված եմ, որ ասորիների մեծ մասը կարող է վերադառնալ, որովհետև կապ պաշտպանելով նրանց հետ՝ տեսնում ենք՝ մարդիկ ինչքան են տանջվում իրենց բնօրրանը թողնելով, առավել ևս, եթե տարիքով մարդիկ են»:¹⁵¹ Երևանի «Հիլիոս» հունական ՀԿ-ի նախագահ Ս. Ռաֆայելիդիսը վերադարձի խնդիրը ներկայացրեց Լոռու մարզի հունարենակ Մադան գյուղի օրինակով: Այնտեղ ներկայումս բնակվում է 6 ընտանիք, հիմնականում տարեցներ: Ըստ նրա՝ այդ ընտանիքներից երկուսի երեխաները ապրում են Հունաստանում, իսկ ծնողները այնտեղից վերադարձել և այստեղ հիմնել են փոքր բիզնես¹⁵²: Լ. Ռշտունին պատմեց մի ռուս ընտանիքի մասին, որը Հայաստանում գինվորական ծառայության պատճառով Հայաստան է եկել շուրջ 50 տարի առաջ. «Նրա կինը և

¹⁵⁰ Տե՛ս Մարկոսյան Ա., Հ. Թամոյանի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

¹⁵¹ Տե՛ս Մարկոսյան Ա., Ա. Միխայելովի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

¹⁵² Տե՛ս Մարկոսյան Ա., Ս. Ռաֆայելիդիսի հետ նշված հարցազրույցի արդյունքները:

երեխաները 90-ական թթ. մեկնեցին Մոսկվա և մի քանի տարի այնտեղ ապրելուց հետո վերադարձան: Ասացին, որ գնում ենք մեր Հայաստանը, կապրենք Ջրվեժի ամառանոցում, կջերմանանք Հայաստանի արևով, կապրենք հանգիստ և խաղաղ կյանքով»:¹⁵³

Այն հանգամանքը, որ Հայաստանից հեռացած ազգային փոքրամասնությունների մեծ մասը այստեղ չի վաճառել բնակարանները, հատկապես տարեցների համար հետագա վերադարձի կարևոր պայման է: Ազգապահպանման տեսակետից նրանց որոշ մասը արտագաղթը համարում է բացասական երևույթ, մինչդեռ մարդկանց կյանքի բարելավման, աշխատանք գտնելու, կենսամակարդակի բարձրացման առումով համարում են դրական:

¹⁵³ Տե՛ս Մարկոսյան Ա., Լ. Ռշտունու հետ նշված հարցազրույցի արդյունքները:

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ
ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

6.1. Միգրանտների լեզվական փոփոխությունները

Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների համար մայրենի լեզուն համարվում է նրանց ինքնության կարևոր բաղադրամաս, որի միջոցով նրանք պահպանում և սերնդեսերունդ փոխանցում են իրենց ազգային մշակույթը: Այս տեսակետից կարևոր է պարզել, թե միգրանտները, ապրելով այլերնիկ միջավայրում, որքանով են կարողանում պահպանել այն, և ինչ փոփոխություններ են տեղի ունենում նրանց լեզվական վարքագծում: Նախ անդրադառնանք նրանց դպրոցական լեզվական կրթությանը: Աղյուսակ 31-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ բացառությամբ արտերկրում գտնվող եզդիների և քրդերի, մյուս ազգային փոքրամասնություններից ռուսները, ասորիները, հույները և ուկրաինացիները Հայաստանում հիմնականում դպրոցական կրթություն ստացել են ռուսերենով և նրանց մեջ փոքր տոկոս է կազմում հայերենով կրթություն ստացողների թիվը:

Ի տարբերություն նրանց՝ եզդիների և քրդերի շրջանում մեծ տոկոս են կազմում այն մարդիկ, որոնք նախընտրում են, որ իրենց երեխաները սովորեն հայկական դպրոցներում: Հարցման ընթացքում հանդիպեցին նաև հայերենը իրենց մայրենի լեզուն համարող ընտանիքներ, քանի որ եզդիներենը, ըստ

նրանց, գործնական չէ, և դրանով միայն շփվում են ընտանիքում և ներհամայնքային հաղորդակցման ժամանակ:

Աղյուսակ 31

Միգրանտների դպրոցական լեզուն (%-ով, n=208)

Լեզուն	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Հայերեն	48.1	1.4	1.0	2.9	4.8	1.4	59.6
Ռուսերեն	1.9	9.6	11.1	5.3	0.0	2.4	30.3
Մայրենի	3.8	4.8	0.0	0.0	0.5	1.0	10.1
Ընդամենը	53.8	15.9	12.0	8.2	5.3	4.8	100.0

Չնայած դրան՝ փաստենք, որ վերջին շրջանում ազգային լեզուն որպես մայրենի լեզու համարողների թիվը մեծացել է՝ կապված էթնիկ ինքնագիտակցության բարձրացման հետ:

Հետազոտությունից պարզվեց, որ երկար ժամանակ ապրելով այլէթնիկ միջավայրում, արտերկրում գտնվող միգրանտների լեզվական վարքագծում տեղի է ունենում որոշակի փոփոխություն: Բացի մայրենիից, նրանք սկսում են սովորել նաև տեղի բնակչության լեզուն՝ որպես հաղորդակցման և սոցիալական շարժունության կարևոր միջոց, իսկ երեխաները կրթություն են ստանում այդ դպրոցներում:

Ըստ աղյուսակ 32-ի տվյալների՝ արտերկրում բնակվող ազգային փոքրամասնությունների որոշ մասը, բացի իրենց մայրենիից և հայերենից, ազատորեն տիրապետում է նաև այլ լեզուների: Օտար լեզուների իմացության շրջանակը պայմանավորված է բնակություն հաստատած երկրներում գործածվող լեզվի հանգամանքով: Մասնավորապես եզդիների և քրդերի հիմնական մասը արտագաղթել է Ռուսաստան, որի շնորհիվ նրանք ազատորեն սկսել են տիրապետել ռուսերենին, որոշ

մասը՝ Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, և սովորել են այդ լեզուները:

Աղյուսակ 32

Միգրանտների շրջանում լեզուների առավել
ազատ իմացությունը (%-ով, n=269)

Լեզուների իմացությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Մայրենի	21.6	8.6	4.1	2.6	3.3	0.7	40.9
Հայերեն	13.4	2.2	1.1	3.0	2.2	1.5	23.4
Ռուսերեն	12.3	2.6	2.2	2.2	2.2	1.5	23.0
Ֆրանսերեն	3.3	1.5	0.0	0.0	1.1	0.7	6.7
Վրացերեն	0.7	0.4	0.0	0.7	0.0	0.0	1.9
Անգլերեն	0.4	0.4	0.0	0.4	0.4	1.5	3.0
Թուրքերեն	0.0	0.0	0.0	0.0	0.4	0.0	0.4
Գերմաներեն	0.0	0.0	0.4	0.0	0.4	0.0	0.7
Ընդամենը	51.7	15.6	7.8	8.9	10.0	5.9	100.0

Մինչդեռ, օրինակ, մինչև արտերկիր մեկնելը ռուսաց լեզվի իմացությունը շատ քիչ էր տարածված երիտասարդ, իսկ հազվադեպ ավագ և միջին սերնդի եզդիների և քրդերի մոտ: Սա նշանակում է, որ միգրացիան ազգային փոքրամասնությունների համար վերածվում է մշակութային և կրթական կապիտալի ստեղծման: Լեզուների իմացությունը նպաստում է նրանց կողմից նոր արժեքների յուրացմանը, մշակութային-կենցաղային գծերի փոփոխությանը, այլեթնիկ մշակութային տարրերի ձեռքբերմանը, ազգամիջյան շփումների ինտենսիվությանը: Ապրելով այլեթնիկ միջավայրում՝ հատկապես եզդիների և քրդերի երրորդ սերնդի մեջ դիտարկվում է կրթության նկատմամբ պահանջարկի բարձրացում: Նրանք այդ երկրներում դպրոցական կրթություն ստանում են օտար լե-

գուներով և այնուհետ ընդունվում տեղի բարձրագույն ուսումնական հաստատություններ: Եթե Հայաստանում գտնվող եզդիաբնակ և քրդաբնակ գյուղական համայնքներում կրթությունն ընդհանուր առմամբ դեռևս կարևոր արժեք չի համարվում, հատկապես աղջիկների համար, ապա այլեթնիկ միջավայրում հետագայում աշխատանք ունենալու և մասնագետ դառնալու համար կրթությունն արժևորվում և խրախուսվում է: Ազգային փոքրամասնությունների հետ իրականացված խորացված հարցազրույցների արդյունքները նույնպես փաստում են միգրանտների սերունդների մեջ նոր կրթական կապիտալի ձևավորման միտումների մասին: Օրինակ, ըստ Շամիրամ համայնքի եզդիերենի և գրականության ուսուցիչ Ջ. Ուսուբյանի՝ վերջին տարիներին համայնքից Հայաստանի բուհերում սովորողներ չկան, մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունում և Եվրոպայում առկա է շուրջ 30 եզդի սովորող: Այսպես, Արմավիրի մարզի Ակնալիճ և Ջարթոնք համայնքից մոտ 23 եզդի երիտասարդ Ռուսաստանի Դաշնությունում և արևմտյան երկրներում ստանում է բարձրագույն կրթություն: Նրանք նշեցին, որ ՌԴ-ում և Արևմուտքում կառավարման համակարգում գիտության, մշակույթի, կրթության, առողջապահության, գործարարության, սպորտի և ռազմական գործի ոլորտներում ունեն ճանաչված մասնագետներ: Այնուհանդերձ, արտերկրում բարձրագույն կրթություն ստանալու փաստը միանշանակ չեն գնահատում եզդիների և քրդերի սոցիալական տարբեր շերտերը: Նրանց որոշ մասը մտահոգված է, որ երիտասարդ սերունդը արտերկրում այլ լեզուներով ստանում է դպրոցական և բարձրագույն կրթություն, ինտեգրվում է այդ հասարակությանը՝ հետագայում կորստի մատնելով ազգային լեզուն և մշակույթը:

6.2. Միգրանտների ազգային ինքնության պահպանման խնդիրը

Արտերկրի քաղաքային և գյուղական բնակավայրերում հավաք բնակվող եզդի, քուրդ և ասորի միգրանտները ինքնակազմակերպվել և ձևավորել են իրենց ազգային կրոնական-մշակութային համայնքները՝ որոշակի ինստիտուցիոնալ կառույցներով: Ըստ Արմավիրի մարզի Ջարթոնք համայնքի գյուղապետարանի աշխատակազմի ղեկավար Ք. Աջոյանի՝ այդպիսի խոշոր ազգային համայնքներ եզդիներն ունեն Յարուլավում, Գորկիում, Կրասնոդարում՝ ստանալով պետական գրանցում: Իսկ Զ. Ուսուբյանը վկայում է, որ Գերմանիայում ստեղծել են «Եզդիների տուն» անվամբ կրթամշակութային, բարեգործական կառույց, որտեղ հավաքվում են եզդիները և նշում իրենց ազգային և կրոնական տոները, անցկացնում միջոցառումներ, սովորեցնում են եզդիերեն: Այդ կառույցների նպատակն է այլեթնիկ միջավայրում համախմբել նրանց ջանքերը ազգային լեզվի մշակույթի պահպանման համար: Ինքնության հարցում նրանք հատկապես կարևորում են ազգային տոների և ծեսերի պահպանումը: Դրանք միգրանտները մեծ շուքով նշում են իրենց համայնքներում՝ ընտանեկան, ազգակցական և համայնքային միջավայրում: Ռուսաստանի Դաշնությունում և Արևմուտքում հաստատված եզդիները և քրդերը իրենց ազգային գլխավոր տոներից փետրվարին նշում են «Այդա Խրդնեվին», մարտին՝ «Կլոջե Սարըսալին», իսկ ղեկտեմբերին՝ «Այդա Եզիդին»:

«Սվերդլովսկում կա եզդիական մեծ համայնք: Այնտեղ մեր բոլոր ազգային տոները նշում են, օրինակ՝ Նոր տարին՝ Ռոժին, ղեկտեմբերին՝ Պասը և այլն: Այդ անում են, որպեսզի օտար

միջավայրում չկորցնեն մեր սովորույթները: Առանց այդ էլ նրանք գրավոր եզդիերեն լեզվին չեն տիրապետում: Օրինակ՝ եղբորս աղջիկը ապրում է Անգլիայում և անգլերենից թարգմանություններ է անում, բայց եզդիերեն լեզվով գրել և կարդալ չգիտի» (եզդի, կին, 50 տ.):¹⁵⁴

Հարցումներից պարզվեց, որ այլեթնիկ միջավայրում նրանք այն նշում են մեծ հանդիսություններով, փոխայցելություններով, խնջույքներով, որին երբեմն մասնակցում են նաև այնտեղ բնակվող հայերը և այլ ազգությունների ներկայացուցիչները: Հետաքրքիր է, որ երկար տարիներ ապրելով Հայաստանում և յուրացնելով այդ մշակույթի մի շարք տարրեր՝ օտար միջավայրում նրանք շարունակում են այն պահպանել: Հատկապես ավագ սերունդը արտերկրում հաճախում է հայկական եկեղեցի, մոմ վառում, հայերի հետ նշում Հայաստանի Հանրապետության Անկախության օրը, Մեծ եղեռնի և երկրաշարժի զոհերի հիշատակի օրերը: Նրանք արտերկրում չեն փոխել նաև իրենց հայկական ծագում ունեցող ազգանունները, իսկ որոշ մասն էլ Հայաստանը շարունակում է համարել իր հայրենիքը: Եզդիների որոշ մասն ընդգրկվում է նաև այնտեղ ձևավորված հայկական էթնիկ ցանցերում:¹⁵⁵ Ռուսաստանի Դաշնությունում որոշ եզդիներ իրենց երեխաներին ուղարկում են հայկական կիրակնօրյա դպրոցներ: Նրանք նաև մտահոգված են այն խնդրով, որ միգրանտների շրջանում դիտարկվում է ազգային կրոնից հրաժարվելու և այլ կրոնական ուղղություններին հարելու երևույթը: Արտերկրում հաստատված եզդի և

¹⁵⁴ Գալստյան Մ., ԴԱՆ, ք. Արտաշատ, 2014 թ.:

¹⁵⁵ Գալստյան Մ., Օմսկի հայկական համայնքի ձևավորումը աշխատանքային միգրացիային համատեքստում, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Ե., 2010, էջ 212:

քուրդ միգրանտների ազգային-կրոնական և մշակութային ինքնության պահպանման և էթնիկ արժեքների տարածման նպատակով Հայաստանում գործող նրանց հասարակական կազմակերպությունները գրքեր, թերթեր, նյութեր են ուղարկում, կազմակերպում են փոխայցելություններ և համատեղ մշակութային միջոցառումներ:

Միգրանտների էթնիկ արժեքների պահպանման և էթնո-համախմբման գործում որոշակի աշխատանքներ է կատարում նաև արտերկրում ձևավորված ասորական համայնքը: Մասնավորապես Ռուսաստանի, Իրանի, Շվեդիայի ասորական համայնքներն իրենց ներդրումն ունեն ոչ միայն տեղի ասորիների մայրենի լեզվի պահպանման, այլև այնտեղ նրանք Հայաստանի ասորական դպրոցների համար վերապատրաստում են լեզվի և գրականության ուսուցիչներ, աշակերտներին ապահովում են դասագրքերով: Համայնքի գործունեությունում մեծ տեղ է հատկացվում տոների, ազգային ավանդույթների և սովորույթների պահպանմանը: Արտերկրի ասորական համայնքներում ընդունված են եկեղեցական տոնակատարությունները՝ նվիրված այն սրբի հիշատակին, որի անունը կրում է տվյալ գյուղի ուղղափառ եկեղեցին: Ուշագրավ է, որ այդ տոնակատարությունները ինչպես Հայաստանի, այնպես էլ դրսի համայնքներում նշվում են նույն օրը: Օրինակ՝ Արգնի գյուղի և Կրասնոդարի երկրամասի ասորիները օգոստոսի 28-ին նշում են Սբ Մարիամի տոնը, որին մասնակցում են ոչ միայն այնտեղ բնակվող Արգնիի, այլև Վերին Դվինի, Դիմիտրովի և այլ համայնքների ասորիները, երբեմն նաև հայեր և այլ ազգությունների ներկայացուցիչներ: Արտերկրում ասորիները մեծ շուքով են նշում ասորական Նոր տարվա տոնը՝ Ապրիլի 1-ը, և Նահատակի օրը՝ Ապրիլի 7-ը: Բացի դրանից, Կրաս-

նողարի և Դոնի Ռոստովի համայնքներում երեխաներին մայրենի լեզու սովորեցնելու նպատակով նրանք կազմակերպել են կիրակնօրյա ասորական դպրոցներ:¹⁵⁶

Ռուսաստանում հոծ բնակվող ասորական և հայկական համայնքների միջև գոյություն ունեն սերտ շփումներ, որտեղ նրանք մասնակցում են հայկական պետական, ազգային և կրոնական մի շարք տոների, հաճախում են հայկական եկեղեցի և կատարում արարողություններ: Ասորիները, դարեր շարունակ ապրելով հայերի հետ, ձեռք են բերել մշակույթի և կենցաղի մի շարք ընդհանուր գծեր, որոնք ասորի միգրանտներն իրենց հետ տեղափոխում են այլ երկրներ: Հայաստանի ասորական կազմակերպությունները ոչ միայն սերտորեն համագործակցում են արտերկրում գործող ասորական ազգային-մշակութային և կրոնական, այլև հայկական համայնքների հասարակական կազմակերպությունների հետ: Ըստ «Աթուր» ասորական ասոցիացիայի նախագահ Ա. Միխայլովի՝ 1998 թվականից նրանց կազմակերպությունը դարձել է համաշխարհային ասորական միության անդամ, իսկ նա ընտրվել է վարչության անդամ: Նրանք պարբերաբար հրավիրում են հավաքներ և քննարկում տարբեր երկրներում իրենց համայնքների առջև ծառացած խնդիրները: Ռուսաստանի ասորական համայնքում գործող կիրակնօրյա դպրոցների համար Հայաստանից մոտ 30 օրինակ ասորերենի և գրականության դասագրքեր են ուղարկել, որ երեխաները արտերկրում կարողանան տիրապետել մայրենի լեզվին: Ըստ Հայաստանի ասորական միությունների ֆեդերացիա «Խայադթա», Ասորական «Աշուր» երիտասարդական կենտրոնի նախագահ Բ. Գասպարյանի՝

¹⁵⁶ Գալստյան Մ., ԴԱՆ, Դիմիտրով, 2015 թ.:

նրանք ասորերենով հրատարակում են թերթ և տրամադրում համայնքներին: Ունեն նաև երգի-պարի համույթ, որը համերգներով հանդես է գալիս Ռուսաստանի՝ ասորիներով բնակեցված վայրերում:

Ինչ վերաբերում է ռուսներին, ապա նրանք Հայաստանից արտագաղթելուց հետո հիմնականում բնակություն են հաստատել Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում և Ռուսաստանի կենտրոնական մարզերում, որտեղ նրանց մի մասը բնակվում է համախմբված ձևով: Օրինակ, Տուլայի մարզում Հայաստանի ռուս վերաբնակները հիմնել են Սլոբոդկա գյուղը, որն ունի ավելի քան երկու տասնյակ ընտանիք:¹⁵⁷ Նրանց հիմնական մասը վերաբնակվել է իրենց պատմական հայրենիքում և ունի ռուսական ինքնություն, սակայն Հայաստանի էթնոսոցիալ միջավայրից նրանք փոխառել են մի շարք կենցաղամշակութային տարրեր: Այդ հանգամանքը դարձել է Հայաստանից արտագաղթած ռուսների կարևոր մշակութային բնութագրիչներից մեկը: Նույնը կարող ենք նշել նաև հույների և ուկրաինացիների մասին, որոնց հիմնական մասը արտագաղթեցին պատմական հայրենիք, իսկ որոշ մասը՝ Ռուսաստանի Դաշնություն՝ իրենց հետ տանելով հայկական մշակույթի մի շարք տարրեր: Հարցումներից պարզվեց, որ Ռուսաստան, Հունաստան և Ուկրաինա վերաբնակեցվածների տոնածիսական մշակույթում, բացի համապետական, ազգային-ավանդական տոներից, հայկական համայնքի հետ նշում են նաև Մեծ եղեռնի և երկրաշարժի զոհերի հիշատակի օրերը:

¹⁵⁷ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները այսօր I, էջ 42:

Այսպիսով, արտերկրում գտնվող Հայաստանի ազգային փոքրամասնությունների միգրանտների մեջ մենք կարող ենք առանձնացնել բուն ազգային, հայկական և այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ շփումների հիման վրա ձևավորված մշակույթի տարրեր: Այն ներառում է բազմամշակութայնության որոշակի գծեր:¹⁵⁸

6.3. Միջէթնիկ ամուսնությունների նկատմամբ առկա դիրքորոշումները

«Պարտադիր է արդյոք ամուսնանալու համար ծնողների համաձայնությունը ստանալ» հարցին մասնակիցների պատասխանները ներկայացված են 33-րդ աղյուսակում:

Աղյուսակ 33

Ամուսնանալիս ծնողների կարծիքը (%-ով. n=162)

Ծնողների կարծիքը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Հնդամենը
Պարտադիր է	38.3	8.0	6.2	1.2	3.7	2.5	59.9
Թերևս պարտադիր չէ	3.1	7.4	3.7	4.9	2.5	2.5	24.1
Դժվարանում եմ պատասխանել	9.9	1.2	1.9	0.6	2.5	0.0	16.0
Հնդամենը	51.2	16.7	11.7	6.8	8.6	4.9	100.0

Ըստ հետազոտության ընտրանքում ընդգրկված ազգային փոքրամասնությունների թվի համամասնության՝ հատկապես եզդիների և քրդերի, այնուհետև ռուս հնաբնակների և ասորիների վարքագծում գերակշռում են ավանդական պատ-

¹⁵⁸ Мультикультурализм и трансформация постсоветских обществ, М., 2002, с. 176-178.

կերացումները, իսկ մյուսների մոտ՝ անհատական արժեքները: Ըստ ավանդական պատկերացումների, օրինակ, եզդիների և քրդերի շրջանում թույլատրվում են ոչ շատ մոտ ազգակիցների միջև ամուսնությունները՝ պայմանավորված «տրվող օժիտը և իրենց հալալ կաթնակերը (խոսքը աղջկա մասին է) ուրիշի ձեռքում չհայտնվելու, ընտանիքին լավ ճանաչելու, մեծերին խոնարհությամբ ծառայելու և հարգելու, լավ ընտանիք կազմելու»¹⁵⁹ պատճառաբանությամբ: Ուշագրավ է, որ Ռուսաստանում և արևմտյան երկրներում ապրող եզդի և քուրդ միգրանտների որոշ մասն այնտեղ ստանում է բարձրագույն կրթություն՝ կրելով այդ միջավայրի մշակութային ազդեցությունը, այնուհանդերձ, ամուսնանալու հարցում կարևորում է ծնողների համաձայնությունը. «Իմ տղաների հարսնացուներին ես եմ ընտրել, իմ կարծիքը հարցրել՝ նոր եմ ամուսնացել: Իմ թոռնիկն ապրում է Ռուսաստանում, ուզում է ամուսնանալ, դրա համար գյուղի մի քանի աղջիկների նկարներ ենք ուղարկել, որ հավանի և գա ամուսնանա: Ամուսնանալուց առաջ պարտադիր չէ, որ տղան ու աղջիկը ընկերություն անեն: Եղբորս տղան այնտեղ իրավաբանական ֆակուլտետում է սովորում, ավարտելուց հետո նրա համար էլ մեր մոտից աղջիկ պիտի ընտրենք» (եզդի, տղամարդ, 80 տ.):¹⁶⁰

Այդպիսի պատկերացումներ են պահպանվում նաև ռուս հնաբնակ մոլդկանների մեջ: Կրոնական պատկերացումներից բխող արգելքներն իրենց ազդեցությունն են թողել նաև միջէթնիկ ամուսնությունների վերաբերյալ նրանց դիրքորոշումների վրա: Նրանց կողմից խիստ կերպով պահպանվող ավանդա-

¹⁵⁹ Գալստյան Մ., ԴԱՆ, Զարթոնք, 2014թ.:

¹⁶⁰ Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2013թ.:

- կան արգելքների հետևանքով հնարնակ մոլոկանները ոչ միայն չեն ամուսնանում այլազգիների, այլև նույն ազգության, սակայն ուղղափառ դավանանքի ներկայացուցիչների հետ:

Աղյուսակ 34

Միջերևիկ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումները
(%-ով. n=162)

Օտոնների դիրքորոշումը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ուկրաինացի	Ընդամենը
Համարում են անցանկալի ամուսնություն	38.9	0.0	0.0	0.6	4.9	0.6	45.1
Ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի, եթե նա պահպանում է իմ ժողովրդի սովորությունները	3.7	0.0	4.9	0.0	0.6	0.0	9.3
Կգերադասեի իմ ազգի հետ, սակայն ընտրության դեմ չեի առարկի	6.2	0.0	1.9	0.6	1.9	0.0	10.5
Ամուսնանալիս ազգությունը նշանակություն չունի	1.2	15.4	3.1	4.9	1.2	4.3	30.2
Դժվարանում եմ պատասխանել	1.2	1.2	1.9	0.6	0.0	0.0	4.9
Ընդամենը	51.2	16.7	11.7	6.8	8.6	4.9	100.0

Հարցազրույցին մասնակցող բոլոր եզդիները և քուրդերը միջերևիկ ամուսնությունների նկատմամբ բացասական վերաբերմունքը բացատրում էին հայրենիք չունենալու, փոքրաթիվ լինելու հանգամանքով, որը համարում էին իրական վտանգ ազգի ուժացման համար: Շամիրամ համայնքի 80-ամյա բնակչուհու պատկերավոր խոսքերով «ամեն թոշուն պետք է իր երամի

հետ գնա, ուրիշների հետ ամուսնությունը մեծ վտանգ է ազգը կորցնելու համար»:¹⁶¹ Ըստ նրանց՝ միջէթնիկ ամուսնությունների վրա ձևավորված ընտանիքներում չեն պահպանվում նրանց կրոնական նորմերը, ազգային սովորույթները և ավանդույթները: Նրանց կարծիքով այդպիսի ընտանիքներում երեխաների դաստիարակությունը և սոցիալականացումն ընթանում է օտար մշակութային արժեքների ազդեցությամբ, որը նրանց հեռացնում է ազգային-կրոնական ակունքներից: Հարցման մասնակիցների կարծիքով միջէթնիկ ամուսնությունները լուրջ վտանգ են ազգային ինքնությանը: Այդ երիտասարդների նկատմամբ սովորութային ուժով կիրառում են մի շարք պատժամիջոցներ՝ փոխվում է համայնքի վերաբերմունքը՝ հատկապես հարազատները սահմանափակում են նրանց հետ շփումները, համայնքում ունենում են կարգավիճակի կորուստ: Հարցազրույցի մասնակիցներից մեկը իրենց համայնքի մասին պատմեց մի դեպք, թե ինչպես եզդի երիտասարդը Ռուսաստանի բուհերից մեկում ուսանելու տարիներին սիրահարվում և ամուսնանում է իր համակուրսեցի ռուս աղջկա հետ: Համայնքը և հարազատները երկար տարիներ չեն ընդունում նրանց: Հետո այդ աղջիկը երեխաների հետ հաճախակի է այցելում գյուղ, սովորում նրանց լեզուն, սովորույթները, կենցաղը. հարազատները ընդունում և սկսում են շփվել նրա հետ: Չնայած եզդիները դարեր շարունակ ապրում են հայերի հետ կողք կողքի, այնուհանդերձ, հայերի հետ ամուսնությունը նույնպես չի խրախուսվում: Օրինակ, համայնքներից մեկում պատմեցին մի դեպք, թե ինչպես եզդի շեյխի տղան ծառայել է Ղարաբաղում, սիրահարվել հայուհուն, գորացրվելուց հետո

¹⁶¹ Գալստյան Մ., ԴԱՆ, Շամիրամ, 2013թ.:

բերել է գյուղ՝ ամուսնանալու նպատակով: Ծնողները դեմ են եղել և տարիներ շարունակ չեն ընդունել նրանց: Հատկապես ծնողները և համայնքը դատապարտել են այդ տղային, քանի որ նա ուներ շեյխի որդու կարգավիճակ և ոչ միայն չպետք է ամուսնանար այլազգիի հետ, այլև պետք է ամուսնանար միևնույն կարգավիճակ ունեցող իր ազգի ներկայացուցչի հետ: Այդպիսի ամուսնությունների հետևանքով նրանք ոչ միայն օտարվում են ընտանիքից, այլև համայնքից, իսկ նրա ընտանիքը համայնքում ունենում է հեղինակության և կարգավիճակի կորուստ: Այնուհանդերձ, հատկապես քաղաքային բնակավայրերում երբեմն հանդիպում են այնպիսի ընտանիքներ, որտեղ կինը հայ է, իսկ ամուսինը՝ եզդի: Վերջին շրջանում հատկապես դրսում գտնվող միգրանտների նկատմամբ այդ պահանջներն ունեն մեղմացման որոշակի միտումներ: Բացառությամբ համայնքի տարեց անդամների, մյուսները այդպես խիստ չեն մոտենում օտարների հետ ամուսնություններին, հատկապես երբ եզդի տղան մեծացել և կրթություն է ստացել այլէթնիկ միջավայրում: Ի տարբերություն տղայի՝ օտարների հետ աղջիկների ամուսնության նկատմամբ բացասական վերաբերմունքն ավելի խիստ է արտահայտված: Այսպիսով, միջէթնիկ ամուսնությունների նկատմամբ եզդիները և քրդերը դրսևորում են անհանդուրժողական վերաբերմունք՝ պայմանավորված ուժացման և էթնիկ ինքնության կորստի վտանգով:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՅԻԱՆ

7.1. Աշխատանքային միգրանտների կազմը

Հետազոտության արդյունքներով ազգային փոքրամասնությունները Հայաստանից դուրս մեկնում են նաև աշխատանքային միգրացիայի, որը կազմում է ամբողջ հետազոտված զանգվածի 18.1%-ը (46 մարդ): Նրանք այն անձինք են, որոնք հետազոտվող ժամանակահատվածում ավելի քան 3 ամիս անընդմեջ գտնվել են հանրապետությունից դուրս՝ որպես միջազգային միգրանտ (երկարաժամկետ կամ կաճաժամկետ), այնուհետև վերադարձել են Հայաստան: Աշխատանքային միգրանտների 19.0%-ը եզդիներ են, 10.9%-ը՝ ռուսներ, 21.7%-ը՝ ասորիներ, 6.5%-ը՝ հույներ, իսկ 10.9%-ը՝ քրդեր: Հետազոտության ընտրանքում ընդգրկված ուկրաինացիներից ոչ մեկը չի մեկնել աշխատանքային միգրացիայի: Ուստի այդ երևույթը կքննարկենք Հայաստանի 5 ազգային փոքրամասնությունների համատեքստում: Նրանց 34.8%-ն ունի 4-5 տարվա, 32.6%-ը՝ 1-3 տարվա, 13.0%-ը՝ 6-10 տարվա, իսկ 19.6%-ը՝ մինչև մեկ տարվա արտագնացության «ստաժ»: Այսինքն՝ գերակշռող մեծամասնությունը արտագնացության հարցում ունի որոշակի փորձ, և այն նրանց մեջ դարձել է ապրելաձև, որի միջոցով նրանք բավարարում են ընտանիքի կենսական պահանջները:

Աղյուսակի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ ազգային փոքրամասնությունների մեջ միգրանտների համալրումը տեղի է ունենում տարբեր գործոնների հիման վրա:

Աղյուսակ 35

Աշխատանքային միգրանտների համալրման ձևերը
(%-ով. n=46)

Միգրանտների կազմը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Ընտանիքի անդամներ, մոտ հարազատներ	17.4	0.0	10.9	2.2	2.2	32.6
Ընկերներ, ծանոթներ	2.2	0.0	6.5	0.0	2.2	10.9
Բրիգադով՝ անծանոթ մարդկանց հետ	4.3	0.0	0.0	0.0	0.0	4.3
Խառը	8.7	0.0	0.0	0.0	6.5	15.2
Մենակ, ինքնուրույն	17.4	10.9	4.3	4.3	0.0	37.0
Ընդամենը	50.0	10.9	21.7	6.5	10.9	100.0

Ամենացածր տոկոսը (բացառությամբ եզդիների 4.3%-ի) անծանոթ մարդկանց հետ՝ բրիգադով աշխատանքային միգրացիայի մեկնողներն են: Այն նպատակահարմար չեն համարել, քանի որ, ըստ նրանց, այդ խմբերում բացակայում է փոխադարձ վստահության մթնոլորտը: Համեմատաբար ցածր տոկոս են կազմում նաև ընկերներով, ծանոթներով, այնուհետև խառը կազմով միգրացիայի մեկնածների կողմնակիցները: Միգրանտների մեկ երրորդից ավելին նշել է, որ միգրացիայի մեկնել են ինքնուրույն, անհատական՝ դրսում գտնվող ընտանիքի անդամների, հարազատների անմիջական աջակցությամբ: Ինչպես հայերի, այնպես էլ Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում մեծ տարածում են ստացել նաև ընտանիքի անդամներից, մոտ հարազատներից բաղկացած

խմբերը, որոնք, ըստ հարցման արդյունքների, կազմել է նրանց 32.6%-ը: Համեմատական կարգով նշենք, որ ընտանիքի անդամների, մոտ հարազատների հետ մեկնողները հայերի շրջանում կազմել են 55.9%:¹⁶² Ինչպես անհատական, այնպես էլ խմբային տեղաշարժերը ազգային փոքրամասնությունների մեջ դարձել են այլ երկրներում մշտական բնակություն հաստատելու հիմնական աղբյուրներից: Աշխատանքային միգրացիան ձեռք է բերում «շղթայական արտագաղթի» ազդեցություն. եթե ընտանիքի անդամներից կամ հարազատներից մեկը հաստատվում է մուտքի երկրներում, ապա հետագայում մշտական բնակության է կանչում նաև ընտանիքի մյուս անդամներին, հարազատներին, ընկերներին:

Հետազոտության արդյունքով ազգային փոքրամասնությունների միգրանտների համար առավել ձգող երկիր է համարվում Ռուսաստանի Դաշնությունը, որտեղ աշխատանքի է մեկնում նրանց 89.1%-ը, այնուհետև ԱՊՀ-ն՝ 8.7%, և Եվրոպական երկրները՝ 2.2%:

Աղյուսակ 36

Աշխատանքային միգրացիայի երկրները (%-ով. n=46)

Միգրացիայի երկրները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
ՌԴ	45.7	10.9	21.7	4.3	6.5	89.1
ԱՊՀ	4.3	0.0	0.0	0.0	4.3	8.7
Եվրոպա	0.0	0.0	0.0	2.2	0.0	2.2
Ընդամենը	50.0	10.9	21.7	6.5	10.9	100.0

¹⁶² Գալստյան Մ., Աշխատանքային միգրացիան հետխորհրդային Հայաստանի գյուղական բնակչության շրջանում, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2012, N1-2, էջ 170:

Նշենք, որ Ռուսաստանի Դաշնություն մեկնելու կարևոր խթան է համարվում ռուսաց լեզվի լավ իմացությունը (բացառությամբ եզդիների և քրդերի), քանի որ Հայաստանում նրանց մեծ մասի դպրոցական կրթությունը ռուսերենով է: Նրանք այդ երկրի վերաբերյալ ունեն համեմատաբար բարձր տեղեկացվածություն, և այնտեղ մուտք գործելը ավելի մատչելի է, քանի որ բացակայում են վիզայի պահանջները: Բացի դրանից, ՌԴ-ում ձևավորվել են եզդիների, քրդերի, ասորիների մեծ համայնքներ, որոնց մեծ մասը շինարարության, գյուղատնտեսության, առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվում են ակտիվ քիզնետով: Այդ առթիվ Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարը նշեց հետևյալ կարծիքը. «Գյուղից ամեն տարի մոտ 30 մարդ մեկնում է Ռուսաստան աշխատանքի: Հիմնականում գնում են իրենց հարազատների և բարեկամների մոտ: Նրանք այնտեղ գործի համար խոսում են, հետո նոր կանչում տանում են: Այնտեղ հիմնականում զբաղվում են ասֆալտի, շինարարական աշխատանքներով»:¹⁶³ Եզդիները և քրդերը աշխատանքային միգրացիայի են մեկնում Նովոսիբիրսկ, Սվերդլովսկ, Սանկտ Պետերբուրգ, Կրասնոդար, Կեմերովո, Տագիլ, իսկ ասորիները՝ Կրասնոդար, Ռոստով և այլն: ԱՊՀ երկրներից նրանք հիմնականում մեկնում են Ղազախստան, իսկ եվրոպական երկրներից՝ Գերմանիա, Ֆրանսիա, Հոլանդիա: «Մեր գյուղից ամեն տարի մոտ 30 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնություն: Գյուղում աշխատանք, նորմալ կուլտուր-կենցաղային պայմաններ չկան: Էդ մարդիկ մնան գյուղում՝ ինչ անեն: Գոնե գնում աշխատում, իրենց ընտանիքն են պահում» (քուրդ, տղամարդ, 32

¹⁶³ Գալստյան Մ., ԴԱՆ, Արզնի, 2013 թ.:

տ.):¹⁶⁴ Միայն Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղից, ըստ համայնքի եզրի ավագանու անդամի տրամադրած տվյալների, Վոլգոգրադում բնակվող մեծահարուստ եզդիներից մեկը իրենց համայնքից ամեն տարի շինարարական բրիգադներ է տանում աշխատանքի՝ մոտ 20 մարդ: Նրանք ոչ միայն ազգությամբ եզդի են, այլև հայեր:¹⁶⁵

Դիմիտրով և Վերին Դվին աստրաբնակ համայնքներից յուրաքանչյուր տարի համապատասխանաբար 40 և 25 մարդ մեկնում է ՌԴ՝ աշխատանքային միգրացիայի:¹⁶⁶

7.2. Աշխատանքային միգրացիայի մեկնելու պատճառները

Հետազոտության արդյունքները վկայում են, որ ազգային փոքրամասնությունների 56.7%-ը աշխատանքային միգրացիան պայմանավորում է աշխատանքի բացակայությամբ, իսկ 34.3%-ը՝ ընտանիքը «պահելու» համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինությամբ: Հարցման մասնակիցների 9%-ը աշխատանքային միգրացիայի պատճառ նշել է երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարի բացակայությունը: Հարցման մասնակիցներից ոչ մեկը որպես աշխատանք գտնելը խոչընդոտող պատճառ չի նշել «հայոց լեզվին վատ տիրապետելը», «ազգային պատկանելությունը», «բարոյաժողովրդական անառողջ մթնոլորտը» պատասխանները:

¹⁶⁴ Գալստյան Մ., ԴԱՆ, Ջամշու, 2014 թ.:

¹⁶⁵ Գալստյան Մ., ԴԱՆ, Ակնալիճ, 2014 թ.:

¹⁶⁶ Գալստյան Մ., ԴԱՆ, Դիմիտրով, Վերին Դվին 2015 թ.:

Աշխատանքային միգրացիայի պատճառները (%-ով, n=67)

Պատճառները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Աշխատանքի բացակայությունը	29.9	7.5	6.0	3.0	6.0	52.2
Մասնագիտական աշխատանքի բացակայությունը	0.0	0.0	3.0	1.5	0.0	4.5
Ընտանքը «պահելու» համար բավարար միջոցներ վաստակելու անհնարիությունը	19.4	0.0	6.0	3.0	6.0	34.3
Երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարների բացակայությունը	4.5	0.0	0.0	4.5	0.0	9.0
Հայոց լեզվին վատ տիրապետելը, որը խոչընդոտում է տեղում աշխատանք գտնելուն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ազգային պատկանելությունը, որը խոչընդոտում է տեղում աշխատանք գտնելուն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ձեռներեցությանը զբաղվելու դժվարությունները	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	53.7	7.5	14.9	11.9	11.9	100.0

Սա նշանակում է, որ Հայաստանում աշխատանք չգտնելու և դրա պատճառով աշխատանքային միգրացիայի մեկնելու հանգամանքը կապված չէ նրանց ազգային պատկանելության կամ հայոց լեզվի չիմացության գործոնների հետ, ինչպես նաև անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտի հետ:

Հայաստանում ազգային փոքրամասնությունները խոչընդոտի չեն հանդիպել նաև ձեռներեցությամբ զբաղվելու հարցում:

7.3. Աշխատանքային միգրանտների սոցիալ-մասնագիտական բնութագիրը

Հետազոտության արդյունքներով մինչև աշխատանքային միգրացիայի մեկնելը նրանց սոցիալ-մասնագիտական կազմում գերակշռում են ֆիզիկական աշխատանք կատարողները (շինարարներ, բանվորներ, մեխանիզատորներ, վարորդներ և այլն), իսկ որոշ մասը եղել են ծառայողներ և միջին որակավորում ունեցող մասնագետներ: Մինչև աշխատանքային միգրացիայի մեկնելը ուսանողների 2.2%-ը, ասորիների 1.3%-ը և հույների 1.1%-ը ունեցել են բարձր որակավորում (աղյուսակ 38): Հարցումները ցույց են տալիս, որ վերջիններս, ունենալով բարձրագույն կրթություն, այնուհանդերձ, նրանց շատ քիչ մասն է կարողանում դրսում գտնել իր մասնագիտությամբ աշխատանք: Նրանք այնտեղ ստիպված կատարում են ցածր որակավորում պահանջող աշխատանքներ: Սա նշանակում է, որ մարդկային զարգացման տեսանկյունից այն չի նպաստում նրանց որակավորման առաջընթացին և ընդհակառակը՝ թողնում է բացասական ազդեցություն:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների շրջանում տեղի է ունենում սոցիալական վարընթաց շարժունություն,

քանի որ նրանք ընդգրկվում են որակավորում չպահանջող կամ միջին մասնագիտական որակավորմամբ աշխատանքներում: Դրա մասին են վկայում 39-րդ անդուսակի տվյալները, ըստ որի՝ աշխատանքային միգրանտների գերակշիռ մասը զբաղված է շինարարության, իսկ շուրջ մեկ հինգերորդից ավելին՝ սպասարկման և տրանսպորտի, իսկ մի մասն էլ՝ արդյունաբերության ոլորտներում:

Աղյուսակ 38

Մինչև մեկնելը միգրանտների սոցիալ-մասնագիտական խմբերը (%-ով, n=46)

Մասնագիտական խմբերը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Ֆիզիկական աշխատանք կատարողներ	42.6	9.7	7.4	8.2	9.7	77.6
Օտարադներ և միջին որակավորում ունեցող մասնագետներ	2.3	6.5	4.2	3.7	1.1	17.8
Բարձր որակավորում ունեցող մասնագետներ	0.0	2.2	1.3	1.1	0.0	4.6
Ղեկավարներ և գործարարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	44.9	18.4	12.9	13.0	10.8	100.0

Այնուհանդերձ, մուտքի երկրներում բոլոր ազգային փոքրամասնությունների մոտ տեղի է ունեցել զբաղվածության ոլորտների փոփոխություն. ավելացել է սպասարկման (հիմնականում առևտրի), տրանսպորտի և արդյունաբերության ոլորտի աշխատողների, ինչպես նաև ինքնազբաղվածների թիվը: Օրինակ՝ եզդիների և ասորիների համապատասխանաբար

10.9%-ը և քրդերի 2.2%-ը արտերկրում զբաղված են առևտրի/սպասարկման ոլորտում:

Աղյուսակ 39

Աշխատանքային միգրանտների զբաղվածության ոլորտները
մուտքի երկրներում (%-ով, n=46)

Զբաղվածության ոլորտները	Եգիպ	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Շինարարություն	30.3	4.3	4.3	2.2	4.3	45.5
Արդյունաբերություն	2.3	2.2	2.2	0.0	2.2	8.9
Տրանսպորտ	6.5	4.3	4.3	4.3	2.2	21.7
Սպասարկում	10.9	0.0	10.9	0.0	2.2	23.9
Ընդամենը	50.0	10.9	21.7	6.5	10.9	100.0

Սակայն նախքան մեկնելը և մեկնելուց հետո նրանց զբաղվածության ոլորտների փոփոխությունները դեռևս չեն ուղեկցվել վերընթաց սոցիալական շարժունությամբ: Այն, թե «Ներքոթվարկյալներից որն է առավելապես համապատասխանում Ձեր (նրա) զբաղեցրած պաշտոնին» հարցին, նրանց գերակշռող մեծամասնությունը (60.5%) նշել է «որակավորում չպահանջող բանվորական աշխատանքներ» պատասխանը: Նրանց մի մասն էլ նշել է, որ մեկնելուց հետո դեռևս չի կարողացել գտնել աշխատանք:

7.4. Աշխատանքային միգրացիան՝ որպես ազգային փոքրամասնությունների ընտանիքների եկամուտների ձևավորման աղբյուր

Հետազոտության արդյունքները հնարավորություն տվեցին նաև մոտավոր պատկերացում կազմելու մուտքի երկրներում

նրանց եկամուտների մասին, որոնք, հարցման մասնակիցների կարծիքով, տեղում վաստակած գումարներից մի քանի անգամ ավելի բարձր են: Ըստ աղյուսակ 40-ում ներկայացված տվյալների՝ նրանց 60.2%-ի միջին ամսական եկամուտը կազմել է մինչև 1 000 ԱՄՆ դոլար, 6.5%-ինը տատանվել է 1001-1400 ԱՄՆ դոլարի, իսկ 2.2%-ինը՝ 1400 և ավելի ԱՄՆ դոլարի սահմաններում: Վաստակած միջին ամսական եկամուտները հատկապես բարձր տոկոս են կազմում եզդիների մեջ: Հարցվածների 28.3%-ը դժվարացել է, իսկ 2.2%-ը հրաժարվել է պատասխանել նրանց վաստակած միջին ամսական եկամուտների վերաբերյալ հարցին: Ընդհանուր առմամբ, միջին ամսական եկամուտների հարցի վերաբերյալ պատասխանները կրում են սուբյեկտիվ բնույթ, և այդ տվյալներին պետք է մոտենալ վերապահումով:

Աղյուսակ 40

Աշխատանքային միգրանտների միջին ամսական աշխատավարձը մուտքի երկրներում (%-ով, n=46, ԱՄՆ\$)

Եկամուտներ	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
մինչև 500	4.3	4.3	0.0	2.2	6.5	17.4
501- 700	17.4	4.3	2.2	0.0	0.0	23.9
701- 1000	13.0	4.3	0.0	2.2	0.0	19.5
1001 -1400	2.2	0.0	4.3	0.0	0.0	6.5
1401 և բարձր	2.2	0.0	0.0	0.0	0.0	2.2
Հրաժարվում են պատասխանել	0.0	2.2	0.0	0.0	0.0	2.2
Դժվարանում են պատասխանել	10.9	0.0	15.2	2.2	0.0	28.3
Ընդամենը	50.0	10.9	21.7	6.5	10.9	100.0

Հետազոտության արդյունքներով գյուղատնտեսությունից և աշխատավարձից հետո 14.5%-ի համար աշխատանքային միգրացիան համարվում է ընտանիքների եկամուտների ձևավորման կարևոր աղբյուր:

Նրանց 12.8%-ը նշել է, որ ամբողջ սեզոնի ընթացքում ընտանիքին ուղարկել է մինչև 1000, 6.5%-ը՝ համապատասխանաբար 1000-1500 և 1501-2000 ԱՄՆ դոլար, 8.7%-ը՝ 2001-2500 ԱՄՆ դոլար, իսկ 24.2%-ը՝ 2501 և ավելի ԱՄՆ դոլար: Նրանց միայն 4.3%-ն է նշել, որ գումար չեն ուղարկել, իսկ 37.0% ընտանիքները կա՛մ չեն ցանկացել բարձրաձայնել, կա՛մ տեղյակ չեն եղել դրա մասին:

Աղյուսակ 41

Ընտանիքի եկամուտների հիմնական աղբյուրները (%-ով, n=46)

Աղբյուրները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Գյուղատնտեսություն	27.9	5.7	2.4	0.8	5.8	42.6
Աշխատավարձ	8.7	5.0	2.9	2.5	1.7	20.8
Աշխատանքային միգրանտների ուղարկած գումարներ	5.4	4.6	0.8	0.8	1.2	14.5
Թոշակ, նպաստ	2.4	6.2	0.4	1.7	1.7	12.4
Դժվարանում եմ պատաս- խանել	2.9	0.0	2.9	0.0	0.0	5.8
Ընդամենը	47.3	21.6	9.5	5.8	10.4	100.0

Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ աշխատանքային միգրացիայից վաստակած գումարները ազգային փոքրամասնությունները հիմնականում ուղղում են ընտանիքի առաջնային կարիքների բավարարմանը՝ սննդի, հագուստի

ձեռք բերմանը, առօրյա և ընթացիկ ծախսերի կատարմանը: Ծախսերի հաջորդ մեծ ուղղությունն ընտանիքի կուտակված պարտքերի մարումն է, որը, բացառությամբ ասորիների, առկա է մյուս ազգային փոքրամասնությունների մեջ:

Աղյուսակ 42

Արտերկրից ընտանիքներին ուղարկված գումարի չափը
(%-ով, n=46, ԱՄՆ\$)

Գումարների չափը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
մինչև 1000	4.2	4.3	0.0	0.0	4.3	12.8
1001- 1500	4.3	0.0	2.2	0.0	0.0	6.5
1501-2000	6.5	0.0	0.0	0.0	0.0	6.5
2001-2500	6.5	0.0	0.0	2.2	0.0	8.7
2501 և ավելի	15.5	4.3	0.0	0.0	4.4	24.2
Չի ուղարկել	0.0	0.0	4.3	0.0	0.0	4.3
Դժվարանում եմ պատասխանել	15.2	2.2	15.2	4.3	0.0	37.0
Ընդամենը	52.7	10.9	21.7	6.5	8.7	100.0

Ըստ 43-րդ աղյուսակի տվյալների՝ այդ գումարները եզդիները, ռուսները, ասորիները և քրդերն օգտագործում են գյուղատնտեսության ոլորտում՝ ձեռք են բերում սերմացու, թունաքիմիկատներ և վճարում այլ աշխատանքների դիմաց: Եզդիները, ասորիները և հույները այդ գումարներով հոգում են ընտանիքի անդամների կրթական և առողջապահական ծախսերը և այդ ներդրումների շնորհիվ նպաստում նրանց առողջության և մարդկային կարողությունների զարգացմանը: Եզդիների ծախսերի կառուցվածքում կարևոր տեղ է զբաղում նաև ամուսնական ծեսերի՝ հարսանիքի և օժիտի համար միջոցներ

ձեռք բերելը, որը նրանց ավանդական վարքագծի կարևոր տարրերից է:

Աղյուսակ 43

Աշխատանքային միգրանտների ուղարկած գումարների ծախսերի ոլորտները(%-ով)

Ծախսերի ոլորտները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Ընթացիկ ծախսեր (սնունդ, հագուստ, կոմունալ և այլ ծախսեր)	23.5	5.9	5.9	3.5	4.7	43.5
Գյուղատնտեսական աշխատանքներ	4.7	2.4	1.2	0.0	1.2	9.4
Ուսման ծախսեր (վարձավճարներ)	3.5	0.0	4.7	0.0	0.0	8.2
Բուժում	4.7	0.0	1.2	1.2	0.0	7.1
Բնակարանային/տան վերանորոգում	2.4	1.2	0.0	2.4	1.2	7.1
Բնակարանի կառուցում/գնում	1.2	0.0	1.2	0.0	0.0	2.4
Արարողություններ (ամուսնություններ և այլն)	2.4	0.0	0.0	0.0	0.0	2.4
Տնական օգտագործման իրերի ձեռք բերում (մեքենա, կահույք, տեխնիկա և այլն)	1.2	1.2	0.0	0.0	0.0	2.4
Սեփական գործի հիմնում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Պարտքեր	12.9	1.2	0.0	1.2	2.4	17.6
Ընդամենը	56.5	11.8	14.1	8.2	9.4	100.0

Այդ գումարներով նրանք հոգում են նաև բնակարան կառուցելու կամ գնելու, վերանորոգելու, ինչպես նաև ընտանիքի երկարատև օգտագործման՝ ավտոմեքենայի, կահույքի, կենցաղային էլեկտրոնիկայի և այլ իրերի ձեռք բերումը: Նույն աղյուսակից կարող ենք եզրակացնել, որ նշված ազգային փոքրամասնություններից ոչ մեկը դրսում վաստակած գումարները չի ներդրել արտադրական միջոցներ ձեռք բերելու նպատակով և չի հիմնել իր սեփական գործը: «Որ պայմանների առկայության դեպքում կդադարեք/ կդադարի մեկնել արտագնա աշխատանքի» հարցին նրանց 84.8%-ը նշել է, որ եթե Հայաստանում պայմանները լավանան, և ստեղծվեն նոր աշխատատեղեր:

Այսինքն՝ Հայաստանում ազգային փոքրամասնությունների աշխատանքային միգրացիայի կրճատումը պայմանավորված է նրանց զբաղվածության բարձրացման խնդրով:

Աղյուսակ 44

Աշխատանքային միգրացիայի չմեկնելու նախապայմանները (%-ով, n=46)

Պայմանները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Եթե պայմանները լավանան/աշխատանք լինի	37.0	10.9	21.7	4.3	10.9	84.8
Դժվարանում եմ պատասխանել	13.0	0.0	0.0	2.2	0.0	15.2
Ընդամենը	50.0	10.9	21.7	6.5	10.9	100.0

Այնուհանդերձ, հետազոտության արդյունքներով ազգային փոքրամասնությունների աշխատանքային միգրանտների 23.9%-ը ցանկություն է հայտնել առաջիկա երկու տարվա ընթացքում

տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել մուտքի երկրներում կամ վերամիավորվել ընտանիքներին:

Աղյուսակ 45

Հայաստանից մեկնելու ցանկությունը աշխատանքային միգրանտների շրջանում (%-ով, n=46)

Մեկնելու ցանկությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Այո	8.7	6.5	4.3	2.2	2.2	23.9
Ոչ	8.7	2.2	6.5	4.3	2.2	23.9
Դժվարանում եմ պատասխանել	32.6	2.2	10.9	0.0	6.5	52.2
Ընդամենը	50.0	10.9	21.7	6.5	10.9	100.0

Դրանց կողմնակիցները եզդիների շրջանում կազմել են 8.7%, ռուսներինը՝ 6.5%, ասորիներինը՝ 4.3%, հույներինը և քրդերինը՝ համապատասխանաբար 2.2%: Մեկնողների տեսակարար կշռում բարձր տոկոս են կազմում երիտասարդ և միջին տարիքային խմբերը:

7.5 Ազգային փոքրամասնությունների աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային հետևանքները

Ազգային փոքրամասնությունների աշխատանքային այն միգրանտները, որոնք երկար տարիներ մեկնում են արտագնա աշխատանքի և այլ երկրներում ինտենսիվորեն շփվում տեղի բնակչության հետ, իրենց վրա կրում են մշակութային ակտիվ փոխազդեցություն: Միգրացիայի միջոցով նրանք այլ երկրներում ոչ միայն տարածում են իրենց ազգային և հայկական

մշակույթի տարրերը, այլև տվյալ տարածքի մշակութային արժեքներից ազդեցություն են կրում: Խոսքը վերաբերում է այն միգրանտներին, որոնց աշխատանքը թեև ընդգրկում է տարվա ընդամենը մի քանի ամիս, սակայն նրանց շփումներն ընդունող հասարակություններում չեն սահմանափակվում: Նոր սոցիալ-մշակութային միջավայրում այդ շփումները կարևոր պայման են վարքի նոր ձևերի և նորմերի ձևավորման համար: Երկար տարիներ մեկնելով աշխատանքային միգրացիայի՝ տեղի է ունենում լեզվական վարքագծի փոփոխություն:

Աղյուսակ 45

Լեզուների իմացությունն ազգային փոքրամասնությունների աշխատանքային միգրանտների մեջ (%-ով, n=46)

Լեզուների իմացությունը	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Ազգի լեզուն	9.4	1.6	4.7	3.1	3.1	21.8
Հայերեն	17.2	4.7	6.3	3.1	3.1	34.3
Ռուսերեն	12.5	0.0	9.4	1.6	6.3	29.8
Հավասարապես ազգի լեզուն և հայերեն	3.1	3.1	6.3	1.6	0.0	14.1
Ընդամենը	42.2	9.4	26.6	9.4	12.5	100.0

Մասնավորապես եզդիների, ասորիների և քուրդի մեջ այն ուղեկցվում է ռուսաց լեզվի իմացության բարձրացմամբ: Որպես հաղորդակցության միջոց՝ այն ազդում է նրանց կենսաձևի վրա և նպաստում նոր արժեքների յուրացմանը:

Աղյուսակ 46-ի տվյալները հնարավորություն են տալիս աշխատանքային միգրացիայի հետևանքով պատկերացում կազմելու նաև ընտանիքի առջև ծառացած հիմնախնդիրների մասին:

Ըստ աշխատանքային միգրացիայի թողած ազդեցության՝ հարցման մասնակիցների 34.0%-ը այն համարել է միգրանտի բացակայության ընթացքում իր և ընտանիքի անդամների միջև կարոտի հանգամանքը: Այդ զգացումը դրսևորվել է նշված բոլոր ազգային փոքրամասնությունների, հատկապես նոր ամուսնացած ընտանիքների և միայնակ տարեցների մեջ, որոնց ամուսինները կամ զավակները երկար ժամանակով կամ մշտական բնակություն են հաստատել այլ երկրներում: Հարցվածների 20.3%-ը իր մտահոգությունն է արտահայտել օտար միջավայրում միգրանտների անվտանգության և անպաշտպանվածության խնդրի վերաբերյալ:

Աղյուսակ 46

Ընտանիքների առջև ծառացած հիմնախնդիրները (%-ով, n=94)

Հիմնախնդիրները	Եզդի	Ռուս	Ասորի	Հույն	Քուրդ	Ընդամենը
Կարոտ	18.1	3.2	5.3	3.2	4.3	34.0
Օտար միջավայրում վտանգ	12.8	0.0	1.1	2.1	4.3	20.3
Երեխաների դաստիարակության խնդիրներ	2.1	2.1	2.1	1.1	0.0	7.4
Ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի վատթարացում	1.1	2.1	2.1	1.1	0.0	6.4
Ամուսնությունների կրճատում	3.2	2.1	0.0	0.0	0.0	5.3
Միգրանտի առողջական վիճակի վատթարացում	2.1	1.1	0.0	0.0	0.0	3.2
Ամուսնալուծությունների թվի աճ	1.1	1.1	0.0	0.0	0.0	2.1
Դժվարանում եմ պատասխանել	11.7	2.1	4.3	1.1	2.1	22.3
Ընդամենը	52.1	13.8	14.9	8.5	10.6	100.0

Այդ խնդիրները ոչ միայն պայմանավորված են ընդունող հասարակությունում միգրանտ-տեղացի միջէթնիկ հարաբերությունների լարվածությամբ, այլև հանցագործ խմբերի (սքինհեդների՝ սափրագլուխների և այլն) գործունեության վտանգով: Հարցվածներն իրական վտանգ են համարում նաև աշխատանքի անվտանգությունը չպահպանելու խնդիրները, որի հետևանքով ոչ միայն նրանք ստանում են արտադրական վնասվածքներ, դառնում հաշմանդամներ, այլև երբեմն արձանագրվում են նաև մահվան դեպքեր: Ըստ Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի եզդի ավագանու անդամի տրամադրած տեղեկությունների՝ վերջին հինգ տարիներին մահվան ելքերով «դժբախտ պատահարների» թիվն ավելացել է: Այն պայմանավորված է նաև ազգամիջյան հողի, հանցագործ մոտիվներով տեղի ունեցող սպանությունները նույն պիտակով որակավորելու հանգամանքով: Մուտքի երկրներում միգրանտների անօրինական կարգավիճակի, իրավական անպաշտպանվածության հետևանքով հաճախ այդ դեպքերին անհրաժեշտ ընթացք չեն տրվում: Օտար միջավայրում միգրանտներին սպառնացող վտանգի հանգամանքը հարցման մասնակիցները կապում են նաև գործատուի կողմից խաբվելու, աշխատավարձը չվճարելու կամ ոչ լրիվ վճարելու, աշխատանքային շահագործման և այլ երևույթների հետ: Այդ երևույթների մասին հարցվածները պատմել են մի քանի դեպքեր, թե ինչպես իրենց հարազատները վաղ առավոտից աշխատել են մինչև ուշ գիշեր, առանց հանգստյան օրերի, բայց գործատուները չեն վճարել (գործատուները մեծ մասամբ իրենց հայրենակիցներն են): Ինտենսիվ և ծանրաբեռնված աշխատանքը բացասաբար է ազդում նաև միգրանտների առողջական վիճակի վրա, որի հետևանքով նրանք ձեռք են բերում մի շարք հիվանդություն-

ներ: Աշխատանքային միգրացիայի հետևանքով միգրանտի բացակայությունը հարցվածների 7.4%-ը երեխաների դաստիարակության հարցում համարել է լուրջ խնդիր: Հոր բացակայության ընթացքում երեխայի դաստիարակությամբ հիմնականում զբաղվում է մայրը, և նրա դերը մեծ է երեխայի սոցիալականացման հարցում: Տղամարդու բացակայությունը հատկապես տղա երեխաների մեջ թուլացնում է սոցիալական վերահսկողությունը: Մյուս կողմից՝ միգրանտի բացակայության ժամանակ տնային տնտեսության ողջ աշխատանքներն ընկնում են կանանց, տարեցների և անչափահաս երեխաների ուսերին: Տան տղամարդու միգրացիայով պայմանավորված՝ հատկապես եզդի և քուրդ կանանց շրջանում տեղի է ունենում ավանդական մի շարք կարգավիճակների և դերերի փոփոխություն, որի հետևանքով նրանք ընտանիքից դուրս կատարում են իրենց չվերապահված մի շարք գործառույթներ. մասնակցում են համայնքի հասարակական կյանքին և կարևոր միջոցառումներին՝ հարսանեկան և թաղման ծեսերին, շփվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Հարցվածների 6.5%-ը, որպես միգրացիայի բացասական ազդեցություն, նշել է ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտի վատթարացումը, իսկ 2.1%-ը՝ ամուսնալուծությունների թվի աճը: Ընտանիքի գլխավորը տարվա մեծ մասը ընտանիքից հեռու է, որը թուլացնում է շփումները և փոխըմբռնման մթնոլորտը մյուս անդամների հետ: Միգրանտի երկարատև բացակայությունն իր հերթին ընտանիքում առաջ է բերում բարոյական և հոգեբանական մի շարք խնդիրներ և բարձրացնում ամուսնալուծվելու ռիսկայնության աստիճանը: Աճում է ամուսնալուծությունների, անկայուն և լքված ընտանիքների թիվը: Այսպես, Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում, կապված արտագնա

աշխատանքի հետ, երեք տղամարդ լքել է ընտանիքը՝ դրսում կազմելով նոր ընտանիք։ Նրանցից մեկը ծերության հասակում, երբ ՌԴ-ում նոր ընտանիքի կողմից այլևս չի արժանացել համապատասխան վերաբերմունքի, վերադարձել է գյուղ։ Սկզբնական շրջանում համայնքը դատապարտել է այդ վարքագիծը։ Կինը հրաժարվել է, սակայն տղաները իրենց հարկի տակ ընդունել և խնամում են՝ որպես տարեցի։

Կոտայքի մարզի Արզնի համայնքի ղեկավարի տվյալներով՝ աշխատանքային միգրացիայի պատճառով գյուղում մոտ հինգ ամուսնալուծված ընտանիք կա։

Հետազոտության ընթացքում հատկապես եզդի և քուրդ հարցման մասնակիցները փաստում էին, որ աշխատանքային միգրացիայի պատճառով նրանց մեջ տարածված են նաև արտամուսնական կապերը և մուտքի երկրներում երկրորդ ընտանիք ունենալը։ Այդ մասին երբեմն տեղյակ են անգամ համայնքում ապրող նրանց ընտանիքները։ Սակայն կանայք այդ հարցում ցուցաբերում են հանդուրժողական մոտեցում և չեն դիմում ապահարգանի, քանի որ համայնքային գիտակցության մակարդակով տղամարդկանց այդ վարքագիծը կարծես համարվում է թույլատրելի՝ հատկապես այն դեպքում, երբ տղամարդը նյութապես ապահովում է ընտանիքին և հոգում երեխաների կարիքները։

Հարցման մասնակիցների կարծիքով աշխատանքային միգրացիայի պատճառով տեղի է ունենում նաև ամուսնությունների թվի նվազում. դրա դրսևորումներից են երիտասարդների ամուսնության միջին տարիքի բարձրացումը և ուշ ամուսնությունները։ Այդ հարցում իր ազդեցությունն է թողնում ոչ միայն նյութական ապահովվածության գործոնը, այլև էական են միգրանտների աշխարհայացքի և արժեքային նորմերի փոփո-

խությունները: Նշենք նաև, որ համանման խնդիրներ առկա են նաև հայ աշխատանքային միգրանտների շրջանում:¹⁶⁷ Այսպիսով, աշխատանքային միգրացիան համարվում է ազգային փոքրամասնությունների հետազոտված ընտանիքների եկամուտների ձևավորման կարևոր աղբյուր, սակայն ընտանիքից միգրանտի բացակայությունը նաև առաջ է բերում սոցիալ-հոգեբանական մի շարք լուրջ հիմնախնդիրներ:

¹⁶⁷ Գալստյան Մ., Աշխատանքային միգրացիան և ընտանիքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2012, N2-3, էջ 254-266:

Ամփոփում

Դարեր շարունակ Հայաստանում բնակվող բազմաթիվ էթնիկ խմբերը և ազգային փոքրամասնություններն իրենց ուրույն ներդրումն ունեն հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ակտիվորեն մասնակցում են մշակութային կյանքին և հայոց պետականության կայացմանը: Ներկայում Հայաստանում բնակվում է շուրջ 90-ից ավելի ազգություն: Սակայն սկսած 1990-ական թվականներից՝ Հայաստանի անկախությունից հետո տեղի ունեցած տնտեսական ճգնաժամի, բնակչության կենսամակարդակի անկման և գործազրկության բարձր տեմպերի պատճառով հանրապետությունից բնակչության միջպետական տեղաշարժերն ընդունեցին զանգվածային բնույթ, և դրանից անմասն չմնացին նաև ազգային փոքրամասնությունները: Հայաստանից մեկնած բնակչության թիվը 1990-2000 թթ. տատանվեց 900 հազարից մինչև 1 մլն մարդ: 2002-2009 թթ. Հայաստանի բնակչության արտաքին միգրացիայի բացասական մնացորդը կազմեց 57.5 հազար մարդ, իսկ 2010-2014թթ.՝ 206.2 հազ. մարդ: Բերված վիճակագրական տվյալները ներառում են նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին, որոնց քանակում այդ տարիներին նույնպես արձանագրվեցին նվազման միտումներ: 1989թ. մարդահամարի արդյունքներով ազգային փոքրամասնությունները կազմել են Հայաստանի բնակչության 6.7%-ը, 2001թ. տվյալներով՝ 2.11%-ը, իսկ 2011թ. տվյալներով՝ 1.8%-ը: Շուրջ քսան տարվա ընթացքում եզդիների թիվը կրճատվեց 16668 մարդով, ռուսներինը՝ 40364-ով, ասորիներինը՝ 3 194-ով, ուկրաինացիներինը՝ 7165-ով, քրդերինը՝

2632-ով, հույներինը՝ 3 750-ով: Ընդհանուր առմամբ, նշված վեց ազգային փոքրամասնությունների շրջանում, որոնք համարվել են սույն հետազոտության օբյեկտ, մարդկանց թիվը կրճատվել է 73773-ով:

Աշխատությունում ազգային փոքրամասնությունների միգրացիայի պատճառների համատեքստում, բացի սոցիալ-տնտեսականից, քննարկվեցին նաև Հայաստանում բնակչության միջերևիկ հարաբերությունների, ազգային պատկանելության և մշակութային ինքնության՝ պահպանման գործոնները: Այդ նպատակով ընտրվեց վեց ազգային փոքրամասնություն՝ եզդիներ, ռուսներ, քրդեր, ասորիներ, հույներ և ուկրաինացիներ (ազգային փոքրամասնությունների ցանկի համար հիմք ընդունվեցին ՀՀ 2001թ. և 2011թ. մարդահամարների արդյունքները):

Աշխատությունում կարևոր խնդիր էր դրված բացահայտելու, թե Հայաստանում գործող օրենքները որքանով են նպաստում ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, ինքնության պահպանմանը, և արդյո՞ք դրանք հանրապետությունից արտաքին միգրացիայի գործոն են: Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ Հայաստանում գործող օրենսդրական դաշտի վերլուծությունից պարզվեց, որ Հայաստանի ազգային փոքրամասնությունները օրենքով նախատեսված կարգով ունեն բոլոր հնարավորությունները մայրենի լեզվի պահպանման, զարգացման, մայրենիով կրթություն ստանալու և ազգային մշակույթը պահպանելու համար: Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային մի շարք պայմանագրերի: Հայաստանում մայրենի լեզվի և մշակութային ինքնության պահպանման և զարգացման հնարավորությունների հարցում հե-

տագոտությունը մասնակցած ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարների կարծիքներում առանձնանում է երկու մոտեցում. Եզդիների, քրդերի, ասորիների, հույների հասարակական կազմակերպությունների ղեկավարներ մի մասը նշված գործոնները չի համարել որպես հանրապետությունից ազգային փոքրամասնությունների միգրացիայի կարևոր պատճառ: Մինչդեռ ռուսների և ուկրաինացիների ՀԿ-ների ղեկավարների կարծիքով հասարակության մեջ վերը նշված օրենքները չգործելու կամ ոչ ամբողջապես գործելու պատճառով այդ հարցում նրանք բախվում են դեռևս չլուծված մի շարք խնդիրների: Ըստ նրանց՝ 1993թ. «Լեզվի մասին» ՀՀ օրենքի ընդունման և շատ կարճ ժամանակում դրա կիրարկման հետևանքով ռուսախոս անձինք, որոնք, չտիրապետելով գրական հայերենին, զբաղեցրել են պետական պաշտոններ, ստիպված մեկնել են Հայաստանից:

Մինչև 1980-ական թվականները՝ շուրջ 80 տարիների ընթացքում, Հայաստանում բնակվող նշված ազգային փոքրամասնությունների շրջանում դիտարկվել է բացարձակ քանակի աճ (բացառությամբ հույների): Մինչդեռ պատկերն այլ է նորանկախ Հայաստանի մոտ քսան տարիների ընթացքում. Հայաստանի բնակչության, այդ թվում՝ նշված ազգային փոքրամասնությունների մոտ տեղի է ունեցել բացարձակ թվի կտրուկ նվազում: Դրա վրա էական ազդեցություն ունեցավ նաև արտաքին միգրացիայի գործոնը: Վերջինս իր բացասական ազդեցությունն է ունեցել նաև ազգային փոքրամասնությունների սեռատարիքային կազմի վրա, որի հետևանքով ռուսների, հույների և ասորիների շրջանում կանայք մոտ երկուսից երեք անգամ ավելի են տղամարդկանցից: Ըստ ծնե-

լիության ցուցանիշների՝ ազգային փոքրամասնությունների շրջանում դիտարկվել է երկու կարևոր միտում՝ եզդիների և քրդերի ժողովրդագրական վարքագծում առկա է համեմատաբար բարձր ծնելիություն: Ժողովրդագրական այդ մոդելը, մեր կարծիքով, պայմանավորված է նրանց համայնքների ավանդական հասարակական կառուցվածքի առանձնահատկություններով, որը ապահովում է ծնելիության համեմատաբար բարձր մակարդակ: Մյուսները բնութագրվում են որպես «ծերացման» ցուցանիշներ ունեցող ազգային փոքրամասնություններ, քանի որ ունեն ծնելիության ցածր մակարդակ, և նրանց ժողովրդագրական վարքագիծը ժամանակի ընթացքում ենթարկվել է մոդեռնիզացիոն գործընթացների: Ազգային փոքրամասնություններն ունեն ուրբանիզացիոն գործընթացներին մասնակցության և տարածքային շարժունության տարբեր ցուցանիշներ. եզդիների, քրդերի և ասորիների գերակշռող մասը գյուղաբնակներ են, իսկ ռուսները, հույները և ուկրաինացիները՝ քաղաքաբնակներ: Այդ հանգամանքն իր ազդեցությունն է թողնում նրանց զբաղվածության ոլորտների, բնակչության սոցիալ-մասնագիտական կազմի, կենսաձևի և մշակույթի առանձնահատկությունների վրա:

Հետազոտությանը մասնակցած ընտանիքների բացարձակ մեծամասնությունը ներգրավված է եղել արտաքին միգրացիոն գործընթացներում, որտեղ, ըստ ազգային պատկանելության, նրանց կեսը եզդիներ են, մոտ մեկ հինգերորդը՝ ռուսներ, մեկ տասներորդը՝ ասորիներ, դրանից ավելի պակաս՝ հույներ, քրդեր և ուկրաինացիներ: Եզդիների, հույների և ասորիների ընտանիքներում միգրանտների միջին թիվը տատանվել է մեկուկեսից երկու մարդ: Միգրանտ կանանց քանակը գերազանցել է տղամարդկանց, սակայն դա դեռևս չի նշա-

նակում, թե համեմատած տղամարդկանց հետ՝ կանանց միգրացիոն ակտիվության գործակիցն ավելի բարձր է: Այդ հանգամանքը առաջին հերթին պայմանավորված է տղամարդկանց կանխավ արտագաղթով և հետագայում կանանց՝ իրենց ընտանիքներին վերամիավորվելու խնդրով: Հանրապետությունից այլ երկրներ մշտական բնակության կամ աշխատանքային միգրացիայի մեկնածները ակտիվ աշխատունակ և վերարտադրողական տարիքի մարդիկ են: Նրանց գերակշիռ մեծամասնությունը կազմել է միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը, որին հաջորդել են թերի միջնակարգ և բարձրագույն, այնուհետև տարրական կրթություն ունեցողները: Առանձին վերցրած՝ ազգային փոքրամասնություններից եզդիների և քրդերի մեջ կրթություն չունեցող և ընդհանուր տարրական կրթություն ունեցող միգրանտները կազմել են բարձր տոկոս: Հատկապես նրանց աղջիկների վաղ ամուսնության սովորույթի հետևանքով կրթությունը դեռևս չի դասվում խիստ կարևոր արժեքների համակարգին: Բարձրագույն կրթությամբ միգրանտները հիմնականում բարձր տոկոս են կազմում ուկրաինացիների, ռուսների և հույների մեջ:

Ազգային փոքրամասնությունների հիմնական մասը հանրապետությունից մեկնել է 1990-2000-ական թվականներին: Հարցվածների կարծիքով նրանց ութսուն տոկոսից ավելին (208 մարդ) արդեն երկար տարիներ արտերկրում է և մեկնել է մշտական բնակության, իսկ մոտ քսան տոկոսը (46 մարդ) հանրապետությունից բացակայել է մինչև մեկ տարի՝ աշխատելու նպատակով: Այդ խմբերի հետ կապված խնդիրները աշխատությունում քննարկվել են առանձին բաժիններով:

Արտերկրում գտնվող միգրանտներ: Հետազոտության արդյունքներով Հայաստանից ազգային փոքրամասնությունների

արտագաղթելու պատճառները պայմանավորված չեն ազգային մշակույթի պահպանման, մայրենի լեզվի կիրառման, ազգային պատկանելության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրներով: Հարցման մասնակիցների կարծիքներով այդ խնդիրները չեն համարվել որպես հանրապետությունից նրանց միգրացիայի գործոն, և դրանց կողմնակիցների թիվը կազմել է ընդամենը մեկ տոկոս: Նրանց գերակշռող մեծամասնության կարծիքով Հայաստանից արտագաղթը հիմնականում կապված է սոցիալ-տնտեսական պատճառների, մասնավորապես աշխատանքի բացակայության հետ: Այն բարձր տոկոս է կազմել նաև հայերի մեջ, որը փաստում է, որ ազգային պատկանելության և արտագաղթի միջև բացակայում է անմիջական պատճառահետևանքային կապը: Նրանց մոտ մեկ տասներորդը արտագաղթել է ընտանիքների վերամիավորման, իսկ որոշ մասը՝ երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարի բացակայության, աշխարհաքաղաքական անկայուն վիճակի, դրսում կրթություն ստանալու պատճառով: Հատկապես հույների և ռուսների մեջ ազգային պետականության վարած միգրացիոն քաղաքականության հետևանքով 1990-1995թթ. Հայաստանից նրանց արտագաղթը կրել է կազմակերպված բնույթ: Միգրացիայի վերաբերյալ նրանց ընդունած ադմինիստրատիվ որոշումները և ցուցաբերած աջակցությունը դյուրացրին հայրենակիցների մուտքը այդ երկրներ: Այդ միջոցով նրանց հետ Հայաստանից արտագաղթեցին նաև այն ընտանիքները, որտեղ ամուսինը կամ կինը հայ է:

Ազգային փոքրամասնությունների մեջ միգրացիոն վարքագծի ձևավորումը եղել է նաև անհատական որոշումների արդյունք, որի հիմքում ընկած է նրանց կենսամակարդակի բարելավման և եկամուտների բարձրացման մոտիվացիան: Միգ-

րանտների որոշ մասը կարևորել է նաև պատմական հայ-
րենիքում ապրելու ձգտումը: Պայմանավորված եզդիների և
քրդերի համայնքի դասային կառուցվածքով և դրանից բխող
մի շարք սովորույթներով՝ նրանց մեջ լայն տարածում է գտել
նաև հանրապետությունից դուրս ամուսնական պատճառնե-
րով միգրացիան:

Երկրների քարտեզագրումից պարզվեց, որ արտերկիր մեկ-
նաձևերի կազմում գերակշռել են Ռուսաստանի Դաշնությու-
նում գտնվող միգրանտները, որոնց մոտ մեկ երրորդը եզդիներ
են, մեկ հինգերորդը՝ ռուսները, այնուհետև՝ ասորիներ, քրդեր
և ուկրաինացիներ: Որոշ մասը ԱՊՀ երկրներից մեկնել են
Ուկրաինա և Ղազախստան: Հետագոտվող ժամանակահատ-
վածում եզդիները և քրդերը գտնվել են նաև եվրոպական երկր-
ներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Իտա-
լիայում, իսկ հույները՝ Հունաստանում:

Ինչպես ՌԴ-ի, այնպես էլ այդ երկրների ընտրության պատ-
ճառների հարցում կարևորվել է այնտեղ բնակվող ընտանիքի
անդամների, ազգակիցների, բարեկամների, ծանոթների, ապա
նաև այնտեղ հեշտությամբ աշխատանք գտնելու հանգամանք-
ները: Միգրանտների գերակշռող մեծամասնությունն արտ-
երկիր մեկնել է այնտեղ գտնվող ազգակիցների սոցիալական
ցանցերի միջոցով, իսկ ինստիտուցիոնալ կառույցների մի-
ջոցով մեկնողները կազմել են շատ փոքր տոկոս:

Արտերկրում գտնվող միգրանտները հիմնականում ընդ-
գրկված են շինարարության, սպասարկման, առևտրի, այնու-
հետև արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտե-
սության ոլորտներում: Ռուս, ուկրաինացի, հույն միգրանտնե-
րի մի մասը, ունենալով բարձրագույն կրթություն և լինելով
բարձր որակավորում ունեցող մասնագետներ, արտերկրում

համապատասխան մասնագիտությամբ աշխատանք չգտնելու պատճառով կատարում են ցածր կամ միջին որակավորում պահանջող աշխատանքներ: Եզդիների և քրդերի գերակշիռ մասն աշխատում է շինարարության, սպասարկման և առևտրի ոլորտներում: Մինչև մեկնելը նրանց մեծ մասը գյուղական համայնքներում զբաղված է եղել անասնապահությամբ և հողագործությամբ: Կրասնոդարի և Ռոստովի մարզի գյուղական բնակավայրերում հաստատված ասորիները հիմնականում զբաղված են գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ քաղաքային բնակավայրերում՝ շինարարությամբ և առևտրով: Ինչ վերաբերում է նրանց կարգավիճակին, ապա գերակշիռ մեծամասնությունը արդեն արտերկրի քաղաքացիներ են և ձեռք են բերել բնակության, աշխատելու իրավունք: Երկար տարիներ ապրելով արտերկրում՝ այնուհանդերձ, նրանք իրենց կապը պահպանել են Հայաստանի հետ: Մեկնելուց հետո նրանց մոտ կեսը այցելել է Հայաստան՝ հարազատներին: Որպես հարազատներին այցելելու պատճառ՝ եզդիները և քրդերը նշել են արտերկրում մահացած հարազատներին հայրենի բնակավայրում հուղարկավորությունը, ննջեցյալների գերեզմանին այցելությունները, հիշատակի և հարսանեկան արարողություններին մասնակցությունը: Արտերկրում գտնվող այդ ազգային փոքրամասնությունների միգրանտների համար դրանք համարվել են նաև ազգային ինքնության պահպանման կարևոր միջոց: Հարազատների հուղարկավորությանը, ննջեցյալների գերեզմանոցներին այցելությունները, ինչպես նաև ազգային տոներին և մոտ հարազատների հարսանիքին մասնակցելու երևույթը տարածված են նաև արտերկրում բնակություն հաստատած հույների և ասորիների շրջանում: Հարազատների հետ կապի մյուս միջոցը Հայաստանում գտնվող

տաբեց ծնողներին և մոտ ազգակիցներին պարբերաբար ցուցաբերվող ֆինանսական օգնություններն են, ինչպես նաև համայնքի զարգացման համար երբեմն կատարվող բարեգործական ներդրումները:

Այլեթնիկ միջավայրում միգրանտների շրջանում տեղի ունեցող ազգային-մշակութային արժեքների տրանսֆորմացիան և նոր մշակութային տարրերի ձեռքբերումն առաջին հերթին վերաբերում են լեզվական վարքագծի փոփոխությանը և նոր լեզուների յուրացմանը: Այն դառնում է նրանց հաղորդակցման և սոցիալական շարժունության կարևոր միջոց: Տեղի դպրոցներում և բուհերում միգրանտների երեխաների սովորելու շնորհիվ նրանք ձևավորում են նոր մշակութային և կրթական կապիտալ, որը հետագայում կարող է ներդրվել ազգային համայնքների զարգացման գործում: Այդ գործընթացի շնորհիվ օտար երկրներում գտնվող եզդիների և քրդերի երրորդ սերնդի մեջ տեղի է ունենում կրթության նկատմամբ պահանջարկի բարձրացում: Լեզուների իմացության շնորհիվ յուրացնում են նոր արժեքներ, փոխվում են նրանց մշակութային-կենցաղային գծերը՝ նպաստելով ազգամիջյան շփումների ինտենսիվությանը: Այլեթնիկ միջավայրում միգրանտների մշակութային այդ փոփոխությունները միանշանակորեն չեն գնահատվել ազգային փոքրամասնությունների տարբեր սեռատարիքային և կրթական մակարդակ ունեցող խմբերի մոտ: Զգուշանալով ազգային դիմագիծը չկորցնելու վտանգից՝ ազգային-մշակութային արժեքների փոփոխության նկատմամբ հատկապես եզդիները և քրդերն ունեն պահպանողական վերաբերմունք: Նրանց գերակշռող մեծամասնությունը բացասաբար է վերաբերվել ոչ միայն Հայաստանի իրենց հայրենակիցների, այլև արտերկրում բնակվող միգ-

րանտների ազգամիջյան ամուսնություններին: Կրոնական պատկերացումներից բխող արգելքներն իրենց ազդեցությունն են թողել նաև ռուս հնաքնականների (մոլոկանների) միջեթնիկ ամուսնությունների վերաբերյալ դիրքորոշումների վրա: Արտերկրում հոծ բնակվող եզդիները, քրդերը և ասորիները, ձևավորելով իրենց ազգային, կրոնական, մշակութային համայնքները, ազգային ինքնության խնդիրները լուծելու նպատակով մոբիլիզացնում են նրանց ուժերը: Որպես նրանց ինքնության կարևոր ցուցիչ՝ ինստիտուցիոնալ այդ կառույցները օտար միջավայրում աջակցում են ազգային տոների և ծեսերի պահպանմանը և իրականացմանը: Դրանք մեծ շուքով են նշվում այդ համայնքներում, ինչպես նաև միգրանտների ընտանեկան, ազգակցական միջավայրում: Այդ միջոցառումներին երբեմն մասնակցում են նաև արտերկրում բնակվող հայերը և այլ ազգությունների ներկայացուցիչներ: Հայաստանում ձեռք բերված մշակութի և կենցաղի մի շարք ընդհանուր գծեր ազգային փոքրամասնությունների միգրանտները երբեմն իրենց հետ տեղափոխում են նաև այլ երկրներ: Օտար միջավայրում հատկապես եզդիները և քրդերը շարունակում են այն պահպանել, չեն փոխում իրենց հայկական ծագում ունեցող ազգանունները՝ այցելում են հայկական եկեղեցի, հայերի հետ նշում են Հայաստանի Հանրապետության մի շարք տոներ և հիշատակի օրեր, իրենց երեխաներին ուղարկում են հայկական կիրականօրյա դպրոցներ: Սա նշանակում է, որ արտերկրում գտնվող Հայաստանի ազգային փոքրամասնությունների միգրանտների մեջ դրսևորվում են բուն ազգային, հայկական և այլեթնիկ միջավայրում շփումների շնորհիվ ձևավորված մշակութային գծեր:

Հայաստանի նրանց հարազատների կարծիքով՝ միգրանտների գերակշիռ մեծամասնությունը Հայաստան չի վերադառնա, և միայն նրանց մոտ մեկ տասներորդն այդ հարցում ունի դրական կարծիք:

Ազգային փոքրամասնությունների աշխատանքային միգրացիան: Հայաստանից աշխատանքային միգրացիայում ընդգրկված է եզդիների և ասորիների մոտ մեկ հինգերորդը, ռուսների և քրդերի մոտ մեկ տասներորդը և շատ փոքր թվով հույներ: Գերակշռող մեծամասնությունն աշխատանքային միգրացիայի ոլորտում ունի մինչև հինգ և ավելի տարվա աշխատանքային փորձ: Նրանց մեկ երրորդից ավելին միգրացիայի է մեկնել ինքնուրույն, անհատական ձևով՝ դրսում գտնվող ընտանիքի անդամների, հարազատների անմիջական աջակցությամբ: Ազգային փոքրամասնությունների շրջանում լայն տարածում ունեն նաև ընտանիքի անդամներից, հարազատներից բաղկացած աշխատանքային խմբերը: Նրանցում աշխատանքային միգրացիան ունի «շրթայական արտագաղթի» էֆեկտ. ընտանիքի անդամներից կամ հարազատներից մեկը, հաստատվելով մուտքի երկրներում, հետագայում մշտական բնակության է կանչել նաև ընտանիքի մյուս անդամներին, հարազատներին: Միգրանտների համար առավել ձգող երկիր է համարվել Ռուսաստանի Դաշնությունը, որտեղ աշխատանքի է մեկնել նրանց գերակշռող մեծամասնությունը: ՌԴ-ում ձևավորված եզդիների, քրդերի, ասորիների մեծ համայնքները, որոնց մեծ մասը շինարարության, գյուղատնտեսության, առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղված են ակտիվ բիզնեսով, աշխատանք գտնելու հարցում աջակցում են իրենց հայրենակից միգրանտներին: Ըստ աշխատանքային միգրացիայի ուղղությունների՝ եզդիները և քրդերը հիմնական-

նում մեկնում են Նովոսիբիրսկ, Սվերդլովսկ, Սանկտ Պետերբուրգ, Կրասնոդար, Կեմերովո, ասորիները՝ Կրասնոդար, Ռոստով, ռուսները՝ Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասեր: Նրանց շուրջ կեսը որպես աշխատանքային միգրացիայի պատճառ համարել է տեղում աշխատանքի բացակայությունը, իսկ մոտ մեկ երրորդը՝ ընտանիքը «պահելու» համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինությունը: Հարցման մասնակիցներն իրենց պատասխաններում ազգային պատկանելությունը, հայոց լեզվին վատ տիրապետելը, տեղում աշխատանք գտնելու խոչընդոտը, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը չեն կարևորել որպես աշխատանքային միգրացիայի գործոն: Ըստ սոցիալ-մասնագիտական կազմի՝ եզդիների, քրդերի, ասորիների մեջ գերակշռել են ֆիզիկական աշխատանք կատարողները (շինարարներ, բանվորներ, մեխանիկատորներ, վարորդներ և այլն), իսկ ռուսների և հույների որոշ մասի մեջ՝ ծառայողներ և միջին որակավորում ունեցող մասնագետները: Ունենալով միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն՝ արտերկրում նրանց շատ քիչ մասն է կարողացել գտնել մասնագիտությամբ աշխատանք: Միգրանտներն այնտեղ ստիպված կատարել են ցածր որակավորում պահանջող աշխատանքներ, որը մարդկային զարգացման տեսանկյունից չի նպաստել նրանց որակավորման առաջընթացին և թողել է բացասական ազդեցություն: Մուտքի երկրներում բոլոր ազգային փոքրամասնությունների շրջանում տեղի է ունեցել զբաղվածության ոլորտների փոփոխություն. ավելացել է շինարարության, սպասարկման, առևտրի ոլորտի աշխատողների, ինչպես նաև ինքնազբաղվածների թիվը:

Մուտքի երկրներում նրանք վաստակել են շուրջ 3-4 անգամ ավել գումարներ, քան տեղում, որի պատճառով նրանց մի

մասն այն համարել է ընտանիքի եկամտի ձևավորման կարևոր աղբյուր: Այդ գումարները ազգային փոքրամասնությունները հիմնականում ուղղել են ընտանիքի առաջնային կարիքների բավարարմանը՝ կուտակված պարտքերի մարմանը, գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը: Եզդիները, ասորիները և հույները այդ գումարներով հոգացել են ընտանիքի անդամների կրթական և առողջապահական ծախսերը և այդ ներդրումների շնորհիվ նպաստել նրանց առողջության պահպանմանը և մարդկային կարողությունների զարգացմանը: Եզդիների և քրդերի ծախսերի կառուցվածքում կարևոր տեղ են գրավում նաև ամուսնական ծեսերի՝ հարսանիքի և օծիտի համար միջոցներ գնելը, բնակարան կառուցելու/գնելու կամ վերանորոգելու, ինչպես նաև ընտանիքի երկարատև օգտագործման ապրանքներ ձեռք բերելու շարժառիթները: Արտերկրում վաստակած այդ գումարները դեռևս նրանք չեն ներդնում համայնքում արտադրական միջոցների ձեռքբերման և սեփական գործ հիմնելու նպատակով:

Աշխատանքային միգրացիայի պատճառով ազգային փոքրամասնությունների ընտանիքների առջև ծառանում են մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Որպես այդպիսիք՝ հարցվածները նշել են միգրանտի բացակայության ընթացքում նրա և ընտանիքի անդամների միջև կարոտի, օտար միջավայրում միգրանտների անվտանգության և անպաշտպանվածության, առողջական վիճակի հանգամանքները, ոչ նորմալ սննդի և կենցաղային պայմանները: Մյուս կարևոր խնդիրը, որը առանձնացրել են հարցման մասնակիցները, իրենց շրջանում ամուսնալուծված, անկայուն, լքված ընտանիքների թվի աճը և շեղված վարքագծի դրսևորումներն են: Պատճառը բնակահարքար ընտանիքից միգրանտի երկարատև բացակայությունն է:

Աշխատանքային միգրացիայի հետևանքով աշխատանքային ակտիվ տարիքի բնակչության կողմից մշտական բնակավայրի փոփոխությունը լուրջ բացասական ժողովրդագրական ազդեցություն է թողել ազգային փոքրամասնությունների համայնքների սեռատարիքային կազմի, ընտանիքի կառուցվածքի և թվի վրա:

Առաջիկա երկու տարիների ընթացքում նրանց մոտ մեկ հինգերորդը ցանկություն է հայտնել տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել մուտքի երկրներում:

Հայաստանում նոր աշխատատեղերի ստեղծման և նյութական պայմանների բարելավման դեպքում հարցման մասնակիցների կարծիքով, գերակշռող մեծամասնությունը կդադարի մեկնել աշխատանքային միգրացիայի և կմնա տեղում:

МИГРАЦИЯ НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (этносоциологическое исследование)

ЗАКЛЮЧЕНИЕ

Многочисленные этнические группы и национальные меньшинства, на протяжении столетий проживающие в Армении, вносят свой самобытный вклад в социально-экономическое развитие республики, активно участвуют в ее культурной жизни и становлении государственности. В настоящее время в Армении проживают представители более 90 национальностей. Однако, после обретения Арменией независимости, начиная с 1990-х гг. межгосударственная миграция из республики, обусловленная экономическим кризисом, снижением жизненного уровня населения и высокими темпами безработицы, приняла массовый характер, что затронуло и национальные меньшинства. В период 1990-2000гг. численность выехавшего из Армении населения колебалась от 900 тыс. до 1 млн.чел. В 2002-2009гг. отрицательное сальдо миграции составило 57.5 тыс.чел., в 2010-2014гг. – 206.2 тыс. чел. Приведенные статистические данные включают также проживающие в Армении национальные меньшинства, среди которых в этот период также зафиксированы тенденции сокращения численности. Согласно данным переписи населения Армении 1989г. национальные меньшинства составляли 6.7%, переписи 2001г. – 2.11%, переписи 2011г. -1.8%. Почти за два десятилетия численность езидов сократилась на 16668, русских - на 40364, ассирийцев – на 3194, украинцев – на 7165, курдов – на 2632, греков - на 3750 чел. В целом численность указанных шести национальных меньшинств республики, являющихся объектом данного исследования, сократилась на 73773 чел.

Причины миграции национальных меньшинств в работе исследованы не только в социально-экономическом аспекте, но и с точ-

ки зрения межэтнических отношений населения Армении, сохранения национальной принадлежности и культурной идентичности. С этой целью были выбраны шесть национальных меньшинств: езиды, русские, курды, ассирийцы, греки и украинцы; основанием для их отбора послужили результаты переписи населения РА в 2001 и 2011 гг.

Одной из главных задач исследования стало выяснение, насколько действующее в Армении законодательство способствует сохранению языка, культуры и идентичности национальных меньшинств и является ли оно фактором, стимулирующим их миграцию из республики. Анализ законодательного поля, действующего в отношении национальных меньшинств, свидетельствует, что в соответствии с предусмотренным законом порядком они имеют в Армении все возможности для сохранения родного языка, развития, получения образования на родном языке и сохранения своей национальной культуры. РА присоединилась также к целому ряду международных Конвенций по правам человека. Руководители общественных организаций национальных меньшинств отметили два подхода в вопросе возможности сохранения и развития родного языка и культурной идентичности. Ряд руководителей езидских, курдских, ассирийских, греческих обществ, принявших участие в опросе, не считали вышеуказанные факторы главной причиной миграции. При этом, по мнению руководителей русских и украинских организаций, в условиях, когда вышеуказанные законы бездействуют или соблюдаются не полностью, общество сталкивается с целым рядом нерешенных проблем. По их мнению, вскоре после принятия в 1993 г. закона РА «О языке» русскоязычные жители, занимающие государственные должности и не владеющие литературным армянским языком, вынуждены были покинуть Армению.

До 1980-х гг., почти на протяжении 80 лет, у проживающих в Армении указанных национальных меньшинств наблюдался абсолютный прирост численности (за исключением греков). Между

тем, за двадцать лет независимости Армении картина в корне изменилась. Население республики, в том числе и национальные меньшинства, претерпели резкое понижение абсолютной численности.

Существенное влияние на это оказал также фактор миграции. В последние годы его отрицательное воздействие сказалось и на структуре половозрастного состава национальных меньшинств, в результате чего среди русских, греков и украинцев численность женщин вдвое-втрое превысила численность мужчин. По показателям рождаемости у национальных меньшинств наблюдаются две важные тенденции: в демографическом поведении езидов и курдов налицо относительно высокая рождаемость. Эта демографическая модель, на наш взгляд, связана с особенностями их традиционной общественной структуры, которая и обеспечивает относительно высокий уровень рождаемости. Другие национальные меньшинства характеризуются как «стареющие» общества, поскольку имеют низкий уровень рождаемости и их демографическое поведение со временем подверглось модернизационным процессам. Национальные меньшинства различаются по степени участия в урбанизационных процессах и территориальной мобильности. Подавляющее большинство езидов, курдов и ассирийцев - сельские жители, а русские, греки и украинцы - горожане. Это влияет на сферы их занятости, социально-профессиональный состав, образ жизни и особенности культуры.

Подавляющее большинство обследованных семей было вовлечено в миграционный процесс: в нем, исходя из национальной принадлежности, половину составляли езиды, примерно пятую часть - русские, одну десятую - ассирийцы, еще меньшую часть - греки, курды и украинцы. Число мигрантов в семьях езидов, греков и ассирийцев в среднем колебалось от 1,5-2 человек. Численность женщин-мигрантов превысила численность мужчин, однако это не означает, что коэффициент их миграционной активности выше, чем у мужчин. Это прежде всего обусловлено тем, что сна-

чала мигрируют мужчины, а со временем и женщины в целях объединения семьи.

Лица, выехавшие из республики на постоянное местожительство в другие страны, или трудовые мигранты – это люди активного трудоспособного и репродуктивного возраста. В контексте образования удельный вес подавляющего большинства мигрантов – это люди со средним образованием, за ними следуют лица с незаконченным средним и высшим образованием, затем имеющие начальное образование. Рассматривая образовательный уровень национальных меньшинств, отметим, что среди езидов и курдов довольно высокий процент составляют мигранты без образования или с начальным образованием. В связи с обычаем ранних браков это особенно касается девушек, поскольку в этих обществах их образование все еще не классифицируется как необходимая ценность. Наиболее высокий процент мигрантов с высшим образованием наблюдается среди украинцев, русских и греков.

Основная часть представителей национальных меньшинств выехала из республики в период с 1990 по 2000гг. По мнению опрошенных, более 80% из них (208 чел.) уже длительное время находятся за рубежом и выехали на постоянное местожительство, а примерно 20% (46чел.) отсутствовали в республике в течение года в связи с рабочей занятостью. Проблемы, связанные с двумя указанными группами мигрантов, в работе исследованы в отдельных разделах.

Мигранты, находящиеся за рубежом. Результаты исследования свидетельствуют, что причины миграции национальных меньшинств из Армении не связаны с проблемами сохранения национальной культуры, пользования родным языком, национальной принадлежностью и правами человека. По мнению опрошенных эти факторы не являлись для них причиной миграции; сторонники подобной точки зрения составили всего 1%. По мнению подавляющего большинства опрошенных основные причины миграции из Армении связаны с социально-экономическими факторами, в

частности с отсутствием работы. Подобное мнение составило высокий процент и среди армян, что является доказательством того, что между национальной принадлежностью и миграцией отсутствует прямая причинно-следственная связь. Десятая часть мигрантов выехала из республики в целях воссоединения семьи, значительная часть – из-за отсутствия перспектив развития республики, неустойчивой геополитической обстановки, для получения образования за рубежом. В результате проводящейся миграционной государственной политики в отношении национальных меньшинств миграция из Армении в 1990-1995гг. имела организованный характер. Особенно это касалось греков и русских. Государственная программа по оказанию содействия добровольному переселению в Российскую Федерацию соотечественников, проживающих за рубежом, принятые административные акты о миграции и содействие, оказанное посольством РФ в Армении, облегчили мигрантам проблемы их въезда в другие страны. В рамках этой программы вместе с ними из Армении мигрировали и те национально-смешанные семьи, в которых один из супругов являлся армянином.

Формирование у представителей национальных меньшинств миграционного поведения было также результатом их индивидуальных решений; в основном их мотивация связана со стремлением повышения жизненного уровня и материального благосостояния семьи. Для определенной части мигрантов важным фактором стало стремление жить на исторической родине. В среде езидов и курдов, имеющих сословную структуру общины и связанный с нею целый ряд традиций, широко распространена миграция в целях брака и создания семьи.

Данные картографического исследования стран въезда свидетельствуют, что подавляющее число мигрантов проживает в РФ, из них примерно треть – езиды, пятая часть – русские, за ними следуют ассирийцы, курды и украинцы. Некоторая часть мигрантов выехала из стран СНГ в Украину и Казахстан.

В исследуемый период ези́ды и курды находились также в ряде европейских стран: Франции, Германии, Голландии, Италии, а греки - в Греции. Среди причин выбора этих и других стран учитывались наличие там родственников, знакомых, а также сравнительно легкие возможности получения работы. Подавляющее большинство мигрантов выехали в зарубежные страны через социальную сеть родственников и только незначительный их процент - через институциональные структуры.

